

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում

▯B **ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ՝ փոխանցվող սպունգանման էնցեֆալոպաթիայի որոշ դեպքերի կանխարգելման, վերահսկման եւ ոչնչացման մասին կանոններ սահմանող՝ 2001 թվականի մայիսի 22-ի թիվ 999/2001**

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՀ)

(ՊՏ L 147, 31.05.2001թ., էջ1)

Փոփոխված՝

		Պաշտոնական տեղեկագիր		
		Թիվ	էջ	ամսաթիվ
M1	Հանձնաժողովի 2001 թվականի հունիսի 22-ի թիվ 1248/2001 կանոնակարգով (ԵՀ)	L 173	12	27.6 2001
M2	Հանձնաժողովի 2001 թվականի հունիսի 29-ի թիվ 1326/2001 կանոնակարգով (ԵՀ)	L 177	60	30.06. 2001թ.
M3	Հանձնաժողովի 2002 թվականի փետրվարի 14-ի թիվ 270/2002 կանոնակարգով (ԵՀ)	L 45	4	15.02. 2002թ.
M4	Հանձնաժողովի 2002 թվականի օգոստոսի 21-ի թիվ 1494/2002 կանոնակարգով (ԵՀ)	L 225	3	22.08. 2002թ.
▯M5	Հանձնաժողովի 2003 թվականի փետրվարի 12-ի թիվ 260/2003 կանոնակարգով (ԵՀ)	L 37	7	13.02. 2003թ.
M6	Հանձնաժողովի 2003 թվականի ապրիլի 10-ի թիվ 650/2003 կանոնակարգով (ԵՀ)	L 95	15	11.04 2003թ.
M7	Հանձնաժողովի 2003 թվականի հունիսի 19-ի	L 152	8	20.06. 2003թ.

թիվ 1053/2003 կանոնակարգով (ԵՀ)

M8	Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2003 թվականի հունիսի 16-ի թիվ 1128/2003 կանոնակարգով (ԵՀ)	L 160	1	28.06. 2003թ.
M9	Հանձնաժողովի 2003 թվականի հունիսի 27-ի թիվ 1139/2003 կանոնակարգով(ԵՀ)	L 160	22	28.06. 2003թ.
ՓM10	Հանձնաժողովի 2003 թվականի հուլիսի 10-ի թիվ 1234/2003 կանոնակարգով (ԵՀ)	L 173	6	11.07. 2003 թ.
M11	Հանձնաժողովի 2003 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1809/2003 կանոնակարգով (ԵՀ)	L 265	10	16.10. 2003թ.
ՓM12	Հանձնաժողովի 2003 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 1915/2003 կանոնակարգով (ԵՀ)	L 283	29	31.10. 2003թ.
ՓM13	Հանձնաժողովի 2003 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 2245/2003 կանոնակարգով (ԵՀ)	L 333	28	20.12. 2003թ.
ՓM14	Հանձնաժողովի 2004 թվականի ապրիլի 29-ի թիվ 876/2004 կանոնակարգով (ԵՀ)	L 162	52	30.04 2004թ.
M15	Հանձնաժողովի 2004 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1471/2004 կանոնակարգով (ԵՀ)	L 271	24	19.08. 2004թ.
ՓM16	Հանձնաժողովի 2004 թվականի օգոստոսի 23-ի թիվ 1492/2004 կանոնակարգով (ԵՀ)	L 274	3	24.08. 2004թ.
M17	Հանձնաժողովի 2004 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1993/2004 կանոնակարգով (ԵՀ)	L 344	12	20.11. 2004թ.
ՓM18	Հանձնաժողովի 2005 թվականի հունվարի 12-ի թիվ 36/2005 կանոնակարգով (ԵՀ)	L 10	9	13.01. 2005թ.
M19	Հանձնաժողովի 2005 թվականի փետրվարի 9-ի թիվ 214/2005 կանոնակարգով (ԵՀ)	L 37	9	10.02. 2005թ.

M20	Հանձնաժողովի 2005 թվականի փետրվարի 16-ի թիվ 260/2005 կանոնակարգով (ԵՀ)	L 46	31	17.02. 2005թ.
ՌM21	Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2005 թվականի հունիսի 8-ի թիվ 932/2005 կանոնակարգով (ԵՀ)	L 163	1	23.06. 2005թ.
ՌM22	Հանձնաժողովի 2005 թվականի օգոստոսի 5-ի թիվ 1292/2005 կանոնակարգով (ԵՀ)	L 205	3	06.08.2005թ.
ՌM23	Հանձնաժողովի 2005 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 1974/2005 կանոնակարգով (ԵՀ)	L 317	4	03.12.2005թ.
M24	Հանձնաժողովի 2006 թվականի փետրվարի 14-ի թիվ 253/2006 կանոնակարգով (ԵՀ)	L 44	9	15.02.2006թ.
M25	Հանձնաժողովի 2006 թվականի փետրվարի 24-ի թիվ 339/2006 կանոնակարգով (ԵՀ)	L 55	5	25.02.2006թ.
ՌM26	Հանձնաժողովի 2006 թվականի ապրիլի 10-ի թիվ 657/2006 կանոնակարգով (ԵՀ)	L 116	9	29.04.2006թ.
ՌM27	Հանձնաժողովի 2006 թվականի մայիսի 4-ի թիվ 688/2006 կանոնակարգով (ԵՀ)	L 120	10	05.05.2006թ.
M28	Հանձնաժողովի 2006 թվականի հուլիսի 7-ի թիվ 1041/2006 կանոնակարգով (ԵՀ)	L 187	10	08.07.2006թ.
ՌM29	Խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 1791/2006 կանոնակարգով (ԵՀ)	L 363	1	20.12.2006թ.
ՌM30	Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1923/2006 կանոնակարգով (ԵՀ)	L 404	1	30.12.2006թ.
ՌM31	Հանձնաժողովի 2007 թվականի հունիսի 25-ի թիվ 722/2007 կանոնակարգով (ԵՀ)	L 164	7	26.06.2007թ.

ՊՄ32	Հանձնաժողովի 2007 թվականի հունիսի 26-ի թիվ 727/2007 կանոնակարգով (ԵՀ)	L 165	8	27.06.2007թ.
ՊՄ33	Հանձնաժողովի 2007 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 1275/2007 կանոնակարգով (ԵՀ)	L 284	8	30.10.2007թ.
M34	Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 1428/2007 կանոնակարգով (ԵՀ)	L 317	61	05.12.2007թ.
M35	Հանձնաժողովի 2008 թվականի հունվարի 11-ի թիվ 21/2008 կանոնակարգով (ԵՀ)	L 9	3	12.01.2008 թ.
M36	Հանձնաժողովի 2008 թվականի ապրիլի 4-ի թիվ 315/2008 կանոնակարգով (ԵՀ)	L 94	3	05.04.2008թ.
ՊՄ37	Հանձնաժողովի 2008 թվականի ապրիլի 22-ի թիվ 357/2008 կանոնակարգով (ԵՀ)	L 111	3	23.04.2008թ.
ՊՄ38	Հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 19-ի թիվ 571/2008 կանոնակարգով (ԵՀ)	L 161	4	20.06.2008թ.
ՊՄ39	Հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 17-ի թիվ 746/2008 կանոնակարգով (ԵՀ)	L 202	11	31.07.2008թ.
ՊՄ40	Հանձնաժողովի 2008 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 956/2008 կանոնակարգով (ԵՀ)	L 260	8	30.09.2008թ.
ՊՄ41	Հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 3-ի թիվ 103/2009 կանոնակարգով (ԵՀ)	L 34	11	04.02.2009թ.
ՊՄ42	Հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 26-ի թիվ 162/2009 կանոնակարգով (ԵՀ)	L 55	11	27.02.2009թ.
ՊՄ43	Հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 26-ի թիվ 163/2009 կանոնակարգով (ԵՀ)	L 55	17	27.02.2009թ.
ՊՄ44	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009թվականի մարտի 11-ի թիվ 220/2009 (ԵՀ)	L 87	155	31.03.2009թ.

կանոնակարգով

M45	Հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 956/2010 կանոնակարգով (ԵՄ)	L 279	10	23.10.2010թ.
ՈՄ46	Հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1064/2012 կանոնակարգով (ԵՄ)	L 314	13	14.11.2012թ.

Փոփոխված՝

A1		L 236	33	23.09.2003թ.
----	--	-------	----	--------------

▼B

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ՝ փոխանցվող սպունգանման էնցեֆալոպաթիայի որոշ դեպքերի կանխարգելման, վերահսկման եւ ոչնչացման մասին կանոններ սահմանող՝ 2001 թվականի մայիսի 22-ի թիվ 999/2001 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՀ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,
հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ, մասնավորապես, վերջինիս 152 (4)(բ) հոդվածը,
հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),
հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (2),
խորհրդակցելով Տարածաշրջանների կոմիտեի հետ,
գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն (3),
Քանի որ

- 1) փոխանցվող սպունգանման էնցեֆալոպաթիայի որոշ կոնկրետ տեսակներ (ՓՍԷ-ներ) տարիներ շարունակ ճանաչվել են որպես մարդկանց եւ կենդանիների մոտ առանձին

հանդիպող հիվանդություններ: Խոշոր եղջերավոր կենդանիների սպունգանման էնցեֆալոպաթիան (ԽԵԱՍԷ) առաջին անգամ հայտնաբերվել է խոշոր եղջերավոր անասունների մոտ 1986 թվականին եւ հետագա տարիների ընթացքում հայտնաբերվել է կենդանիների այլ տեսակների մոտ: 1996 թվականին հայտնաբերվել է Կրեյցֆելդ-Յակոբի հիվանդության (ԿՅՀ) նոր տեսակ: ԽԵԱՍԷ հարուցիչի եւ Կրեյցֆելդ-Յակոբի հիվանդության նոր տեսակի միջեւ նմանության մասին շարունակվում են նոր ապացույցներ կուտակվել,

2) 1990 թվականից սկսած՝ Համայնքն ընդունել է մի շարք միջոցներ՝ ԽԵԱՍԷ-ի վտանգից մարդկանց եւ կենդանիների առողջությունը պաշտպանելու համար: Այդ միջոցները հենվում են կենդանիների առողջության պաշտպանության միջոցների մասին հրահանգների պաշտպանիչ դրոյթների վրա: Հաշվի առնելով որոշ ՓՍԷ-ների կողմից մարդու եւ կենդանիների առողջությանը հասցվող վտանգի մասշտաբները, անհրաժեշտ է ընդունել հատուկ կանոններ՝ դրանց կանխարգելման, վերահսկման ու վերացման համար,

3) սույն Կանոնակարգն անմիջականորեն վերաբերում է հանրային առողջապահությանը եւ կապված է ներքին շուկայի գործունեության հետ: Այն կարգավորում է Պայմանագրի I հավելվածում ընդգրկված եւ չընդգրկված ապրանքները: Հետեւաբար, հարկ է որպես իրավական հիմք ընդունել Պայմանագրի 152(4)(բ) հոդվածը,

4) Հանձնաժողովը ձեռք է բերել գիտական եզրակացություններ, մասնավորապես, Պլանավորման հարցերով գիտական խորհրդից եւ Հանրային առողջապահության առնչությամբ անասնաբուժական միջոցների հարցերով գիտական խորհրդից, ՓՍԷ-ների որոշ առանձնահատկությունների վերաբերյալ: Այդ եզրակացությունները ներառում են խորհրդատվություն վարակված կենդանական ծագում ունեցող ապրանքներից մարդկանց եւ կենդանիների համար պոտենցիալ ռիսկը նվազեցնելու միջոցների մասին,

5) այդ կանոնները պետք է կարգավորեն կենդանի կենդանիների եւ կենդանական ծագում ունեցող ապրանքների արտադրությունն ու շուկայահանումը: Այնուամենայնիվ, անհրաժեշտ չէ, որ դրանք կիրառվեն կոսմետիկական կամ բժշկական ապրանքների, բժշկական սարքերի կամ դրանց ելանյութերի կամ միջանկյալ արտադրանքի նկատմամբ, որոնց համար կիրառվում են այլ հատուկ կանոններ, մասնավորապես, հատուկ ռիսկայնության նյութերի կիրառության արգելքի մասին կանոնները: Դրանք չպետք է կիրառվեն նաեւ կենդանական ծագում ունեցող ապրանքների նկատմամբ, որոնք ռիսկային չեն կենդանիների եւ մարդու առողջության համար այն բանի հետեւանքով, որ նախատեսված են սննդամթերք, կեր կամ պարարտանյութ արտադրելուց բացի այլ նպատակներով: Անհրաժեշտ է ապահովել, որ սույն Կանոնակարգով չկարգավորվող կենդանական ծագում ունեցող ապրանքները դիտարկվեն սույն Կանոնակարգով կարգավորվող ապրանքներից առանձին, բացառությամբ, եթե դրանք բավարարում են առողջության առնվազն միեւնույն ստանդարտները, ինչպես սույն Կանոնակարգով կարգավորվող ապրանքները,

6) դրույթ պետք է սահմանվի այն մասին, որ Հանձնաժողովը պետք է ձեռնարկի պաշտպանիչ միջոցներ այն դեպքերում, երբ անդամ պետության իրավասու մարմինը կամ երրորդ երկիրը բավարար չափով չի լուծել ՓՍԷ-ի ռիսկայնության խնդիրը,

7) ընթացակարգ պետք է սահմանվի անդամ պետության, երրորդ երկրի եւ դրանց որեւէ տարածաշրջանի՝ (այսուհետ՝ երկրներ կամ տարածաշրջաններ) ԽԵԱՍԷ-ի հետ կապված համաճարակաբանական կարգավիճակը որոշելու համար՝ առկա տեղեկությունների հիման վրա հենվելով դեպքի վերարտադրման եւ մարդու վրա ազդեցության ռիսկայնության գործոնների վրա: Այն անդամ պետությունները եւ երրորդ երկրները, որոնք նախընտրում են չդիմել՝ իրենց կարգավիճակն ստանալու համար, պետք է Հանձնաժողովի կողմից դասակարգվեն որոշակի կատեգորիայում՝ Հանձնաժողովի համար հասանելի բոլոր տվյալների հիման վրա,

8) անդամ պետությունները պետք է կազմակերպեն ՓՍԷ-ների կանխարգելման եւ վերահսկման հարցերում ներգրավված անձանց, ինչպես նաեւ անասնաբույժների,

Ֆերմերների ու տեղափոխման, շուկայահանման եւ ֆերմային կենդանիների սպանդի գործով զբաղվող անձանց համար կրթական ծրագրեր,

▼M30

8ա) որոճողներին չպատկանող կենդանիներից ստացված՝ որոշ կենդանական ծագում ունեցող մշակված սպիտակուցներով նման կենդանիներին կերակրելը պետք է թույլատրվի, հաշվի առնելով տարբեր ցեղատեսակների կենդանիներին կողմնակի արտադրանքով կերակրելու արգելքը, ինչպես սահմանված է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ մարդու կողմից սպառման համար չնախատեսված՝ կենդանական ծագման օժանդակ արտադրանքի մասին առողջապահական կանոններ սահմանող՝ 2002 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1774/2002 կանոնակարգով (ԵՀ) (4) եւ, հաշվի առնելով վերահսկման կողմերը, որոնք մասնավորապես, կապված են որոշակի ցեղատեսակներին հատուկ՝ մշակման ենթարկված կենդանական սպիտակուցների տարբերակման հետ, ինչպես սահմանված է 2005 թվականի հուլիսի 15-ին Հանձնաժողովի կողմից ընդունված՝ ՓՍԷ ճանապարհային քարտեզի մասին հաղորդագրության մեջ:

▼B

9) անդամ պետությունները պետք է իրականացնեն ՓՍԷ-ի եւ քորուկի դիտանցման տարեկան ծրագիր ու պետք է տեղեկացնեն Հանձնաժողովին եւ մյուս անդամ պետություններին ծրագրի արդյունքների ու այլ ՓՍԷ-ների առաջացման մասին,

10) որոշ որոճողների հյուսվածքներ պետք է համարվեն հատուկ ռիսկայնության նյութեր՝ ՓՍԷ-ների պաթոգենեզի եւ տվյալ կենդանու ծագման կամ բնակության երկրի կամ տարածաշրջանի համաճարակաբանական կարգավիճակի հիման վրա: Հատուկ ռիսկայնության նյութերը պետք է հեռացվեն կամ ոչնչացվեն այնպես, որ մարդու կամ կենդանիների առողջությանը վտանգ չսպառնա: Մասնավորապես, այն չպետք է շուկայահանվի սննդամթերքի, կերի կամ պարարտանյութի արտադրության մեջ օգտագործման համար: Այնուամենայնիվ, դրույթ պետք է նախատեսվի առողջության պաշտպանության համարժեք մակարդակ սահմանելու համար ՓՍԷ-ի սկրինինգ փորձաստուգման միջոցով, որը պետք է իրականացվի առանձին կենդանիների վրա վալիդացվելուց անմիջապես հետո: Սպանդի այն մեթոդները, որոնք սպառնում են

ուղեղային նյութի միջոցով ախտահարել այլ հյուսվածքներ, պետք է արգելվեն երկրներում եւ տարածաշրջաններում, եթե դրանք ԽԵԱՍԷ-ի առումով ամենացածր ռիսկային պետությունները եւ տարածաշրջանները չեն,

11) միջոցներ պետք է ձեռնարկվեն ՓՍԷ-ների փոխանցումը մարդկանց կամ կենդանիներին կանխելու համար՝ արգելելով կենդանիների որոշ կատեգորիաների սպիտակուցներով այլ կատեգորիաների կենդանիներին կերակրելը եւ արգելելով սննդի մեջ որոճող կենդանիներից ստացվող որոշ ապրանքների կիրառությունը: Այդ արգելքները պետք է համամասնական լինեն ներկայացվող ռիսկին,

▼M30

11ա) 2004 թվականի հոկտեմբերի 28-ի իր որոշման մեջ (5) Եվրոպական պառլամենտը անհանգստություն արտահայտեց որոճող կենդանիներին կենդանական սպիտակուցով կերակրելու կապակցությամբ, քանի որ դրանք մեծահասակ անասունների բնական սննդակարգի մաս չեն կազմում: ՓՍԷ-ի ճգնաժամի եւ դաբաղի ճգնաժամի հետեւանքով լայնորեն ընդունվել է այն գաղափարը, որ մարդու եւ կենդանու առողջությունը լավագույնս ապահովելու համար կենդանիներին պետք է պահել ու խնամել այնպես, որ պահպանվեն յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունը: Նախագրուշական սկզբունքի համաձայն եւ որոճողների բնական սննդակարգն ու կացության պայմաններն ապահովելու համար, ուստի, անհրաժեշտ է պահպանել որոճողներին այնպիսի կենդանական սպիտակուցներով կերակրելու արգելքը, որը սովորաբար նրանց բնական սննդակարգի մաս չի կազմում,

11բ) մեխանիկական եղանակով առանձնացված միսն ստացվում է ոսկորներից բաժանելու միջոցով այնպես, որ մկանափայտաբանական կառուցվածքը ոչնչացվում կամ փոփոխության է ենթարկվում: Այն կարող է պարունակել ոսկորների մասեր եւ շրջոսկր (ոսկրի կաշի): Ուստի, մեխանիկական եղանակով առանձնացումից ստացված միսը սովորական միս չէ: Հետեւաբար, դրա կիրառությունը մարդու կողմից սպառման նպատակով պետք է վերանայվի,

▼B

12) որելէ կենդանու մոտ ՓՍԷ-ի առկայության կասկածի դեպքում պետք է ծանուցվի իրավասու մարմինն, որը պետք է անմիջապես համապատասխան բոլոր միջոցները ձեռնարկի, այդ թվում՝ կասկածվող կենդանու տեղաշարժը սահմանափակելու միջոցը՝ մինչեւ դրա հետազոտումը կամ պաշտոնական վերահսկողության ներքո սպանդը: Եթե իրավասու մարմինը չի կարողանում հերքել ՓՍԷ-ի առկայության հնարավորությունը, ապա այն պետք է անցկացնի համապատասխան հետազոտություններ եւ մտեղիքը պահի պաշտոնական հսկողության ներքո՝ մինչեւ կկատարվի ավտորոշում,

13) ՓՍԷ-ի առկայության պաշտոնական հաստատման դեպքում իրավասու մարմինը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, այդ թվում՝ իրականացնում է մտեղիքի ոչնչացում՝ կատարելով հետազոտում՝ բացահայտելու համար բոլոր ռիսկային կենդանիներին եւ սահմանափակելու համար նման կենդանիների ու կենդանական ծագում ունեցող ապրանքների տեղաշարժը: Սույն Կանոնակարգի համաձայն՝ կենդանիների եւ կենդանական ծագում ունեցող ապրանքների տերերին պետք է հնարավորինս շուտ փոխհատուցել՝ սույն Կանոնակարգի համաձայն, կենդանիների կորստի եւ ոչնչացված կենդանական ծագում ունեցող ապրանքների համար,

14) անդամ պետությունները պետք է կազմեն արտակարգ իրավիճակների ծրագիր՝ ԽԵԱՍԷ-ի բռնկման դեպքում ներպետական միջոցներ իրականացնելու համար: Այդ ծրագրերը պետք է հաստատվեն Հանձնաժողովի կողմից: Դրույթ պետք է նախատեսվի՝ այս դրույթը ԽԵԱՍԷ-ներից բացի այլ ՓՍԷ-ների վրա տարածելու համար,

15) պետք է դրույթ նախատեսվի՝ որոշ կենդանի կենդանիների եւ կենդանական ծագում ունեցող ապրանքների շուկայահանումը կարգավորելու համար: Խոշոր եղջերավոր կենդանիների բացահայտման եւ գրանցման մասին՝ համայնքի գործող կանոններով նախատեսվում է համակարգ, որը հնարավորություն է տալիս հայտնաբերել թե կենդանիներն որ էգից ու հոտից են առաջացել միջազգային ստանդարտներին համապատասխան: Երրորդ երկրներից ներկրված խոշոր եղջերավոր անասունների համար համարժեք երաշխիքներ պետք է ապահովվեն: Համայնքի կանոններով

կարգավորվող կենդանիները եւ կենդանական ծագում ունեցող ապրանքները, որոնց ներմուծում են միջհամայնքային առեւտուր կամ ներկրված են երրորդ երկրներից, պետք է ունենան նշված կանոններով պահանջվող վկայագրեր, որոնցում, սույն Կանոնակարգին համապատասխան, կատարվել են համապատասխան լրացումներ,

16) խոշոր եղջերավոր կենդանիներից ստացված կենդանական ծագում ունեցող որոշ ապրանքների շուկայահանումը բարձր ռիսկային գոտիներում պետք է արգելվի: Այնուամենայնիվ, այս արգելքը չպետք է կիրառվի վերահսկվող պայմանների ներքո արտադրված՝ կենդանական ծագում ունեցող ապրանքների նկատմամբ, որոնք ստացվել են այնպիսի կենդանիներից, որոնք հիմնավոր հիմքերով ՓՍԷ-ի վարակի բարձր ռիսկայնության վտանգ չեն ներկայացնում,

17) ապահովելու համար ՓՍԷ-ների կանխարգելման, վերահսկման եւ ոչնչացման կանոնների գործողությունը, անհրաժեշտ է լաբորատոր փորձաստուգման համար վերցնել նմուշներ՝ սահմանված արարողակարգի հիման վրա, որի միջոցով կնկարագրվի ՓՍԷ-ների վերաբերյալ ամբողջ համաճարակաբանական իրավիճակը: Միանման փորձաստուգման ընթացակարգեր եւ արդյունքներ ապահովելու համար պետք է հաստատվեն ներպետական եւ Համայնքի էտալոնային լաբորատորիաներ ու վստահելի գիտական մեթոդներ, այդ թվում՝ ՓՍԷ-ների մասով արագացված փորձաստուգումներ: Արագացված փորձաստուգումներ պետք է կիրառվեն հնարավորինս շուտ,

18) անդամ պետություններում պետք է համայնքային մակարդակով ստուգումներ իրականացնեն՝ ՓՍԷ-ների կանխարգելմանը, վերահսկմանը եւ ոչնչացմանը վերաբերող պահանջների միատեսակ իրականացում ապահովելու համար, ինչպես նաեւ պետք է դրույթ նախատեսվի՝ աուդիտորական ընթացակարգեր իրականացնելու համար: Ապահովելու համար այն, որ երրորդ երկրները տրամադրեն Համայնքի կողմից կիրառվող երաշխիքներին համարժեք երաշխիքներ, երբ նրանք Համայնք են ներկրում կենդանի կենդանիներ եւ կենդանական ծագում ունեցող ապրանքներ, տեղում պետք է իրականացվեն ստուգումներ եւ աուդիտորական ստուգումներ՝ համոզվելու համար, որ

արտահանող երրորդ երկիրը բավարարել է ներկրման առումով բոլոր պայմանները,

19) ՓՍԷ-ների հետ կապված առևտրային միջոցները պետք է հենվեն միջազգային ստանդարտների, ուղեցույցների կամ առաջարկների վրա, եթե այդպիսիք կան: Այնուամենայնիվ, կարող են ընդունվել առողջության պաշտպանության առավել բարձր մակարդակ ապահովող գիտականորեն հիմնավորված միջոցներ, եթե միջազգային ստանդարտների, ուղեցույցների կամ առաջարկների վրա հենված միջոցներն առողջության պաշտպանության համապատասխան մակարդակ չեն ապահովում,

20) սույն Կանոնակարգը պետք է գիտական նոր տեղեկություններ առաջ գալու հետ միասին, նորից քննվի,

21) սույն Կանոնակարգի շրջանակում պետք է տրամադրվեն անհրաժեշտ անցումային միջոցներ, մասնավորապես՝ հատուկ ռիսկայնության նյութերի օգտագործումը կանոնակարգելու նպատակով,

22) սույն Կանոնակարգի կիրարկման համար անհրաժեշտ միջոցները պետք է ընդունվեն Խորհրդի՝ Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման համար ընթացակարգ սահմանող՝ 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշման համաձայն, (6).

23) սույն Կանոնակարգն իրագործելու համար պետք է սահմանվի ընթացակարգ, որի միջոցով Հանձնաժողովի եւ անդամ պետությունների միջեւ սերտ ու արդյունավետ համագործակցություն կհաստատվի Անասնաբուժության հարցերով մշտական կոմիտեի, Կերային նյութերի հարցերով մշտական կոմիտեի ու Սննդամթերքի հարցերով մշտական կոմիտեի շրջանակում,

24) քանի որ սույն Կանոնակարգի կիրարկման դրույթներն ընդհանուր միջոցներ են՝

1999/468/ԵՀ որոշման 2-րդ հոդվածի իմաստով, ուստի դրանք պետք է ընդունվեն՝ այդ որոշման 5-րդ հոդվածով սահմանված կարգավորիչ ընթացակարգին համապատասխան,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Գործողության շրջանակը

1. Սույն Կանոնակարգով սահմանվում են կանոններ՝ կենդանիներին փոխանցվող սպունգանման էնցեֆալոպաթիայի (ՓՍԷ-ներ) կանխարգելման, վերահսկման եւ վերացման մասին: Այն կարգավորում է կենդանի կենդանիների եւ կենդանական ծագում ունեցող ապրանքների արտադրությունն ու շուկայահանումը, իսկ հատուկ դեպքերում՝ դրանց արտահանումը:

2. Սույն Կանոնակարգը չի կարգավորում՝

- ա) կոսմետիկական կամ բժշկական ապրանքները կամ բժշկական սարքերը, կամ դրանց ելանյութերը կամ միջանկյալ արտադրանքը.
- բ) ապրանքներ, որոնք նախատեսված չեն մարդու կողմից որպես սննդամթերք օգտագործման, որպես կենդանական կեր օգտագործման կամ որպես պարարտանյութ օգտագործման համար, կամ որպես դրանց ելանյութեր կամ միջանկյալ արտադրանք.
- գ) կենդանական ծագում ունեցող ապրանքներ, որոնք նախատեսված են ցուցահանդեսների, դասավանդման. գիտական ուսումնասիրությունների, հատուկ ուսումնասիրությունների կամ վերլուծությունների համար՝ պայմանով, որ այդ ապրանքների վերջնական սպառողը կամ օգտագործողը մարդիկ կամ կենդանիները չեն՝ բացառությամբ այն ապրանքների, որոնք չեն օգտագործվում համապատասխան հետազոտական ծրագրերում.
- դ) հետազոտական նպատակով օգտագործվող կամ դրա համար նախատեսված կենդանի կենդանիները:

Հոդված 2

Կենդանի կենդանիների եւ կենդանական ծագում ունեցող ապրանքների առանձնացումը

1(1) հոդվածում նշված կենդանի կենդանիների կամ կենդանական ծագում ունեցող ապրանքների եւ 1(2)(ա), (բ) ու (գ) հոդվածում նշված՝ կենդանական ծագում ունեցող ապրանքների կամ 1(2)(դ) հոդվածում նշված կենդանի կենդանիների միջեւ խաչաձեւ ախտահարումից կամ իրար փոխարինելուց խուսափելու համար դրանք պետք է առանձին պահել բոլոր դեպքերում, բացառությամբ, եթե նման կենդանի կենդանիները բուծվել կամ կենդանական ծագում ունեցող ապրանքներն արտադրվել են ՓՄԷ-ների առումով առողջության պաշտպանության առնվազն միեւնույն պայմաններում:

Սույն հոդվածի կիրարկման համար անհրաժեշտ կանոններն ընդունվում են 24(2) հոդվածում նշված ընթացակարգի համաձայն:

Հոդված 3

Սահմանումները

1. Սույն Կանոնակարգի նպատակներով կիրառվում են հետեւյալ սահմանումները՝

- ա) ՓՄԷ-ներ՝ փոխանցվող սպունգանման էնցեֆալոպաթիայի բոլոր դեպքերը՝ բացառությամբ մարդկանց մոտ հանդիպող ՓՄԷ-ների.
- բ) շուկայահանում՝ ցանկացած գործողություն, որի նպատակը Համայնքի ներսում որեւէ երրորդ կողմին վաճառելը կամ նման երրորդ կողմին վճարի դիմաց կամ անվճար մատակարարելը կամ նրան մատակարարելու նպատակով սույն Կանոնակարգով կարգավորվող կենդանի կենդանիներ կամ կենդանական ծագում ունեցող ապրանքներ պահեստավորելն է.
- գ) կենդանական ծագում ունեցող ապրանքներ՝ 89/662/ԵՏՀ հրահանգի (7) կամ 90/425/ԵՏՀ (8); հրահանգի դրոյթներով կարգավորվող ցանկացած կենդանուց ստացված կամ նման կենդանուց ստացված ապրանք պարունակող ցանկացած ապրանք.
- դ) ելանյութեր՝ կենդանական ծագում ունեցող հումք կամ որեւէ այլ ապրանք, որից կամ որի միջոցով արտադրվում են 1(2)(ա) եւ (բ) հոդվածում նշված ապրանքները.
- ե) իրավասու մարմին՝ անդամ պետության կենտրոնական մարմին, որն իրավասու է սույն Կանոնակարգի պահանջների հետ համապատասխանությունն ապահովելու համար, կամ որեւէ

այլ մարմին, որին կենտրոնական մարմինը պատվիրակել է այդ իրավասությունը, մասնավորապես՝ կերային նյութերի վերահսկման դեպքում. հարկ եղած դեպքում՝ իրավասու մարմին է համարվում նաեւ երրորդ երկրի համապատասխան մարմինը.

- զ) կատեգորիա՝ II հավելվածի Գ գլխում նշված դասակարգման կատեգորիաներից որեւէ մեկը.
- է) հատուկ ռիսկայնության նյութ՝ V հավելվածում սահմանված հյուսվածքները. եթե այլ բան նշված չէ, հատուկ ռիսկայնության նյութ չեն համարվում այդ հյուսվածքները պարունակող կամ դրանցից ստացված ապրանքները.
- ը) կենդանի, որը ենթադրաբար ՓՍԷ վարակակիր է՝ կենդանի, սպանդի ենթարկված կամ սատկած կենդանիներ, որոնց մոտ նկատվել է նյարդաբանական կամ վարքագծային շեղումներ կամ կենտրոնական նյարդային համակարգի շեղումների հետ կապված ընդհանուր վիճակի աճող վատթարացում եւ որի համար կլինիկական հետազոտության հիման վրա հավաքված տեղեկությունները, բուժման ռեակցիան, հետսպանդային զննումները կամ նախասպանդային կամ հետսպանդային լաբորատոր անալիզները թույլ չեն տալիս տալ մեկ այլ ախտորոշում: Խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպաթիա (ԽԵԱՍԷ) կասկածվում է այն խոշոր եղջերավոր անասունների մոտ, որոնց հատուկ ԽԵԱՍԷ-ի առումով կատարված արագացված փորձաստուգման արդյունքները դրական են.
- թ) անասնանոց՝ ցանկացած վայր, որտեղ սույն Կանոնակարգով կարգավորվող կենդանիները մնում, պահվում, բուծվում, խնամվում կամ ցուցադրվում են հանրությանը.
- ժ) նմուշառում՝ կենդանիներից կամ նրանց միջավայրից, կամ կենդանական ծագում ունեցող ապրանքներից վիճակագրական տեսակետից ճիշտ ներկայացուցչություն ապահովելով նմուշներ վերցնելը՝ նպատակ ունենալով կատարելու հիվանդության ախտորոշում, հաստատելու ցեղակցության աստիճանը, կատարելու առողջական վիճակի զննում կամ դիտանցելու միկրոկենսաբանական նյութերի կամ այլ նյութերի բացակայությունը կենդանական ծագում ունեցող ապրանքների մեջ.
- ժա) պարարտանյութեր՝ կենդանական ծագում ունեցող ապրանքներ պարունակող ցանկացած նյութ, որն օգտագործվում է հողի վրա բուսականության աճը խթանելու համար. այն կարող է ներառել բիոգազի արտադրությունից կամ կոմպոստից մարսողության մնացորդներ.

▼M30

- ժբ) արագացված փորձաստուգումներ՝ X հավելվածում նշված սկրինինգ մեթոդներ, որոնց դեպքում արդյունքները հայտնի են դառնում 24 ժամվա ընթացքում.

▼B

ժգ) այլընտրանքային փորձաստուգումներ՝ 8(2) հոդվածում նշված փորձաստուգումներ, որոնք օգտագործվում են որպես հատուկ ռիսկայնության նյութերի փորձաստուգմանը փոխարինող այլընտրանք.

▼M30

ժդ) ոսկորից մեխանիկական եղանակով առանձնացված միս կամ «ՄՄՄ»՝ մսաթափումից հետո մեխանիկական միջոցների օգտագործմամբ ոսկորներից մսի առանձնացումից ստացված մթերք, որի հետեւանքով կորսվում կամ ձեւափոխվում է մսի մկանաթելերի կառուցվածքը.

ժե) պասիվ վերահսկողություն՝ ենթադրաբար ՓՍԷ վարակակիր բոլոր կենդանիների մասին զեկուցում, իսկ եթե կլինիկական հետազոտությունը չի բացառում ՓՍԷ-ի առկայությունը, ապա նման կենդանիների լաբորատոր փորձաստուգումը.

ժզ) ակտիվ վերահսկողություն՝ ենթադրաբար ՓՍԷ վարակակիր չհամարվող կենդանիների փորձաստուգում, ինչպես օրինակ՝ հապշտապ պայմաններում սպանդի ենթարկված կենդանիների, նախասպանդային զննման արդյունքներ գրանցած կենդանիների, սատկած անասունների, սպանդի ենթարկված առողջ կենդանիների եւ ՓՍԷ-ի առնչությամբ խոտան հանված կենդանիների փորձաստուգում, մասնավորապես, որպեսզի որոշվի երկրում կամ տարածաշրջանում ՓՍԷ-ի էվոլյուցիան եւ տարածվածության մակարդակը:

▼B

2. Կիրառելի են նաեւ I հավելվածում սահմանված հատուկ սահմանումները:

3. Եթե սույն Կանոնակարգի որեւէ եզրույթ սահմանված չէ I հավելվածի 1-ին պարբերությունում, ապա կիրառվում են թիվ 1760/2000 կանոնակարգի (ԵՀ) (9) 64/432/ԵՏՀ (10), 89/662/ԵՏՀ, 90/425/ԵՏՀ եւ 91/68/ԵՏՀ հրահանգների (11) համապատասխան սահմանումները, եթե տեքստում այդ սահմանումներին հղում է կատարվում:

Հոդված 4

Պաշտպանիչ միջոցները

1. Պաշտպանիչ միջոցների կիրարկման առումով կիրառվում են 89/662/ԵՏՀ հրահանգի 9-րդ հոդվածում, 90/425/ԵՏՀ հրահանգի 10-րդ հոդվածում, 91/496/ԵՏՀ հրահանգի 18-րդ հոդվածում (12) եւ 97/78/ԵՀ հրահանգի 22-րդ հոդվածում (13) սահմանված սկզբունքներն ու դրույթները:

2. Պաշտպանիչ միջոցները պետք է ընդունվեն 24(2) հոդվածում նշված ընթացակարգի համաձայն եւ միեւնույն ժամանակ պետք է ծանուցվեն Եվրոպական պառլամենտին՝ դրանց պատճառների մասին նշումով:

ԳԼՈՒԽ II

ԽԵԱՍԷ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հոդված 5

Դասակարգումը

▼M30

1. Անդամ պետությունների կամ երրորդ երկրների կամ դրանց տարածաշրջանների (այսուհետ՝ «երկրներ կամ տարածաշրջաններ») ԽԵԱՍԷ կարգավիճակը որոշվում է հետեւյալ երեք կատեգորիաներից որեւէ մեկում դասակարգման միջոցով՝

- ԽԵԱՍԷ-ի աննշան ռիսկ, ինչպես սահմանված է II հավելվածում.
- ԽԵԱՍԷ-ի վերահսկվող ռիսկ, ինչպես սահմանված է II հավելվածում.
- ԽԵԱՍԷ-ի չսահմանված ռիսկ, ինչպես սահմանված է II հավելվածում:

Երկրների կամ տարածաշրջանների ԽԵԱՍԷ կարգավիճակը կարող է որոշվել միայն II հավելվածի Ա գլխում սահմանված չափորոշիչների հիման վրա: Այդ չափորոշիչները որոշվում են խոշոր եղջերավոր կենդանիների մոտ սպունգանման էնցեֆալոպաթիայի առաջացման բոլոր պոտենցիալ գործոնների հիման վրա կատարվող ռիսկի գնահատման արդյունքներով, ինչպես սահմանված է II հավելվածի Բ գլխում, եւ ժամանակի ընթացքում

դրանց զարգացմամբ, ինչպես նաև համապարփակ ակտիվ ու պասիվ վերահսկողական միջոցներով, որոնց դեպքում հաշվի է առնվում երկրի կամ տարածաշրջանի ռիսկի կատեգորիան:

Անդամ պետությունները եւ այն երրորդ երկրները, որոնք ցանկանում են մնալ սույն Կանոնակարգով կարգավորվող կենդանի կենդանիների կամ կենդանական ծագում ունեցող ապրանքները Համայնք արտահանելու համար հաստատված երրորդ երկրների ցանկում, պետք է Հանձնաժողով ներկայացնեն ԽԵԱՍԷ-ի կարգավիճակ ստանալու դիմում, որին կից պետք է ներկայացվի II հավելվածի Ա գլխում սահմանված չափորոշիչների եւ II հավելվածի Բ գլխում սահմանված պոտենցիալ ռիսկի գործոնների, ինչպես նաև ժամանակի ընթացքում դրանց զարգացման մասին համապատասխան տեղեկություններ:

▼B

2. Դիմում ներկայացրած անդամ պետությունը կամ երրորդ երկիրը կամ դրանց տարածաշրջանը II հավելվածի Գ գլխում սահմանված կատեգորիաներից մեկում դասակարգելու մասին որոշում պետք է ընդունվի՝ հաշվի առնելով 1-ին պարբերությունում սահմանված չափորոշիչները եւ պոտենցիալ ռիսկի գործոնները՝ 24(2) հոդվածում նշված ընթացակարգի համաձայն:

Այդ որոշումը պետք է ընդունվի դիմումը եւ 1-ին պարբերության երկրորդ ենթապարբերության մեջ նշված համապատասխան տեղեկությունները ներկայացնելուց հետո վեց ամսվա ընթացքում: Եթե Հանձնաժողովը կարծում է, որ օժանդակ փաստերը չեն պարունակում II հավելվածի Ա եւ Բ գլուխներում սահմանված տեղեկությունները, ապա այն պետք է պահանջի սահմանված ժամանակահատվածում լրացուցիչ տեղեկությունների տրամադրում : Վերջնական որոշումն ընդունվում է բոլոր տեղեկություններն ուղարկելուց հետո վեց ամսվա ընթացքում:

Էպիզոտիա հիվանդության միջազգային գրասենյակի (ԷՀՄԳ) կողմից երկրներն ըստ կատեգորիաների դասակարգելու ընթացակարգ սահմանելուց հետո, եւ եթե այն դասակարգել է դիմող երկիրը այդ կատեգորիաներից որեւէ մեկում, ապա համապատասխան երկրի դասակարգման կրկին գնահատումը՝ ըստ Համայնքի դասակարգման, սույն պարբերության առաջին ենթապարբերության համաձայն, հարկ եղած դեպքում, պետք է որոշվի 24(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:

3. Եթե Հանձնաժողովը կարծում է, որ անդամ պետության կամ երրորդ երկրի կողմից II հավելվածի Ա եւ Բ գլուխների համաձայն ներկայացված տեղեկությունը լիարժեք կամ հստակ չէ, ապա այն կարող է, 24(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան, որոշել համապատասխան անդամ պետության կամ երրորդ երկրի ԽԵԱՍԷ կարգավիճակը ռիսկի համապարփակ գնահատման հիման վրա:

Ռիսկի նման գնահատումը պետք է ներառի ԽԵԱՍԷ-ի վերաբերյալ դիմող անդամ պետության կամ երրորդ երկրի համաճարակաբանական իրավիճակի վիճակագրական հետազոտություն՝ սկրինինգի ընթացակարգով անցկացված արագացված փորձաստուգման իրականացման հիման վրա: Հանձնաժողովը հաշվի է առնում ԷՀՄԳ-ի կողմից օգտագործված դասակարգման չափորոշիչները:

▼M44

Այդ նպատակով արագացված փորձաստուգումները պետք է հաստատվեն 24(3) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան եւ պետք է ներառվեն X հավելվածի Գ գլխի 4-րդ կետում սահմանված ցանկում:

▼B

Սկրինինգի նման ընթացակարգ կարող է նաեւ օգտագործվել անդամ պետությունների կամ երրորդ երկրների կողմից, որոնք ցանկանում են, որ Հանձնաժողովը հաստատի այդ հիմքով իրականացված դասակարգումը՝ 24(2) հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

Նման սկրինինգի ընթացակարգ իրականացնելու ծախսերը կրում է համապատասխան անդամ պետությունը կամ երրորդ երկիրը:

▼M30

4.1-ին պարբերության երրորդ ենթապարբերության համաձայն՝ կենդանի կենդանիների եւ կենդանական ծագում ունեցող ապրանքների առաքման հարցով դիմում չներկայացրած անդամ պետությունները եւ երրորդ երկրները պահպանում են ԽԵԱՍԷ-ի չսահմանված ռիսկի երկրների համար կիրառելի ներկրման պահանջները, մինչեւ նրանք նման դիմում կներկայացնեն եւ ԽԵԱՍԷ-ի կարգավիճակի մասով նրանց համար կընդունվի վերջնական որոշում:

▼B

5. Անդամ պետությունները հնարավորինս շուտ ծանուցում են Հանձնաժողովին համաճարակաբանական ցանկացած փաստի կամ այլ տեղեկության մասին, որը կարող է փոխել ԽԵԱՍԷ կարգավիճակը, մասնավորապես, ծանուցում են 6-րդ հոդվածում սահմանված՝ դիտանցման ծրագրերի արդյունքների մասին:

6. Համայնք կենդանի կենդանիներ եւ կենդանական ծագում ունեցող ապրանքներ արտահանելու թույլտվության նպատակով Համայնքի կանոններով սահմանված ցուցակներում երրորդ երկրին պահելու հարցը, որի համար սույն Կանոնակարգով սահմանվում են հատուկ կանոններ, որոշվում է 24(2) հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն եւ, առկա տեղեկությունների լույսի ներքո կամ այն դեպքերում, երբ ենթադրվում է, որ առկա է ՓՍԷ, հաշվի առնելով 1-ին պարբերության համաձայն տրամադրված տեղեկությունները: Հանձնաժողովի պահանջած ամսաթվից երեք ամսվա ընթացքում նշված տեղեկությունները տրամադրելուց հրաժարվելու դեպքում սույն հոդվածի 4-րդ պարբերության դրույթները կիրառվում են մինչեւ այդ տեղեկությունները ներկայացնելը եւ դրանց գնահատումը՝ 2-րդ կամ 3-րդ պարբերությունների համաձայն:

Համայնքից կենդանի կենդանիներ կամ կենդանական ծագում ունեցող ապրանքներ արտահանելու՝ երրորդ երկրի իրավունքը, որի համար սույն Կանոնակարգով սահմանվում են հատուկ կանոններ, Հանձնաժողովի կողմից սահմանված կատեգորիայի հատուկ պայմանների համաձայն, պայմանավորված է ցանկացած համաճարակաբանական կամ այլ փաստեր՝ Հանձնաժողովին գրավոր ծանուցելու նրանց պարտավորությունից, որը կարող է փոխել ԽԵԱՍԷ կարգավիճակը:

7. 24(2) հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն՝ կարող է որոշում ընդունվել անդամ պետության կամ երրորդ երկրի կամ դրանց տարածաշրջաններից մեկի՝ ՓՍԷ-ի կարգավիճակը փոխելու հարցով՝ առաջնորդվելով 21-րդ հոդվածում սահմանված ստուգումների արդյունքներով:

8. 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ եւ 7-րդ պարբերություններում նշված որոշումները հիմնվում են ռիսկի գնահատման վրա՝ հաշվի առնելով առաջարկվող չափորոշիչները, որոնք սահմանված են II հավելվածի Ա եւ Բ գլուխներում:

ԳԼՈՒԽ III

ՓՍԷ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ

Հոդված 6

Դիտանցման համակարգը

▼M30

1. Յուրաքանչյուր անդամ պետություն իրականացնում է ՓՍԷ-ի դիտանցման տարեկան ծրագիր՝ III հավելվածի համաձայն ակտիվ եւ պասիվ վերահսկողությունների հիման վրա: Եթե դիտանցման ծրագիրը կիրառվում է կենդանիների տարբեր տեսակների համար, ապա այն պետք է ներառի արագացված փորձաստուգումների օգտագործմամբ սկրինինգ ընթացակարգ:

Այդ նպատակով արագացված փորձաստուգումները պետք է հաստատվեն 24(3) հոդվածում եւ X հավելվածում նշված ընթացակարգի համաձայն:

▼M30

1ա. 1-ին պարբերության մեջ նշված դիտանցման տարեկան ծրագիրը ներառում է առնվազն հետևյալ ենթապոպուլյացիաները՝

- ա) խոշոր եղջերավոր բուլր անասունները, որոնք 24 ամսականից մեծ են եւ ուղարկվել են հապշտապ պայմաններում սպանդի համար կամ որոնց համար նախասպանդային զննման դիտարկումներ են անցկացվում.
- բ) խոշոր եղջերավոր բուլր անասունները, որոնք 30 ամսականից մեծ են եւ սպանդի են ենթարկվել նորմալ պայմաններում՝ մարդու կողմից սպառման նպատակով.
- գ) 24 ամսականից մեծ եւ մարդու կողմից սպառման նպատակով սպանդի չենթարկված խոշոր եղջերավոր բուլր անասունները, որոնք սատկել կամ որոնց սպանել են ֆերմայում, տեղափոխման ընթացքում կամ սպանդանոցում (սատկած անասուններ):

Անդամ պետությունները կարող են որոշել շեղում կատարել (գ) կետի գործողությունից ծայրամասային տարածքներում, որտեղ շատ անասուններ չկան եւ սատկած կենդանիներին չեն հավաքում: Այս հնարավորությունից օգտվող անդամ պետությունները տեղեկացնում են Հանձնաժողովին եւ ներկայացնում են համապատասխան տարածքների ցուցակ՝

հիմնավորելով շեղումը: Այս շեղման գործողությունը չի տարածվում անդամ պետության խոշոր եղջերավոր անասունների պոպուլյացիայի 10%-ից ավելի անասունների վրա:

1բ. Համապատասխան գիտական կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո 1ա(ա) եւ (գ) պարբերություններում սահմանված տարիքային սահմանափակումը կարող է փոփոխվել գիտական առաջընթացին համապատասխան՝ 24(3) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:

Անդամ պետության խնդրանքով, որը կարող է 24(3) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան սահմանված որոշ չափորոշիչների համաձայն ապացուցել, որ համաճարակաբանական իրավիճակը երկրում բարելավվել է, դիտանցման տարեկան ծրագիրը տվյալ պետության համար կարող է վերանայվել:

Համապատասխան անդամ պետությունն ապացույց է ներկայացնում կիրառվող միջոցների արդյունավետությունը սահմանելու իր կարողության մասին՝ ռիսկի համապարփակ վերլուծության հիման վրա մարդկանց եւ կենդանիների առողջությունն ապահովելու համար: Մասնավորապես, անդամ պետությունները պետք է ցույց տան՝

- ա) հստակ անկում ապրող կամ կայուն կերպով ցածր ՓՍԷ-ի տարածվածության մակարդակ՝ թարմացվող փորձաստուգման արդյունքների հիման վրա.
- բ) որ իրենք իրականացրել եւ կիրարկել են ՓՍԷ-ի համապարփակ փորձաստուգման ծրագիր առնվազն վեց տարի ժամանակահատվածում (կենդանի կենդանիների հետազոտչության եւ ճանաչման, ինչպես նաեւ ՓՍԷ-ի վերահսկողության մասին Համայնքի օրենսդրություն).
- գ) որ այն իրականացրել եւ կիրարկել է կենդանական սպիտակուցներով ֆերմային կենդանիներին կերակրելու արգելքի մասին Համայնքի օրենսդրությունը:

▼B

2. Յուրաքանչյուր անդամ պետություն Անասնաբուժության գծով մշտական կոմիտեի շրջանակում տեղեկացնում է Հանձնաժողովին եւ մյուս անդամ պետություններին ՓՍԷ-ների առաջացման մասին, որը ԽԵԱՍԷ չէ:

3. Պաշտոնական բոլոր հետազոտությունները եւ լաբորատոր ուսումնասիրություններն արձանագրվում են III հավելվածի Բ գլխի համաձայն:

4. Անդամ պետությունները տարեկան հաշվետվություն են ներկայացնում Հանձնաժողովին, որը պետք է պարունակի առնվազն III հավելվածի Բ գլխի I մասում նշված

տեղեկությունները: Յուրաքանչյուր օրացուցային տարվա համար հաշվետվությունը ներկայացվում է ամենաուշը մինչև հաջորդ տարվա մարտի 31-ը: Հանձնաժողովն Անասնաբուժության գծով մշտական կոմիտեին է ներկայացնում ազգային հաշվետվությունների ամփոփագիրը, որը պարունակում է առնվազն III հավելվածի, Բ գլխի, II մասում նշված տեղեկությունները՝ նշված հաշվետվություններն ստանալուց առնվազն երեք ամսվա ընթացքում:

▼M30

5. Սույն հոդվածի կիրարկման համար անհրաժեշտ կանոններն ընդունվում են 24(2) հոդվածում նշված ընթացակարգի համաձայն:

Հոդված 6ա

Տեսակի վերարտադրման ծրագրերը

1. Անդամ պետությունները կարող են ներմուծել տեսակի վերարտադրման ծրագրեր, որոնց միջոցով ընտրվում են ոչխարների պոպուլյացիայում ՓՍԷ-ի դիմադրողականության համար բարենպաստ ծրագրեր: Այդ ծրագրերը կատարվում են անասունների որոշ հոտերի՝ ՓՍԷ-ի նկատմամբ կայուն կարգավիճակ հաստատող օրենսդրական դաշտի շրջանակում եւ կարող են ընդլայնվել, ընդգրկելով կենդանիների այլ տեսակներ՝ հենվելով այդ տեսակներին հատուկ գենոտիպերի՝ ՓՍԷ-ի նկատմամբ դիմակայունություն հաստատող գիտական փաստերի վրա:

2. Սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ սահմանված ծրագրերի իրականացման համար հատուկ կանոններն ընդունվում են 24(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:

3. Տեսակի վերարտադրման ծրագրեր ներմուծող անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում պարբերական հաշվետվություններ, որպեսզի այդ ծրագրերը գիտական տեսանկյունից գնահատվեն, մասնավորապես՝ ՓՍԷ-ների դեպքերի, բայց նաեւ գենետիկ բազմազանության եւ փոփոխականության ու հին եւ հազվագյուտ ոչխարների սորտերի կամ որոշակի տարածաշրջանին լավ հարմարեցված սորտերի վրա ազդեցությունների առումով: Գիտական տվյալները եւ տեսակի վերարտադրության ծրագրերի ընդհանուր հետեւանքները կանոնավոր գնահատվում են եւ, հարկ եղած դեպքում, այդ ծրագրերը համապատասխանաբար փոփոխվում են:

▼B

Հոդված 7

Կենդանիներին կերակրելու վերաբերյալ արգելքները

▼M30

1. Կենդանական սպիտակուցներով որոճողներին կերակրելն արգելվում է:

2. 1-ին պարբերությունում սահմանված արգելքը տարածվում է նաեւ որոճողներին չպատկանող կենդանիների վրա եւ այդ կենդանիների համար գործում է կենդանական ծագում ունեցող ապրանքներով կերակրման սահմանափակում՝ IV հավելվածին համապատասխան:

3. 1-ին եւ 2-րդ պարբերությունները գործում են՝ չսահմանափակելով այդ պարբերություններում սահմանված արգելքներից շեղում նախատեսող՝ IV հավելվածում սահմանված դրույթների գործողությունը:

24(3) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան՝ Հանձնաժողովը կարող է որոշել թույլատրել որոճողների ցեղերից մատուցվող կենդանիներին կերակրել ձկներից ստացված սպիտակուցներով՝ այդ կենդանիների սննդակարգի պահանջների գիտական գնահատման հիման վրա, սույն հոդվածի 5-րդ պարբերության մեջ սահմանված՝ սույն հոդվածի իրականացման համար ընդունված կանոններին համապատասխան եւ, սույն շեղման հետեւանքով, արդյունքների վերահսկողական հայեցակետերը գնահատելուց հետո:

4. Անդամ պետությունները կամ դրանց տարածաշրջանները, որտեղ ՓՍԷ-ի ռիսկի գնահատում չի կատարվել, չեն կարող արտահանել կամ պահեստավորել ֆերմային կենդանիների կերակրման համար նախատեսված կեր, որը պարունակում է կաթնասուններից ստացված սպիտակուց կամ կաթնասունների համար նախատեսված կեր: Բացառություն են կազմում շների, կատուների եւ մորթատու կենդանիների համար նախատեսված կերը, որը կաթնասուններից ստացված՝ մշակված սպիտակուց է պարունակում:

Երրորդ երկրները կամ դրանց տարածաշրջանները, որտեղ ՓՍԷ-ի ռիսկի գնահատում չի կատարվել, չեն կարող դեպի Համայնք արտահանել ֆերմային կենդանիների կերակրման համար նախատեսված կեր, որը պարունակում է կաթնասուններից ստացված սպիտակուց կամ կաթնասունների համար նախատեսված կեր: Բացառություն են կազմում շների,

կատուների եւ մորթատու կենդանիների համար նախատեսված կերը, որը պարունակում է կաթնասուններից ստացված՝ մշակված սպիտակուց:

Անդամ պետության կամ երրորդ երկրի խնդրանքով կարող է որոշում ընդունվել՝ 24(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան, այն բանից հետո, երբ 24(3) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան, մանրամասն չափորոշիչներ կսահմանվեն՝ սույն պարբերության սահմանափակումներից առանձին դեպքերում շեղում կատարելու իրավունք տալու համար: Ցանկացած բացառություն հաշվի է առնում սույն հոդվածի 3-րդ պարբերության մեջ սահմանված դրույթները:

▼M30

4ա. Հենվելով ռիսկի դրական գնահատման վրա, որի ժամանակ առնվազն հաշվի է առնվում ախտահարման չափսը եւ հնարավոր աղբյուրը, ինչպես նաեւ խմբաքանակի վերջնական նպատակավայրը, կարող է որոշում ընդունվել՝ 24(3) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան, ներմուծելու համար կերային նյութերում կենդանական ծագման սպիտակուցների աննշան քանակության թույլատրելի շեմ, որն առաջանում է անցանկալի եւ տեխնիկապես անխուսափելի ախտահարումից :

▼M30

5. Սույն հոդվածի իրականացման նպատակով ընդունված կանոնները, մասնավորապես՝ խաչաձեւ ախտահարումը կանխարգելելու մասին եւ սույն հոդվածի հետ համապատասխանելիությունը ստուգելու համար պահանջվող նմուշառման ու վերլուծության մասին կանոնները, ընդունվում են 24(2) հոդվածում նշված ընթացակարգի համաձայն: Այդ կանոնները հիմնվում են Հանձնաժողովի կողմից ներկայացվող հաշվետվության վրա, որոնք վերաբերում են ռեսուրսների ներգրավմանը, կենդանական ծագում ունեցող կերային նյութերի մշակմանը, վերահսկմանն ու հետազոծելիությանը:

▼B

Հոդված 8

Հատուկ ռիսկայնության նյութ

▼M30

1. Հատուկ ռիսկայնության նյութերը հեռացվում եւ ոչնչացվում են սույն Կանոնակարգի V հավելվածին եւ թիվ 1774/2002 կանոնակարգին (ԵՀ) համապատասխան: Այն Համայնք չի

ներկրվում: V հավելվածում նշված հատուկ ռիսկայնության նյութերի ցանկն առնվազն ներառում է 12 ամսականից մեծ խոշոր եղջերավոր անասունների ուղեղը, ողնուղեղը, աչքերը եւ նշագեղձերը, ինչպես նաեւ այն խոշոր եղջերավոր անասունների ուղղահայաց ողնաշարը, որի տարիքը պետք է սահմանվի 24(3) ընթացակարգին համապատասխան: Հաշվի առնելով ռիսկի տարբեր կատեգորիաները, որոնք սահմանված են 5(1) հոդվածի առաջին ենթապարբերությունում, եւ 6(1ա) ու (1բ)(բ) հոդվածի պահանջները, V հավելվածի հատուկ ռիսկայնության նյութերի ցանկը համապատասխանաբար փոփոխվում է:

2. Սույն հոդվածի 1-ին պարբերությունը չի կիրառվում այն կենդանիների հյուսվածքների նկատմամբ, որոնք այդ հատուկ նպատակով հաստատված այլընտրանքային փորձաստուգում են անցել 24(3) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան, պայմանով, որ այդ փորձաստուգումը նշված լինի X հավելվածում, իրականացված լինի V հավելվածում սահմանված պայմանների համաձայն, եւ փորձաստուգման արդյունքները բացասական լինեն:

Այն անդամ պետությունները, որոնք, սույն պարբերության համաձայն, թույլատրել են այլընտրանքային փորձաստուգումների կիրառությունը, տեղեկացնում են մյուս անդամ պետություններին եւ Հանձնաժողովին դրա մասին:

3. Անդամ պետություններում կամ դրանց տարածաշրջաններում, որտեղ ՓՍԷ-ն հսկվում է կամ սահմանված չէ, շժմեցումից հետո ցուպիկաձեւ երկար գործիքով գլխուղեղի խոռոչ մուտք գործելու ձեւով, ինչպես նաեւ շժմեցման համար գլխուղեղի խոռոչ գազ ներարկելու միջոցով կենտրոնական ներվային համակարգի հյուսվածքների պատռվածք չի թույլատրվում խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների կամ այծերի նկատմամբ, որոնց միսը նախատեսված է մարդկանց կողմից սպառման համար կամ որպես կենդանական կեր օգտագործելու համար:

4. V հավելվածում սահմանված տարիքի հետ կապված տվյալները կարող են փոփոխվել: Նման փոփոխությունները հիմնվում են Համայնքի խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների եւ այծերի պոպուլյացիայի հետ կապված՝ համապատասխան տարիքային խմբերում ՓՍԷ-ի դեպքերի վիճակագրական հավանականության առումով գիտականորեն հաստատված վերջին տվյալների վրա:

5. Սույն հոդվածի 1- 4-րդ պարբերություններից շեղում տրամադրող կանոնները կարող են ընդունվել 24(3) հոդվածում նշված ընթացակարգի համաձայն՝ կապված 7(1) հոդվածում սահմանված՝ կերակրման արգելքը արդյունավետ կիրարկելու ամսաթվի հետ, կամ եթե

կիրառելի է ՓՍԷ-ի վերահսկվող ռիսկի երրորդ երկրներում կամ դրանց տարածաշրջաններում՝ կապված որոճողների կերի մեջ կաթնասունների սպիտակուց օգտագործելու արգելքի արդյունավետ կիրարկման ամսաթվի հետ՝ նպատակ ունենալով սահմանափակելու համապատասխան երկրներում եւ տարածաշրջաններում նախքան այդ ամսաթիվը ծնված կենդանիների նկատմամբ հատուկ ռիսկայնության նյութերը չկիրառելու կամ վերացնելու պահանջները:

▼B

6. Սույն հոդվածի կիրարկման համար անհրաժեշտ կանոններն ընդունվում են 24(2) հոդվածում նշված ընթացակարգի համաձայն:

Հոդված 9

Կենդանական ծագում ունեցող ապրանքները, որոնք առաջացել կամ պարունակում են որոճող կենդանիներից մթերքներ

▼M30

1. VI հավելվածում թվարկված կենդանական ծագում ունեցող ապրանքներն արտադրվում են 24(3) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան հաստատված արտադրական պրոցեսների միջոցով:

2. Վերահսկվող կամ ԽԵԱՍԷ-ի մասով չսահմանված ռիսկի պետություններից կամ տարածաշրջաններից ներկրվող խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների եւ այծերի ոսկորները չեն կարող օգտագործվել ոսկորից մեխանիկական եղանակով առանձնացված մսի արտադրության նպատակով (ՄՍՄ): Նախքան 2008 թվականի հուլիսի 1-ը՝ անդամ պետություններն իրենց տարածքում ՄՍՄ-ի կիրառության եւ արտադրական մեթոդի մասին հաշվետվություն են ներկայացնում Հանձնաժողով: Այս հաշվետվության մեջ անդամ պետությունը հայտարարում է, թե արդյոք շարունակելու է ՄՍՄ-ի արտադրությունը:

Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ եւ Խորհուրդ հաղորդագրություն է ներկայացնում Համայնքում ՄՍՄ-ի հետագա անհրաժեշտության եւ կիրառության մասին, այդ թվում՝ սպառողներին տեղեկատվության տրամադրելու քաղաքականության մասին:

▼M44

3. V հավելվածի 5-րդ կետում սահմանված չափորոշիչների համաձայն՝ 1-ին եւ 2-րդ պարբերությունները չեն կիրառվում այլընտրանքային փորձաստուգում անցած որոճողների նկատմամբ, որը հաստատվել է 24(3) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան՝ պայմանով, որ այդ փորձաստուգումը նշված լինի X հավելվածում նշված ցանկում այն դեպքում, երբ փորձաստուգման արդյունքները բացասական են:

▼B

4. Սույն հոդվածի կիրարկման համար անհրաժեշտ կանոններն ընդունվում են 24(2) հոդվածում նշված ընթացակարգի համաձայն:

Հոդված 10

Կրթական ծրագրերը

1. Անդամ պետություններն ապահովում են որ իրավասու մարմնի, ախտորոշիչ լաբորատորիաների եւ գյուղատնտեսության ու անասնաբուժության քոլեջների աշխատակազմը, պաշտոն զբաղեցնող անասնաբույժները, պրակտիկ անասնաբույժները, սպանդանոցի աշխատակիցները եւ կենդանի բուծողները, պահողները եւ այդ գործով զբաղվող այլ անձինք վերապատրաստվեն կլինիկական նշանների, համաճարակաբանության, իսկ ստուգումների համար պատասխանատու աշխատակազմը՝ ՓՍԷ-ի վերաբերյալ լաբորատոր արդյունքների մեկնաբանման հարցերում:

2. 1-ին պարբերության մեջ սահմանված կրթական ծրագրերի արդյունավետ իրականացում ապահովելու համար Համայնքը կարող է տրամադրել ֆինանսական աջակցություն: Նման օժանդակության գումարի չափը որոշվում է 24(2) հոդվածում նշված ընթացակարգի համաձայն:

ԳԼՈՒԽ IV

ՓՍԷ-ՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Հոդված 11

Ծանուցումը

Չսահմանափակելով 82/894/ԵՏՀ հրահանգի գործողությունը (14), անդամ պետություններն ապահովում են ենթադրաբար ՓՍԷ վարակակիր ցանկացած կենդանու մասին անմիջապես տեղեկացնելը իրավասու մարմիններին:

Անդամ պետությունները միմյանց եւ Հանձնաժողովին կանոնավոր տեղեկացնում են ծանուցված ՓՍԷ-ի դեպքերի մասին:

Իրավասու մարմինն առանց հապաղման ձեռնարկում է սույն Կանոնակարգի 12-րդ հոդվածում սահմանված միջոցների, ինչպես նաեւ ցանկացած այլ անհրաժեշտ միջոցների մասին:

Հոդված 12

Կասկածվող կենդանիների վերաբերյալ միջոցները

▼M30

1. Ենթադրաբար ՓՍԷ վարակակիր ցանկացած կենդանու նկատմամբ կա՛մ պաշտոնապես կիրառվում է տեղաշարժի սահմանափակում՝ մինչեւ իրավասու մարմնի կողմից իրականացվող կլինիկական եւ համաճարակաբանական հետազոտության արդյունքների հայտնի լինելը, կա՛մ նրան պաշտոնական վերահսկողության պայմաններում սպանում են լաբորատոր ուսումնասիրության նպատակով:

Եթե պաշտոնական տվյալներով խոշոր եղջերավոր որբեւ անասուն անդամ պետության անասնագոմում կասկածվում է ՓՍԷ-ով վարակված լինելու մեջ, ապա այդ անասնանոցի բոլոր մյուս խոշոր եղջերավոր անասունների տեղաշարժը պաշտոնապես սահմանափակվում է՝ մինչեւ ուսումնասիրության արդյունքների հայտնի լինելը: Եթե պաշտոնական տվյալներով որբեւ ոչխար կամ այծ կասկածվում է ՓՍԷ վարակակիր լինելու մեջ անդամ պետության անասնանոցում, ապա այդ անասնանոցի բոլոր մյուս ոչխարները եւ

այծերը պաշտոնապես դրվում են տեղաշարժի սահմանափակման տակ՝ մինչև ուսումնասիրության արդյունքները հայտնի լինելը:

Այնուամենայնիվ, եթե փաստեր կան, որ ՓՍԷ-ն կասկածելու պահին անասունը գտնվել էր մի անասնագոմում, որտեղից չէր կարող վարակվել ՓՍԷ-ով, ապա իրավասու մարմինը կարող է որոշել տեղաշարժի պաշտոնական սահմանափակում կիրառել միայն կասկածվող անասունների նկատմամբ:

Իրավասու մարմինն անհրաժեշտության դեպքում կարող է նաեւ որոշել պաշտոնական վերահսկողություն սահմանել մյուս անասնանոցների կամ միայն վարակի տարածման անասնագոմի նկատմամբ՝ կախված համաճարակաբանական համապատասխան հասանելի տեղեկություններից:

24(2) հոդվածում նշված ընթացակարգի համաձայն եւ սույն պարբերության մեջ սահմանված պաշտոնական տեղաշարժի սահմանափակումից շեղում կատարելով՝ անդամ պետությունը կարող է ազատվել նման սահմանափակումներ կատարելուց, եթե նա առաջարկի համարժեք պաշտպանական միջոցներ՝ մարդու եւ կենդանիների առողջության համար հնարավոր վտանգների համապատասխան գնահատման տվյալների հիման վրա:

▼B

2. Եթե իրավասու մարմինը որոշում է, որ ՓՍԷ-ով վարակվելու հավանականությունը չի կարող հերքվել, ապա այդ կենդանին պետք է սպանվի, եթե այն դեռ կենդանի է. նրա ուղեղը եւ բոլոր մյուս հյուսվածքները, ըստ իրավասու մարմնի որոշման, հեռացվում եւ ուղարկվում են պաշտոնապես հաստատված լաբորատորիա, 19(1) հոդվածով նախատեսված ազգային մեթոդաբանական լաբորատորիա, կամ 19(2) հոդվածով նախատեսված Համայնքի էտալոնային լաբորատորիա՝ 20-րդ հոդվածի համաձայն սահմանված փորձաստուգման մեթոդներին համապատասխան, ուսումնասիրություն անցնելու համար:

▼M30

3. Կասկածվող կենդանու մարմնի բոլոր մասերը կա՛մ պահվում են պաշտոնական վերահսկողության պայմաններում՝ մինչև բացասական ավտորոշում կատարելը, կա՛մ թիվ 1774/2002 կանոնակարգի (ԵՀ) համաձայն, ոչնչացվում են:

▼B

4. Սույն հոդվածի կիրարկման համար անհրաժեշտ կանոններն ընդունվում են 24(2) հոդվածում նշված ընթացակարգի համաձայն:

Հոդված 13

ՓՍԷ-ի առկայության հաստատումից հետո ձեռնարկվող միջոցները

1. Եթե ՓՍԷ-ի առկայությունը պաշտոնապես հաստատվում է, հնարավորինս շուտ պետք է կիրառվեն հետևյալ միջոցները.

▼M30

ա) կենդանու մարմնի բոլոր մասերը պետք է ոչնչացվեն՝ թիվ 1774/2002 կանոնակարգի (ԵՀ) համաձայն, բացառությամբ մարմնի այն մասի, որը, սույն Կանոնակարգի III հավելվածի Բ գլխի համաձայն, պահվում է՝ տվյալներն արձանագրելու համար:

▼B

բ) VII հավելվածի 1-ին կետի համաձայն՝ տեղեկություններ պետք է հավաքել՝ հայտնաբերելու համար բոլոր ռիսկային կենդանիներին.

▼M30

գ) ռիսկային բոլոր կենդանիները եւ դրանցից պատրաստվող ապրանքները, ինչպես նշված են սույն Կանոնակարգի VII հավելվածի 2-րդ կետում, եւ ինչպես դրանք հայտնաբերված են սույն պարբերության (բ) կետում նշված տեղեկությունների հավաքման արդյունքում, պետք է սպանվեն եւ ոչնչացվեն՝ 1774/2002 կանոնակարգի (ԵՀ) համաձայն:

▼M30

Անդամ պետության խնդրանքով եւ հիմնվելով ռիսկի դրական գնահատման վրա, մասնավորապես, հաշվի առնելով այդ անդամ պետությունում վերահսկողական միջոցները, որոշում կարող է ընդունվել՝ 24(2) հոդվածում նշված ընթացակարգի համաձայն, սույն պարբերության մեջ նշված խոշոր եղջերավոր անասունների շահագործումը մինչեւ նրանց արտադրողական կյանքի վերջը թույլատրելու մասին:

▼M44

Շեղում կատարելով սույն պարբերությունից՝ անդամ պետությունը կարող է կիրառել այլ միջոցներ, որոնք առաջարկում են պաշտպանության համարժեք պաշտպանության

մակարդակ՝ 24ա եւ 25-րդ հոդվածների համաձայն կատարված ռիսկի դրական գնահատման հիման վրա, մասնավորապես, հաշվի առնելով այդ անդամ պետությունում վերահսկողական միջոցները, եթե այդ միջոցները տվյալ անդամ պետության համար հաստատվել են 24(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

▼B

2. Մինչեւ 1(բ) եւ (գ) պարբերության մեջ նշված միջոցների իրականացումը, այն անասնագումը, որտեղ գտնվել է կենդանին, երբ հաստատվել է ՓՍԷ-ի առկայությունը, պետք է դրվի պաշտոնական վերահսկողության տակ ՓՍԷ-ի նկատմամբ զգայուն կենդանիների եւ դրանցից ստացված կենդանական ծագում ունեցող ապրանքների՝ դեպի անասնանոց կամ անասնանոցից տեղաշարժը պետք է լիազորվի իրավասու մարմնի կողմից՝ նպատակ ունենալով ապահովելու կենդանիների եւ կենդանական ծագում ունեցող համապատասխան ապրանքների անմիջական հետազօծելիությունն ու նույնականացումը:

Այնուամենայնիվ, եթե փաստեր կան, որ ՓՍԷ կասկածելու պահին անասունի ներկայության անասնանոցը չէր կարող լինել այն վայրը, որտեղից անասունը վարակվել է ՓՍԷ-ով, ապա իրավասու մարմինը կարող է որոշել տեղաշարժի պաշտոնական սահմանափակում կիրառել երկու անասնանոցների կամ միայն վարակի տարածման անասնանոցի նկատմամբ:

3. Այն անդամ պետությունները, որոնք 12(1) հոդվածի հինգերորդ ենթապարբերությամբ նախատեսված համարժեք պաշտպանիչ միջոցներ առաջարկող փոխարինող ծրագիր են կիրառել, կարող են, 1(բ) եւ (գ) պարբերությունների պահանջներից շեղում կատարելով, ազատվել կենդանիների տեղաշարժի պաշտոնական սահմանափակում կիրառելու եւ կենդանիներին սպանելու եւ ոչնչացնելու պարտավորությունից՝ 24(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:

4. Սեփականատերերն առանց հապաղման փոխհատուցվում են 12(2) հոդվածի եւ սույն հոդվածի 1(ա) եւ (գ) պարբերության համաձայն սպանված կենդանիների կամ կենդանական ծագում ունեցող ոչնչացված ապրանքների համար:

5. Չսահմանափակելով 82/894/ԵՏՀ հրահանգի գործողությունը՝ ՓՍԷ-ի հաստատված առկայությունը, որը ԽԵԱՍԷ չէ, տարեկան մեկ անգամ ծանուցվում է Հանձնաժողովին :

6. Սույն հոդվածի կիրարկման համար անհրաժեշտ կանոններն ընդունվում են 24(2) հոդվածում նշված ընթացակարգի համաձայն:

Հոդված 14

Չնախատեսված իրավիճակներում գործողությունների ծրագիրը

1. Կենդանիների հիվանդությունների վերահսկման Համայնքի կանոններին համապատասխան՝ անդամ պետությունները կազմում են ուղեցույցներ, որտեղ սահմանվում են իրականացման ենթակա այն ազգային միջոցները եւ նշվում են այն իրավասություններն ու պարտականությունները, որոնք գործում են ՓՍԷ-ի հաստատման դեպքում:
2. Եթե կա Համայնքի օրենսդրությունը միատեսակ կիրառելու անհրաժեշտություն, ապա ուղեցույցները կարող են ներդաշնակեցվել՝ 24(2) հոդվածում նշված ընթացակարգի համաձայն:

ԳԼՈՒԽ V

ՇՈՒԿԱՅԱՀԱՆՈՒՄԸ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ

Հոդված 15

Կենդանի կենդանիները, նրանց սերմնահեղուկը, սաղմը եւ ձվաբջիջը

1. Խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների կամ այծերի եւ նրանց սերմնահեղուկի, սաղմերի ու ձվաբջիջների շուկայահանումը, կամ անհրաժեշտության դեպքում՝ արտահանումը, կարգավորվում են VIII հավելվածում սահմանված պայմաններով, կամ ներկրումների դեպքում՝ IX հավելվածում սահմանված պայմաններով: Կենդանի կենդանիներին եւ նրանց սաղմերին կամ ձվաբջիջներին կցված են կենդանիների առողջության մասին համապատասխան վկայագրեր, ինչպես պահանջվում է Համայնքի օրենսդրությամբ՝ 17-րդ հոդվածի համաձայն, կամ ներկրումների դեպքում՝ 18-րդ հոդվածի համաձայն:
2. ՓՍԷ վարակակիր կասկածվող կամ հաստատված կենդանիների առաջին սերնդի ձագերի, սերմնահեղուկի, սաղմերի եւ ձվաբջիջները շուկայահանումը կարգավորվում է VIII հավելվածի Բ գլխում սահմանված պայմաններով:

3.24(3) հողվածում նշված ընթացակարգին համապատասխան՝ 1-ին եւ 2-րդ պարբերությունների դրույթները կարող են տարածվել կենդանիների այլ տեսակների նկատմամբ:

4. Սույն հողվածի կիրարկման համար անհրաժեշտ կանոններն ընդունվում են 24(2) հողվածում նշված ընթացակարգի համաձայն:

▼B

Հողված 16

Կենդանական ծագում ունեցող ապրանքների շուկայահանումը

1. Շուկայահանման սահմանափակումները կամ, անհրաժեշտության դեպքում, սույն հողվածի, VIII հավելվածի Գ եւ Դ գլուխների եւ IX հավելվածի Ա, Գ, Զ եւ Է գլուխների համաձայն արտահանման սահմանափակումները չեն գործում առողջ որոճողներից ստացված հետեւյալ կենդանական ծագում ունեցող ապրանքների նկատմամբ՝

ա) 15-րդ հողվածով կարգավորվող կենդանական ծագում ունեցող ապրանքները, մասնավորապես՝ սերմնահեղուկը, սաղմերը եւ ձվաբջիջները.

▼M30

բ) կաթը եւ կաթնամթերքը, մորթիները եւ կաշիները, մորթիներից կամ կաշվից ստացված դոնդողը կամ կոլագենը:

2. ԽԵԱՍԷ-ի վերահսկվող կամ չսահմանված ռիսկի երրորդ երկրից ներկրված կենդանական ծագում ունեցող ապրանքները պետք է ստացվեն առողջ խոշոր եղջերավոր անասուններից, ոչխարներից եւ այծերից, որոնց նկատմամբ չի կիրառվել կենտրոնական նյարդային հյուսվածքի շժմեցում կամ գլխուղեղի խոռոչ գազի ներարկում՝ ինչպես նշված է 8(3) հողվածում:

3. Խոշոր եղջերավոր անասուններից ստացված՝ մթերք պարունակող կենդանական ծագում ունեցող սննդամթերքը, որն ստացվել է ԽԵԿՍԷ-ի չսահմանված ռիսկի երկրից կամ տարածաշրջանից, չպետք է շուկայահանվի, բացառությամբ եթե դրանք ստացվել են այն կենդանիներից, որոնք՝

ա) կաթնասուններից ստացված կենդանական սպիտակուցներով՝ որոճող կենդանիների կերակրելու արգելքի կիրարկման իրական ամսաթվից ութ տարի հետո են ծնվել:

բ) ծնվել, մեծացել եւ ապրել են այնպիսի հոտերում, որտեղ պաշտոնապես հաստատված է, որ առնվազն յոթ տարվա ընթացքում ԽԵԱՍԷ վարակ չի եղել:

Ավելին, որոճողներից ստացված սննդամթերքը չպետք է ԽԵԱՍԷ չսահմանված ռիսկի անդամ պետությունից կամ դրա տարածաշրջանից ուղարկվի մեկ այլ անդամ պետություն կամ ներկրվի ԽԵԱՍԷ չսահմանված ռիսկի երրորդ երկրից:

Այս արգելքը չի կիրառվում VIII հավելվածի Գ գլխում նշված եւ VIII հավելվածի Գ գլխի պահանջները բավարարող կենդանական ծագում ունեցող ապրանքների նկատմամբ:

Դրանց պետք է կցված լինի իրավասու անասնաբույժի կողմից տրամադրված՝ կենդանիների առողջության մասին վկայագիր, որը պետք է հավաստի որ այդ ապրանքներն արտադրվել են սույն Կանոնակարգին համապատասխան:

▼B

4. Եթե կենդանին մի երկրից կամ տարածաշրջանից տեղափոխվում է մեկ այլ կատեգորիայում ներառված երկիր կամ տարածաշրջան, ապա այն դասակարգվում է այդ երկրներից եւ տարաշրջաններից ամենաբարձր կատեգորիայում, որտեղ այն մնացել է քսանչորս ժամվա ընթացքում, բացառությամբ եթե բավարար երաշխիքներ կարող են տրամադրվել, որոնք կվկայեն, որ այդ կենդանին ամենաբարձր կատեգորիայում դասակարգված երկրում կամ տարածաշրջանում չի կերակրվել:

5. Կենդանական ծագում ունեցող այն ապրանքները, որոնց համար սույն հոդվածով սահմանվում են հատուկ կանոններ, պետք է դրանց կից ներկայացվեն կենդանիների առողջության մասին համապատասխան վկայագրեր կամ առետրային փաստաթղթեր, ինչպես պահանջվում է Համայնքի օրենսդրությամբ՝ 17-րդ եւ 18-րդ հոդվածներին համապատասխան, կամ եթե նման վկայագրեր կամ փաստաթղթեր չեն նախատեսում Համայնքի օրենսդրությամբ, ապա դրանց պետք է կից ներկայացվեն այնպիսի վկայագրեր կամ առետրային փաստաթղթեր, որոնց նմուշը հաստատվում է 24(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:

6. Համայնք ներկրելու նպատակով կենդանական ծագում ունեցող ապրանքները պետք է բավարարեն IX հավելվածի, Ա. Գ, 2 եւ Է գլուխներում սահմանված պայմանները:

▼M44

7.24(3) հողվածում նշված ընթացակարգին համապատասխան՝ 1-ին եւ 6-րդ պարբերությունների դրույթները կարող են տարածվել կենդանական ծագում ունեցող այլ ապրանքների նկատմամբ: Սույն հողվածի կիրարկման համար անհրաժեշտ կանոններն ընդունվում են 24(2) հողվածում նշված ընթացակարգի համաձայն:

▼B

Հոդված 17

24(2) հողվածում նշված ընթացակարգին համապատասխան՝ 64/432/ԵՏՀ հրահանգի 2 հավելվածում նշված, 91/68/ԵՏՀ հրահանգի Ե հավելվածի II եւ III մոդելների՝ առողջության մասին վկայագրերն ու Համայնքի օրենսդրությամբ սահմանված՝ խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների կամ այծերի սերմնահեղուկի, սաղմերի եւ ձվաբջիջների առետրի հետ կապված առողջության մասով համապատասխան վկայագրերը, անհրաժեշտության դեպքում, լրացվում են 5-րդ հողվածի համաձայն դասակարգված՝ ծագման անդամ պետության կամ տարածաշրջանի կատեգորիայի մասին հղմամբ:

Կենդանական ծագում ունեցող ապրանքների առետրի հետ կապված համապատասխան առետրային փաստաթղթերին, հարկ եղած դեպքում, պետք է կից ներկայացվեն 5-րդ հողվածի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից դասակարգված կատեգորիայի մասին հղմամբ, որը վերաբերում է տվյալ անդամ պետությանը կամ տարածաշրջանին:

Հոդված 18

Ներկրման առնչությամբ առողջության համապատասխան վկայագրերը, որոնք նախատեսված են Համայնքի օրենսդրությամբ 24(2) հողվածում նշված ընթացակարգին համապատասխան՝ 5-րդ հողվածի համաձայն որեւէ կատեգորիայում դասակարգված երրորդ երկրների առումով, պետք է ներկայացվեն IX հավելվածում սահմանված հատուկ պահանջներով՝ դասակարգման մասին որոշում ընդունելուն պես:

ԳԼՈՒԽ VI

ԷՏԱԼՈՆԱՅԻՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԸ, ՆՄՈՒՇԱՌՈՒՄԸ, ՓՈՐՁԱՍՏՈՒԳՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 19

Էտալոնային լաբորատորիաները

1. Յուրաքանչյուր անդամ պետության ազգային էտալոնային լաբորատորիաները եւ նրանց գործառույթներն ու պարտականությունները սահմանվում են X հավելվածի Ա գլխում:
2. Համայնքի մեթոդաբանական լաբորատորիաները եւ նրանց գործառույթներն ու պարտականությունները սահմանվում են X հավելվածի Բ գլխում:

Հոդված 20

Նմուշառումը եւ լաբորատոր մեթոդները

1. ՓՄԷ-ի առկայության համար նմուշառումը եւ լաբորատոր փորձաստուգումն իրականացվում են X հավելվածի Գ գլխում սահմանված մեթոդների եւ արարողակարգերի համաձայն:

▼M44

2. Այն դեպքերում, երբ անհրաժեշտ է ապահովել սույն հոդվածի միատեսակ կիրարկում, կիրարկման կանոններն ընդունվում են 24(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն: Խոշոր եղջերավոր անասունների եւ ոչխարների մոտ ՓՄԷ-ն հաստատելու մեթոդն ընդունվում է 24(3) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

▼B

Հոդված 21

Համայնքի կողմից իրականացվող հսկողությունը

1. Հանձնաժողովի փորձագետները կարող են տեղում ստուգումներ իրականացնել անդամ պետությունների իրավասու մարմինների հետ համագործակցության պայմաններում, որքանով դա անհրաժեշտ է՝ սույն Կանոնակարգի միատեսակ կիրառությունն ապահովելու համար: Այն անդամ պետությունները, որոնց տարածքում ստուգումներն իրականացվում են, փորձագետներին պետք է ցույց տան անհրաժեշտ օժանդակություն իրենց պարտականությունները կատարելու հարցում: Հանձնաժողովն իրավասու մարմինն տեղեկացնում է ստուգումների արդյունքների մասին:

Սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոնները, մասնավորապես, ազգային մարմինների հետ համագործակցության ընթացակարգի մասով, ընդունվում են 24(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

2. Երրորդ երկրների մասով Համայնքի ստուգումները կատարվում են 97/78/ԵՀ հրահանգի 20-րդ եւ 21-րդ հոդվածների համաձայն:

ԳԼՈՒԽ VII

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Հոդված 22

Հատուկ ռիսկայնության նյութերի վերաբերյալ անցումային դրույթները

1. XI հավելվածի Ա մասի դրույթները կիրառվում են առնվազն վեցամսյա ժամկետով՝ սկսած 2001 թվականի հուլիսից եւ դադարում են կիրառվել 5(2) կամ (4) հոդվածի համաձայն որոշում ընդունելուց անմիջապես հետո, երբ սկսում է կիրառվել 8-րդ հոդվածը:

2. Անցումային շրջանում 5(3) հոդվածի համաձայն իրականացված եզրափակիչ վիճակագրական ուսումնասիրության արդյունքներն օգտագործվում են 5(1) հոդվածում նշված ռիսկի վերլուծության եզրակացությունները հաստատելու կամ հերքելու համար, երբ հաշվի են առնվում ԷՀՄԳ-ի կողմից սահմանված դասակարգման չափորոշիչները:

3. Համապատասխան գիտական կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո վիճակագրական այդ ուսումնասիրության առումով մանրամասն կանոններ են ընդունվում՝ 24(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:

4. Վիճակագրական այս ուսումնասիրության առումով պարտադիր համարվող նվազագույն չափորոշիչները սահմանվում են XI հավելվածի Բ մասում:

Հոդված 23

Հավելվածների փոփոխությունները եւ անցումային միջոցները

▼M44

Համապատասխան գիտական կոմիտեի հետ հանրային առողջության վրա հնարավոր ազդեցություն ունեցող ցանկացած հարցի շուրջ խորհրդակցելուց հետո հավելվածները պետք է փոփոխվեն կամ լրացվեն եւ պետք է ընդունվեն համապատասխան անցումային միջոցներ 24(3) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

▼M21

Այդ ընթացակարգին համապատասխան՝ 2007 թվականի հուլիսի 1-ի դրությամբ պետք է ընդունվեն անցումային միջոցներ, որպեսզի առկա պայմանավորվածություններից անցում կատարվի դեպի սույն Կանոնակարգով հաստատված պայմանավորվածություններ:

▼M30

Հոդված 23ա

Հետեւյալ միջոցառումները, որոնք նախատեսված են սույն Կանոնակարգի ոչ էական տարրերը փոփոխելու համար, մասնավորապես՝ լրացումներ կատարելու նպատակով, պետք է ընդունվեն 24(3) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն պահանջող կարգավորիչ ընթացակարգի համաձայն.

▼M44

ա) 5(3) հոդվածի երրորդ ենթապարբերությունում, 6(1) հոդվածում, 8(2) հոդվածում եւ 9(3) հոդվածում նշված արագացված փորձաստուգումների հաստատում.

▼M30

բ) 6(1բ) հոդվածում նշված տարիքի համապատասխանեցում.

- գ) 6(1բ) հոդվածում նշված վիճակագրական վիճակի բարելավում ցույց տվող չափորոշիչներ.
- դ) որոճողների դասին պատկանող մատղաշ կենդանիներին ձկներից ստացված սպիտակուցներով կերակրելու թույլտվության մասին որոշում՝ ինչպես նշված է 7(3) հոդվածում.
- ե) 7(4) հոդվածում նշված սահմանափակումներից ազատելու չափորոշիչներ.
- զ) 7(4ա) հոդվածում նշված շեմեր ներմուծելու մասին որոշում.
- է) 8(1) հոդվածում նշված տարիքի մասին որոշում.
- ը) հատուկ ռիսկայնության նյութեր հեռացնելու կամ ոչնչացնելու պահանջից բացառություն նախատեսող կանոններ՝ ինչպես նշված է 8(5) հոդվածում.
- թ) 9(1) հոդվածում նշված արտադրական պրոցեսների հաստատում.
- ժ) որոշ դրույթներ այլ կենդանիների տեսակների վրա տարածելու մասին որոշում՝ ինչպես նշված է 15(3) հոդվածում:

▼M44

- ժա) 16-րդ հոդվածի 1-6-րդ պարբերությունների դրույթները կենդանական ծագում ունեցող այլ ապրանքների վրա տարածելու իրավունք.
- ժբ) ԽԵԱՍԷ-ն խոշոր եղջերավոր անասունների եւ ոչխարների մոտ հաստատելու մեթոդի ընդունում՝ ինչպես նշված 20(2) հոդվածում.
- ժգ) 23-րդ հոդվածում նշված հավելվածների փոփոխություն կամ լրացում եւ համապատասխան անցումային միջոցների ընդունում:

▼M30

Հոդված 24

Կոմիտեները

1. Հանձնաժողովին աջակցում է Սննդի շղթայի եւ կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն: Այնուամենայնիվ, Հանձնաժողովը պետք է 6ա հոդվածի հարցերով խորհրդակցի նաեւ Կենդանաբուծության հարցերով մշտական կոմիտեի հետ:

2. Սույն պարբերությանը հղում կատարելու դեպքում կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Այդ որոշման 5(6) հոդվածում նշված ժամկետները սահմանափակվում են երեք ամսով, իսկ սույն Կանոնակարգի 4(2) հոդվածում նշված պաշտպանիչ դրույթների դեպքում՝ 15 օրով:

3. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով այդ որոշման 8-րդ հոդվածի դրույթները:

▼M30

Հոդված 24ա

24-րդ հոդվածում նշված ընթացակարգերից մեկի համաձայն ընդունված որոշումները պետք է հենվեն մարդու եւ կենդանիների առողջության համար հնարավոր ռիսկերի համապատասխան գնահատման վրա եւ պետք է հաշվի առնեն առկա գիտական փաստերը, պետք է պահպանեն եւ, եթե գիտականորեն հիմնավորված է՝ բարձրացնեն մարդկանց կամ կենդանիների պաշտպանության մակարդակը, որն ապահովվում է Համայնքում:

▼B

Հոդված 25

Խորհրդատվական կոմիտեների խորհրդակցությունները

Սույն Կանոնակարգի շրջանակում հանրային առողջության վրա հնարավոր ազդեցություն ունեցող բոլոր հարցերով պետք է դիմել համապատասխան գիտական կոմիտեներին:

Հոդված 26

Ուժի մեջ մտնելը

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում դրա հրապարակմանը հաջորդող օրը:

Կիրառելի է 2001 թվականի հուլիսի 1-ից:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր եւ անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

▼M10

ՀԱՏՈՒԿ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

1. Սույն Կանոնակարգի նպատակով կիրառվում են Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 1774/2002 կանոնակարգի (15), Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 178/2002 կանոնակարգի (16) եւ Խորհրդի 79/373/ԵՏՀ հրահանգի (17) սահմանումները՝ թիվ 1774/2002/ԵՀ կանոնակարգ՝ «Ֆերմային կենդանի»՝ 2(1)(գ) հոդվածում.
«ընտանի կենդանիների կեր»՝ I հավելվածի 41-րդ կետում.
«մշակման ենթարկված կենդանական սպիտակուց»՝ I հավելվածի 42-րդ կետում.
«դոնդոլ»՝ I հավելվածի 26-րդ կետում.
«արյունից ստացվող արտադրանք»՝ I հավելվածի 4-րդ կետում.
«ջերմամշակման ենթարկված՝ արյունից պատրաստված արտադրանք»՝ I հավելվածի 6-րդ կետում եւ.
«կենդանիներից կեր»՝ I հավելվածի 24-րդ կետում:
«կերային նյութի»–ի սահմանումը թիվ 178/2002 կանոնակարգի (ԵՀ) 3(4) հոդվածում.
«լիարժեք օրական կերաբաժինն ապահովող անասնակեր» սահմանումը՝ 79/373/ԵՏՀ հրահանգի 2(դ) հոդվածում.

▼M32

2.

Սույն Հրահանգի նպատակներով կիրառվում են նաեւ հետեւյալ սահմանումները.

- ա) «տեղանքին հատուկ ԽԵԱՍԷ դեպք» նշանակում է խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպաթիայի դեպք, որի դեպքում հստակորեն ապացուցված չէ, որ վարակը տեղի է ունեցել կենդանի վիճակում կենդանու ներկրումից առաջ.
- բ) «դիսկրետ ճարպային հյուսվածք» նշանակում է ներքին եւ արտաքին մարմնական ճարպ, որն առանձնացվել է սպանդի եւ մասնատման պրոցեսում, մասնավորապես, խոշոր եղջերավոր

անասունների սրտից, թաղանթից, երիկամներից վերցված թարմ ճարպ եւ ճարպահանման սենյակում ստացված ճարպ.

գ) «կոհորտա» նշանակում է խոշոր եղջերավոր անասունների խումբ, որը ներառում է նշվածներից երկուսն էլ՝

i) վարակված խոշոր եղջերավոր անասունների հետ միեւնույն հոտում ծնված կենդանի եւ վարակված խոշոր եղջերավոր անասունների ծննդից հետո 12 ամսվա ընթացքում ծնված կենդանիներ. եւ

ii) կենդանիներ, որոնք իրենց կյանքի առաջին տարվա ընթացքում որեւէ ժամանակ բուծվել են վարակված խոշոր եղջերավոր անասունի հետ՝ այդ անասունի կյանքի առաջին տարվա ընթացքում.

դ) «ցուցչային դեպք» նշանակում է անասնանոցի կամ համաճարակաբանական տեսանկյունից որոշակի խմբի առաջին կենդանի, որի մոտ ՓՍԷ վարակը հաստատվել է.

ե) «ՓՍԷ փոքր որոճող կենդանիների մոտ» նշանակում է վարակիչ սպունգանման էնցեֆալոպաթիայի դեպք, որը հայտնաբերվել է ոչխարների կամ այծերի մոտ ոչ նորմալ PrP սպիտակուցներ հայտնաբերելու նպատակով կատարվող հաստատման փորձաստուգումից հետո.

զ) «քորուկի դեպք» նշանակում է սպունգանման էնցեֆալոպաթիայի հաստատված դեպք ոչխարների կամ այծերի մոտ, որի դեպքում ԽԵԱՍԷ-ի ախտորոշումը բացառվել է փոքր որոճողների մոտ ՓՍԷ շտամի բնորոշման մասով Համայնքի էտալոնային լաբորատորիայի կողմից հրապարակված՝ տեխնիկական ձեռնարկում սահմանված չափորոշիչների համաձայն (18);

է) «դասական քորուկի դեպք» նշանակում է քորուկի հաստատված դեպք, որը դասակարգվել է որպես դասական փոքր որոճողների մոտ ՓՍԷ շտամի բնորոշման մասով Համայնքի էտալոնային լաբորատորիայի կողմից հրապարակված տեխնիկական ձեռնարկում սահմանված չափորոշիչների համաձայն.

ը) «ոչ տիպային քորուկի դեպք» նշանակում է քորուկի հաստատված դեպք, որը տարբերվում է դասական քորուկից փոքր որոճողների մոտ ՓՍԷ շտամի բնորոշման մասով Համայնքի էտալոնային լաբորատորիայի կողմից հրապարակված տեխնիկական ձեռնարկում սահմանված չափորոշիչների համաձայն:

▼M31

ՀԱՎԵԼՎԱԾ II

ԽԵԱՍԷ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԳԼՈՒԽ Ա

Չափորոշիչները

Անդամ պետությունների կամ երրորդ երկրների կամ դրանց տարածաշրջանների (այսուհետ՝ «երկրներ կամ տարածաշրջաններ») ԽԵԱՍԷ կարգավիճակը սահմանվում է (ա) - (ե) կետերում սահմանված չափորոշիչների հիման վրա:

Երկրում կամ տարածաշրջանում՝

- ա) իրականացվում է ռիսկի գնահատում՝ Բ գլխի դրույթների համաձայն, որում սահմանվում է ԽԵԱՍԷ-ի առաջացման բոլոր պոտենցիալ գործոնները եւ տվյալ երկրում կամ տարածաշրջանում դրա փաստագրական նկարագիրը.
- բ) գոյություն ունի ԽԵԱՍԷ հետազոտման եւ դիտանցման շարունակական համակարգ, մասնավորապես՝ Բ գլխում նկարագրված ռիսկերի մասով, որը համապատասխանում է Դ գլխում սահմանված հետազոտական նվազագույն պահանջներին.
- գ) իրականացվում է անասնաբույժների, ֆերմերների եւ խոշոր եղջերավոր անասունների փոխադրման, շուկայահանման ու սպանդի ոլորտում աշխատակիցների շարունակական իրազեկման ծրագրեր՝ նպատակ ունենալով խրախուսելու նրանց զեկուցել ԽԵԱՍԷ ներառող կլինիկական նշաններ ցույց տվող դեպքերը սույն Հավելվածում սահմանված թիրախային ենթապոպուլյացիաներում.
- դ) գործողության մեջ է խոշոր եղջերավոր անասունների մոտ ԽԵԱՍԷ ներառող բոլոր կլինիկական նշանները ծանուցելու եւ հետազոտելու պարտավորություն.
- ե) իրականացնել (բ) կետում նշված հետազոտման եւ դիտանցման համակարգի շրջանակում ձեռք բերված ուղեղի եւ այլ հյուսվածքների հետազոտություն՝ լիազորություն ունեցող լաբորատորիայում:

ԳԼՈՒԽ Բ

Ռիսկի գնահատումը

1. Ռիսկի գնահատման կառուցվածքը

Ռիսկի գնահատումը բաղկացած է տարածվածության գնահատումից եւ վարակման գնահատումից

2. Տարածվածության գնահատում (արտաքին մարտահրավեր)

2.1. Տարածվածության գնահատման ժամանակ գնահատվում է ԽԵԱՍԷ հարուցիչով պոտենցիալ կերպով ախտահարված ապրանքի միջոցով ԽԵԱՍԷ հարուցիչը երկիր կամ տարածաշրջան ներմուծելու հավանականությունը, կամ երկրում կամ տարածաշրջանում դրա առկայությունը:

Հաշվի են առնվում ռիսկի հետեւյալ գործոնները՝

- ա) երկրում կամ տարածաշրջանում ԽԵԱՍԷ հարուցիչի առկայություն կամ բացակայություն, եւ եթե հարուցիչ կա՝ դրա տարածվածության մակարդակը, որը որոշվում է հետազոտական գործունեության արդյունքների հիման վրա.
- բ) մասսկորային այլուրի եւ ճարպատակուցքի արտադրություն ԽԵԱՍԷ ունեցող որոճող կենդանիների պոպուլյացիայից.
- գ) ներկրված մասսկորային այլուր եւ ճարպատակուցք.
- դ) ներկրված խոշոր եղջերավոր անասուններ եւ ոչխարներ.
- ե) ներկրված կենդանական կեր եւ կերային բաղադրամասեր.
- զ) մարդու կողմից սպառման նպատակով որոճող կենդանիներից ստացված՝ ներկրված ապրանքներ, որոնք հավանաբար, պարունակում են V հավելվածի 1-ին կետում նշված հյուսվածքները եւ հավանաբար, խոշոր եղջերավոր անասուններին որպես կեր են տրվել.
- է) որոճողների ծագում ունեցող՝ ներկրված ապրանքներ՝ խոշոր եղջերավոր անասունների կլինիկական հետազոտություններում օգտագործելու համար:

2.2. Տարածման գնահատման ընթացքում պետք է հաշվի առնվեն հիվանդության վերացման հատուկ ծրագրերը, հետազոտությունները եւ մյուս համաճարակաբանական ուսումնասիրությունները (հատկապես խոշոր եղջերավոր անասունների պոպուլյացիայում

իրականացված ԽԵԱՍԷ-ի վերաբերյալ հետազոտությունները), որոնք առնչվում են 2.1 կետում թվարկված ռիսկի գործոններին:

3. Վարակման գնահատումը

Վարակման գնահատումը բաղկացած է խոշոր եղջերավոր կենդանիների՝ ԽԵԱՍԷ հարուցիչով վարակվելու հավանականության գնահատումից՝ հաշվի առնելով հետեւյալը՝

- ա) խոշոր եղջերավոր անասունների կողմից որոճող կենդանիներից ստացված՝ մսատկորային ալյուրի եւ ճարպատակուցքի սպառման միջոցով կամ դրանցով ախտահարված այլ կերի կամ կերային բաղադրամասերի միջոցով ԽԵԱՍԷ հարուցիչի վերարտադրություն եւ բազմացում.
- բ) որոճող կենդանիների մսեղիքի (այդ թվում՝ սատկած կենդանիների), դրանց ենթամթերքի եւ սպանդից հետո թափոնների օգտագործում, տեխնիկական ֆաբրիկատների պատրաստման պրոցեսներ եւ կենդանական կերի արտադրության մեթոդներ.
- գ) որոճողներից ստացված որոճողների համար մսատկորային ալյուրով եւ ճարպատակուցքով կերակրելը կամ չկերակրելը՝ ներառյալ կենդանական ծագում ունեցող կերի խաչաձեւ ախտահարումը կանխելու միջոցները.
- դ) ԽԵԱՍԷ մասով հետազոտության մակարդակը, որն իրականացվել է խոշոր եղջերավոր անասունների պոպուլյացիայի նկատմամբ՝ մինչեւ այդ պահը, եւ այդ հետազոտության արդյունքները:

ԳԼՈՒԽ Գ

Կատեգորիաների սահմանումը

I. ԽԵԱՍԷ-ի ՑԱԾԻ ՎՏԱՆԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ԿԱՄ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆՆԵՐԸ

Երկիր կամ տարածաշրջան՝

- 1) որտեղ, Բ գլխի համաձայն, ռիսկի գնահատում է իրականացվել՝ բացահայտելու համար նախկինում եղած կամ ներկայիս ռիսկի գործոնները.
- 2) որն ապացուցել է, որ ստորեւ սահմանված որոշակի ժամանակահատվածում ձեռնարկվել են համապատասխան հատուկ միջոցներ՝ ստորեւ սահմանված որոշակի ժամանակահատվածում՝ բացահայտված յուրաքանչյուր ռիսկ լուծելու համար.

3) որը ցույց է տվել, որ Դ գլխի համաձայն, իրականացվում է Բ տեսակի հետազոտություն եւ, այդ հետազոտության 2-րդ աղյուսակի համաձայն, բավարարված են համապատասխան թիրախային կետերը. եւ

4) որը՝

ա) կա՛մ հետեւյալ իրավիճակներում՝

i) երկրում կամ տարածաշրջանում ԽԵԱՍԷ որեւէ դեպք չի արձանագրվել, կամ ԽԵԱՍԷ-ի ներկրման ոչ մի դեպք չի եղել եւ լիովին ոչնչացվել է.

ii) սույն հավելվածի Ա գլխի (գ), (դ) եւ (ե) կետերում նշված չափորոշիչները լիովին պահպանվել են առնվազն յոթ տարվա ընթացքում. եւ

iii) վերահսկողական եւ աուդիտի համապատասխան մակարդակով ապացուցվել է, որ առնվազն ութ տարվա ընթացքում որոճողներին չի տրվել մասուկորային կամ ճարպատակուցքային կեր.

ա) կամ հետեւյալ իրավիճակներում՝

i) երկրում կամ տարածաշրջանում եղել է այդ տեղանքին հատուկ ԽԵԱՍԷ-ի մեկ կամ մի քանի դեպք, բայց այն ծագել է 11 տարի առաջ.

ii) Ա գլխի (գ), (դ) եւ (ե) կետերում նշված չափորոշիչները պահպանվել են առնվազն յոթ տարվա ընթացքում.

iii) վերահսկողական եւ աուդիտի համապատասխան մակարդակով ապացուցվել է, որ առնվազն ութ տարվա ընթացքում որոճողներին չի տրվել մասուկորային կամ ճարպատակուցքային կեր.

iv) տվյալ երկրում կամ տարածաշրջանում ապրող հետեւյալ կենդանիները հիմնավորապես հայտնաբերված են, եւ դրանց տեղաշարժը վերահսկվում է, կամ սպանդի կամ սատկելու դեպքում՝ դրանք ամբողջությամբ ոչնչացված են՝

– ԽԵԱՍԷ-ի բոլոր դեպքերը.

– բոլոր խոշոր եղջերավոր անասունները, որոնք կյանքի առաջին տարվա ընթացքում բուծվել են ԽԵԱՍԷ ունեցող կենդանիների հետ այդ կենդանիների կյանքի առաջին տարվա ընթացքում եւ որոնց դեպքում հետազոտությունները ցույց են տվել, որ նրանք այդ

ժամանակահատվածում կերակրվել են միեւնույն պոտենցիալ կերպով ավտահարված կերով, կամ

- եթե երկրորդ պարբերությամբ նշված հետազոտության արդյունքները համոզիչ չեն, ապա այդ հոտի բոլոր խոշոր եղջերավոր անասունները ԽԵԱՍԷ-ով վարակվելու դեպքերի 12 ամսվա ընթացքում:

II. ՎԵՐԱՀԿՍՎՈՂ ԽԵԱՍԷ ՌԻՍԿԻ ԵՐԿԻՐ ԿԱՄ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Երկիր կամ տարածաշրջան՝

- 1) որտեղ Բ գլխում սահմանված տեղեկությունների համաձայն, ռիսկի գնահատում է իրականացվել՝ բացահայտելու համար նախկինում եղած կամ ներկայիս ռիսկի գործոնները.
 - 2) որոնք ապացուցել են, որ համապատասխան միջոցներ են ձեռնարկվել՝ հայտնաբերված բոլոր ռիսկերը կառավարելու համար, բայց այդ միջոցները չեն ձեռնարկվել համապատասխան ժամանակահատվածում.
 - 3) որը ցույց է տվել, որ Ա տեսակի հետազոտությունը, Դ գլխի համաձայն, կատարվել է եւ այդ հետազոտության 2-րդ աղյուսակի համաձայն բավարարված են համապատասխան թիրախային կետերը: Բ տիպի հետազոտությունը կարող է փոխարինել Ա տիպի հետազոտությանը, երբ բավարարված են համապատասխան թիրախային կետերը, եւ
- 4) որին՝
- ա) հատուկ են կա՛մ հետեւյալ իրավիճակները՝
- i) երկրում կամ տարածաշրջանում չի եղել ԽԵԱՍԷ-ի որեւէ դեպք, կամ ապացուցված է, որ ԽԵԱՍԷ բոլոր դեպքերը ներմուծման արդյունք են եւ լիովին ոչնչացված են, Ա գլխի (գ), (դ) եւ (ե) կետերի չափորոշիչները պահպանված են եւ վերահսկման ու աուդիտի համապատասխան մակարդակով հնարավոր է ցույց տալ, որ որոճողները չեն կերակրվել որոճողներից ստացված մսաոսկորային կամ ճարպատակուցքային կերով.
 - ii) սույն հավելվածի Ա գլխի (գ), (դ) եւ (ե) կետերում նշված չափորոշիչները լիովին պահպանվել են յոթ տարուց պակաս ժամանակահատվածում. եւ (կամ)
 - iii) հնարավոր չէ ապացուցել, որ որոճողներից ստացված մսաոսկորային այլուրի կամ ճարպատակուցքի կերով որոճողներին կերակրելու վերահսկումը կատարվել է ութ տարվա ընթացքում.

բ) կա՛մ հետեւյալ իրավիճակներում՝

- i) երկրում կամ տարածաշրջանում եղել է տեղանքին բնորոշ ԽԵԱՍԷ դեպք, պահպանվել են Ա գլխի (գ), (դ) եւ (ե) կետերի չափորոշիչները եւ վերահսկման ու աուդիտի համապատասխան մակարդակով հնարավոր է ցույց տալ, որ որոճողները չեն կերակրվել որոճողներից ստացված մսաոսկորային կամ ճարպատակուցքային կերով.
- ii) սույն հավելվածի Ա գլխի (գ) – (ե) կետերում նշված չափորոշիչները լիովին պահպանվել են յոթ տարուց պակաս ժամանակահատվածում. եւ (կամ)
- iii) հնարավոր չէ ապացուցել, որ որոճողներից ստացված մսաոսկորային այլուրի կամ ճարպատակուցքի կերով որոճողներին կերակրելու վերահսկումը կատարվել է ութ տարվա ընթացքում.
- iv) երկրում կամ տարածաշրջանում կենդանի հետեւյալ կենդանիները մշտապես հայտնաբերվում են, դրանց տեղաշարժը վերահսկվում է, կամ երբ դրանք ենթարկվում են սպանդի կամ սատկում են, ապա լիովին ոչնչացվում են. եւ

– ԽԵԱՍԷ–ի բոլոր դեպքերը.եւ

– բոլոր խոշոր եղջերավոր անասունները, որոնք կյանքի առաջին տարվա ընթացքում բուծվել են ԽԵԱՍԷ ունեցող կենդանիների հետ այդ կենդանիների կյանքի առաջին տարվա ընթացքում եւ որոնց դեպքում հետազոտությունները ցույց են տվել, որ նրանք կերակրվել են միեւնույն պոտենցիալ կերպով ախտահարված կերով այդ ժամանակահատվածում, կամ

– եթե երկրորդ պարբերությամբ նշված հետազոտության արդյունքները համոզիչ չեն, ապա այդ հոտի բոլոր խոշոր եղջերավոր անասունները ԽԵԱՍԷ–ով վարակվելու դեպքերի 12 ամսվա ընթացքում:

III. ԽԵԱՍԷ–Ի ՉՍԱՀՄԱՆՎԱԾ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՐԿԻՐ ԿԱՄ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Այն երկիրը կամ տարածաշրջանը, որի համար ԽԵԱՍԷ–ի կարգավիճակի մասին որոշումը չի կայացվել, կամ որը չի բավարարում այն պայմանները, որոնք պետք է պահպանվեն, որպեսզի երկիրը կամ տարածաշրջանը դասակարգվի այլ կատեգորիաներից որեւիցե մեկում:

ԳԼՈՒԽ Դ

Հետազոտության նվազագույն պահանջները

1. Հետազոտության տեսակները

Սույն հավելվածի իմաստով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

ա) Ա տեսակի հետազոտությունը

Ա տեսակի հետազոտության կատարելիս հնարավոր է հայտնաբերել ԽԵԱՍԷ-ն առնվազն 100 000-ը մեկին հարաբերության կառուցվածքով (19) համապատասխան երկրի կամ տարածաշրջանի մեծահասակ խոշոր եղջերավոր անասունների պոպուլյացիայում, 95 % վստահության աստիճանով;

բ) Բ տեսակի հետազոտությունը

Բ տեսակի հետազոտության կատարելիս հնարավոր է հայտնաբերել ԽԵԱՍԷ-ն առնվազն 50 000-ը մեկին հարաբերության կառուցվածքով համապատասխան երկրի կամ տարածաշրջանի մեծահասակ խոշոր եղջերավոր անասունների պոպուլյացիայում, 95 % վստահության աստիճանով;

Բ տեսակի հետազոտություն կարող է կատարվել ԽԵԱՍԷ-ի աննշան ռիսկի կարգավիճակ ունեցող երկրներում կամ տարածաշրջաններում՝ հաստատելու համար ռիսկի գնահատման եզրակացությունները, օրինակ՝ ցույց տալու համար հայտնաբերված ռիսկային գործոնները մեղմելուն ուղղված միջոցների արդյունավետությունը՝ նպատակ ունենալով նման հետազոտության միջոցով մեծացնելու նման միջոցների ձախողման դեպքերի հայտնաբերման հավանականությունը:

Բ տեսակի հետազոտություն կարող է կատարվել նաեւ վերահսկվող ԽԵԱՍԷ-ի ռիսկի կարգավիճակ ունեցող երկրներում եւ տարածաշրջաններում՝ Ա տեսակի հետազոտության թիրախային նպատակի ձեռքբերումներից հետո, որպեսզի Ա տեսակի հետազոտության միջոցով ձեռք բերված տեղեկություններն առավել վստահելի լինեն:

Սույն հավելվածի նպատակներից ելնելով՝ հետազոտական նպատակներով սահմանվել են խոշոր եղջերավոր անասունների ենթապոպուլյացիաների հետեյալ չորս խմբերը՝

- ա) 30 ամսականից մեծ խոշոր եղջերավոր անասուններ, որոնք ցուցաբերում են ԽԵԱՍԷ վարքին հատուկ կամ կլինիկական նշաններ (կլինիկական տեսանկյունից կասկածելի կենդանիներ).
- բ) 30 ամսականից մեծ խոշոր եղջերավոր անասուններ, որոնք պառկած են, հենված են, չեն կարող բարձրանալ կամ քայլել առանց օժանդակության. 30 ամսականից մեծ խոշոր եղջերավոր անասուններ, որոնք ուղարկվում են հրատապ սպանդի կամ ոչ նորմալ հետազոտություն անցնելուց հետո ուղարկվում են նախասպանդային ստուգման (պատահարից սատկած կամ հրատապ սպանդի ենթարկված կենդանի.)
- գ) 36 ամսականից մեծ խոշոր եղջերավոր անասուններ, որոնք ֆերմայում, տեղափոխման ժամանակ կամ սպանդանոցում հայտնաբերվել են սատկած կամ սպանված (սատկած անասուններ).
- դ) սովորական սպանդի ժամանակ 36 ամսականից մեծ խոշոր եղջերավոր անասուններ:

2. Հետազոտության ռազմավարությունը

2.1. Հետազոտության ռազմավարությունը պետք է կազմվի այնպես, որ նմուշներով ապահովվի երկրում կամ տարածաշրջանում տվյալ հոտի ներկայացուցչությունը եւ ներառի դեմոգրաֆիկ գործոններ, ինչպես օրինակ՝ արտադրության տեսակը եւ աշխարհագրական տեղանքն ու տնտեսավարման մշակույթին հատուկ գործելակերպերի պոտենցիալ ազդեցությունը: Օգտագործված մոտեցումը եւ կատարված ենթադրությունները պետք է լիովին հիմնավորվեն փաստաթղթերով, եւ այդ փաստաթղթերը պետք է պահպանվեն յոթ տարի:

2.2. ԽԵԱՍԷ հայտնաբերելու հետազոտական ռազմավարությունն իրականացնելու նպատակով երկիրը պետք է օգտագործի փաստաթղթերով հիմնավորված տվյալներ կամ վստահելի գնահատումներ մեծահասակ խոշոր եղջերավոր անասունների պոպուլյացիայի տարիքային բաշխման եւ տվյալ երկրում կամ տարածաշրջանում ԽԵԱՍԷ փորձաստուգում անցած խոշոր եղջերավոր անասունների թվի մասին՝ ըստ տարիքի եւ ենթապոպուլյացիայի:

3. Բալերի արժեքները եւ թիրախային բալեր

Հետազոտության նմուշները պետք է համապատասխանեն 2-րդ աղյուսակում սահմանված թիրախային բալին 1-ին աղյուսակում ամրագրված բալերի արժեքների հիման վրա: Կլինիկական տեսանկյունից կասկածվող կենդանիները պետք է հետաքննվեն՝ անկախ հավաքված բալերի թվից: Երկիրը պետք է նմուշ վերցնի չորս ենթապոպուլյացիաներից առնվազն երեքից: Նմուշների ընդհանուր բալերը պետք է գումարվեն առավելագույնը յոթ հաջորդական տարիների ընթացքում՝ ձեռք բերելու համար թիրախային բալերի թիվը: Կուտակված բալերի թիվը պարբերաբար պետք է համեմատվի երկրի կամ տարածաշրջանի համար թիրախային բալերի թվի հետ:

Աղյուսակ 1

Հետազոտության բալերի արժեքը որոշակի ենթապոպուլյացիայում որոշակի տարիքային կատեգորիայի կենդանիներից հավաքված նմուշների համար

Հետազոտության ենթապոպուլյացիան			
Սովորական սպանդ (1)	Սատկած անասուններ (2)	Դժբախտ պատահարների հետեւանքով սպանդ (3)	Կլինիկական տեսանկյունից կասկածվող կենդանի (4)
Տարիք ≥ 1 տարի եւ < 2 տարի			
0,01	0,2	0,4	չկա
Տարիք ≥ 2 տարի եւ < 4 տարի (փոքր տարիքի)			
0,1	0,2	0,4	260
Տարիք ≥ 4 տարի եւ < 7 տարի (միջին տարիքի)			
0,2	0,9	1,6	750
Տարիք ≥ 7 տարի եւ < 9 տարի (առավել մեծ տարիքի)			
0,1	0,4	0,7	220

Տարիք ≥ 9 տարի (մեծահասակ)			
0,0	0,1	0,2	45
<p>1) 36 ամսական խոշոր եղջերավոր անասունները սովորական սպանդի ժամանակ</p> <p>2) 30 ամսական խոշոր եղջերավոր անասունները, որոնց ֆերմայում տեղափոխման ժամանակ կամ սպանդանոցում հայտնաբերել են սատկած կամ սպանված, (սատկած անասուններ)</p> <p>3) 30 ամսականից մեծ խոշոր եղջերավոր անասուններ, որոնք պատկած են, հենված են, չեն կարող բարձրանալ կամ քայլել առանց օժանդակության. 30 ամսականից մեծ խոշոր եղջերավոր անասուններ, որոնք ուղարկվում են հրատապ սպանդի կամ ոչ նորմալ հետազոտություն անցնելուց հետո ուղարկվում են նախասպանդային ստուգման (պատահարից սատկած կամ հրատապ սպանդի ենթարկված կենդանի.)</p> <p>4) 30 ամսականից մեծ խոշոր եղջերավոր անասուններ, որոնք ԽԵԱՍԷ վարքի հատուկ կամ կլինիկական նշաններ են ցուցաբերում (կլինիկական տեսանկյունից կասկածելի կենդանիներ).</p>			

Աղյուսակ 2

Երկրում կամ տարածաշրջանում մեծահասակ խոշոր եղջերավոր կենդանիների պոպուլյացիայի տարբեր չափերի համար թիրախային բալեր

Երկրների կամ տարածաշրջանների թիրախային բալերը		
Մեծահասակ խոշոր եղջերավոր անասունների պոպուլյացիայի չափը (24 ամսական եւ ավելի մեծ)	Ա տեսակի հետազոտություն	Բ տեսակի հետազոտություն

≥ 1 000 000	300 000	150 000
800 000-1 000 000	240 000	120 000
600 000-800 000	180 000	90 000
400 000-600 000	120 000	60 000
200 000-400 000	60 000	30 000
100 000-200 000	30 000	15 000
50 000-100 000	15 000	7 500
25 000-50 000	7 500	3 750

4. Հատուկ թիրախային նպատակը

Երկրում կամ տարածաշրջանում վերոնշյալ յուրաքանչյուր ենթապոպուլյացիայի դեպքում երկիրը կարող է որպես թիրախ ընդունել խոշոր եղջերավոր կենդանիներին, որոնք առանձնացված են որպես ներկրված կենդանիներ այն երկրներից կամ տարածաշրջաններից, որտեղ ԽԵԱՍԷ է հայտնաբերվել կամ այն խոշոր եղջերավոր անասուններին, որոնք պոտենցիալ կերպով ախտահարված կեր են սպառել ԽԵԱՍԷ վարակի հայտնաբերման երկրներում կամ տարածաշրջաններում:

5. ԽԵԱՍԷ հետազոտության մոդելը

Երկրում կարող է օգտագործվել միայն ԽՀետԵ մոդել կամ ԽՀետԵ մոդելի հիման վրա այլընտրանքային մոդել՝ ԽԵԱՍԷ-ի առկայությունը/տարածվածությունը գնահատելու համար:

6. Ինսամքի վերահսկողությունը

Երբ թիրախային բալերը հավաքվում են, եւ որպեսզի երկիրը կամ տարածաշրջանը ստանա ԽԵԱՍԷ վերահսկվող կամ աննշան ռիսկի երկրի կամ տարածաշրջանի կարգավիճակ, հետազոտությունը կարող է կատարվել Բ տեսակի մակարդակով (պայմանով, որ մյուս բոլոր ցուցիչները մնան դրական): Այնուամենայնիվ, սույն Գլխի պահանջների պահպանումը շարունակելու նպատակով, պետք է շարունակվի ընթացիկ տարեկան հետազոտությունը, որի շրջանակում պետք է հետազոտվեն չորս ենթապոպուլյացիաներից առնվազն երեքը: Բացի դրանից՝ խոշոր եղջերավոր բոլոր անասունները, որոնք կլինիկական տեսանկյունից

վարակված են ԽԵԱՍԷ վարակով, պետք է հետազոտվեն՝ անկախ հավաքված բալերի թվից: Երկրում կամ տարածաշրջանում հետազոտությունը, որը կատարվում է թիրախային բալերը հավաքելուց հետո, չպետք է Բ տեսակի հետազոտության թիրախի համար պահանջվող մեկ յոթերորդից պակաս լինի:

▼M13

ԴԻՏԱՆՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ Ա

ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԴԻՏԱՆՑՈՒՄԸ

1. Ընդհանուր դրույթները

Խոշոր եղջերավոր անասունների դիտանցումը կատարվում է X հավելվածի Գ գլխի 3(1)(բ) կետում սահմանված լաբորատոր մեթոդների համաձայն:

2. Մարդու կողմից սպառման նպատակով սպանդի ենթարկված կենդանիների դիտանցումը

2.1. Խոշոր եղջերավոր բոլոր կենդանիները, որոնք 24 ամսական կամ ավելի են՝

ենթակա են «հատուկ հրատապ սպանդի», ինչպես սահմանված է Խորհրդի 64/433/ԵՏՀ հրահանգում (20), կամ

սպանդի են ենթարկվել 64/433/ԵՏՀ հրահանգի I հավելվածի VI գլխի 28(գ) կետի համաձայն՝ բացառությամբ այն կենդանիների, որոնք չունեն հիվանդության կլինիկական նշաններ եւ հիվանդությունը վերացնելու ծրագրի շրջանակում սպանդի չեն ենթարկվել,

պետք է անցնեն ԽԵԱՍԷ փորձաստուգում:

2.2. Խոշոր եղջերավոր բոլոր կենդանիները, որոնք 30 ամսական կամ ավելի են՝

որոնք նախատեսված են մարդու կողմից սպառման նպատակով նորմալ սպանդի ենթարկվելու համար,

սպանդի են ենթարկվել 64/433/ԵՏՀ հրահանգի I հավելվածի VI գլխի 28(գ) կետի համաձայն, հիվանդությունը վերացնելու ծրագրի շրջանակում

պետք է անցնեն ԽԵԱՍԷ փորձաստուգում:

▼M2 _____

▼M13

3. Մարդու կողմից սպառման նպատակով սպանդի ենթարկված կենդանիների դիտանցումը

3.1. 24 ամսականից մեծ բոլոր խոշոր եղջերավոր անասունները, որոնք սատկել կամ սպանդի են ենթարկվել, բայց

չեն սպանվել ոչնչացման նպատակով՝ Հանձնաժողովի թիվ 716/96 կանոնակարգի (21) համաձայն (21),

չեն սպանվել համաճարակի պատճառով, ինչպես, օրինակ՝ դաբաղի դեպքում

սպանդի չեն ենթարկվել մարդու կողմից սպառման նպատակով

պետք է անցնեն ԽԵԱՍԷ փորձաստուգում:

3.2. Անդամ պետությունները կարող են որոշել շեղում կատարել 3.1 կետի դրույթներից կենդանիներով քիչ բնակեցված հեռավոր տարածաշրջաններում, որտեղ սատկած կենդանիների մարմինների հավաքում չի կազմակերպվում: Այս շեղումից օգտվող անդամ պետությունները տեղեկացնում են Հանձնաժողովին դրա մասին եւ նրան են ներկայացնում շեղման տարածման տարածքների ցանկը: Այս շեղման գործողությունը չի տարածվում անդամ պետության խոշոր եղջերավոր անասունների պոպուլյացիայի 10%-ից ավելի անասունների վրա:

▼M26

4. Թիվ 716/96 կանոնակարգի համաձայն՝ ոչնչացման համար գնված կենդանիների դիտանցումը

1995 թվականի օգոստոսի 1-ից մինչև 1996 թվականի օգոստոսի 1-ն ընկած ժամանակաշրջանում ծնված բոլոր կենդանիները, որոնց, թիվ 716/96 կանոնակարգի (ԵՀ) համաձայն, սպանել են՝ ոչնչացման նպատակով, պետք է ԽԵԱՍԷ-ն հայտնաբերելու նպատակով փորձաստուգվեն:

▼M13

5. Այլ կենդանիների դիտանցումը

2–4–րդ կետերում նշված փորձաստուգումից բացի՝ անդամ պետությունները կարող են կամավոր հիմունքներով որոշել փորձաստուգման ենթարկել իրենց տարածքում գտնվող

մյուս կենդանիներին, հատկապես այն կենդանիներին, որոնք բերվել են տեղին հատուկ ԽԵԱՍԷ ունեցող երկրներից, կերել են պոտենցիալ կերպով ախտահարված կեր կամ ծնվել կամ եկել են ԽԵԱՍԷ-ով վարակված գոմերից:

6. Փորձաստուգումից հետո ձեռնարկվող միջոցները

6.1. Եթե մարդու կողմից սպառման նպատակով սպանդի ենթարկված կենդանին ընտրվել է ԽԵԱՍԷ հայտնաբերելու նպատակով փորձաստուգման համար, ապա 64/433/ԵՏՀ հրահանգի I հավելվածի XI գլխում սահմանված առողջության մասին նշադրում չպետք է դրվի կենդանու մսեղիքի վրա, քանի դեռ արագացված փորձաստուգումը բացասական արդյունք ցույց չի տվել:

6.2. Անդամ պետությունները կարող են շեղում կատարել 6.1 կետի դրույթներից, եթե սպանդանոցում գործում է պաշտոնական համակարգ, որն ապահովում է, որ զննված կենդանիների մասերը, որոնց վրա կա առողջ լինելու մասին նշադրում, հեռացվեն սպանդանոցից, քանի դեռ արագացված փորձաստուգումը բացասական արդյունք ցույց չի տվել:

▼M42

6.3.

ԽԵԱՍԷ համար փորձաստուգված կենդանիների մարմնի բոլոր մասերը՝ ներառյալ կաշին, պետք է պահվի պաշտոնական վերահսկողության տակ մինչև արագացված փորձաստուգման բացասական արդյունքը, բացառությամբ եթե դրանք հեռացվել են Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 1774/2002 կանոնակարգի 4(2)(ա), (բ) կամ (ե) հոդվածի համաձայն:

6.4. Եթե ստացվել է դրական արդյունք կամ արդյունքները համոզիչ չեն, ապա կենդանու մարմնի բոլոր մասերը՝ ներառյալ կաշին, պետք է ոչնչացվի թիվ 1774/2002 կանոնակարգի 4(2)(ա), (բ) կամ (ե) հոդվածի համաձայն, բացի այն մասերից, որոնք փաստաթղթերի հետ միասին պահվում են՝ համաձայն Բ(III) գլխի:

▼M32

6.5.

Եթե արագացված փորձաստուգմամբ մարդու կողմից սպառման նպատակով սպանդի ենթարկված կենդանու մոտ առկա է եղել դրական կամ ոչ համոզիչ արդյունքներ, ապա պետք է 6.4 կետի համաձայն, առնվազն ոչնչացվեն դրական կամ ոչ համոզիչ արդյունք ցույց տված կենդանու փորձաստուգմանը անմիջապես նախորդող մեկ եւ անմիջապես հետեւող երկու մսեղիքները: Շեղման կարգով անդամ պետությունները կարող են որոշել ոչնչացնել վերոնշյալ մսեղիքները միայն այն դեպքում, եթե արագացված փորձաստուգման արդյունքները հաստատվել են որպես դրական կամ ոչ համոզիչ՝ X հավելվածի, Գ գլխի 3.1(բ) կետում նշված՝ հաստատող զննման միջոցով:

▼M13

6.6.

Անդամ պետությունները կարող են շեղում կատարել 6.5 կետի դրույթներից, եթե սպանդանոցում կա մսեղիքների միջեւ ախտահարումը կանխարգելելու համակարգ:

▼M38

7. ԽԵԱՍԷ-ի վերաբերյալ տարեկան դիտանցման ծրագրերի վերանայումը, ինչպես սահմանված է 6(1բ) հոդվածում

7.1. Անդամ պետությունների դիմումները

Անդամ պետությունների կողմից Հանձնաժողով ներկայացված՝ ԽԵԱՍԷ դիտանցման տարեկան ծրագրերը վերանայելու դիմումները ներառում են առնվազն հետեւյալը՝

- ա) անդամ պետության տարածքում ԽԵԱՍԷ տարեկան դիտանցման համակարգի գոյության մասին տեղեկություն վերջին վեց տարվա համար՝ ներառյալ մանրամասն փաստաթղթերը, որոնցով ապացուցվում են 7.2 կետում սահմանված չափորոշիչների հետ համապատասխանությունը.
- բ) խոշոր եղջերավոր անասունների հայտնաբերման եւ հետազոման համակարգի մասին տեղեկություն, ինչպես նշված է 6(1բ) հոդվածի երրորդ ենթապարբերության (բ) կետում, որը գործում է նախորդ վեց տարվա ընթացքում անդամ պետության տարածքում՝ ներառյալ համակարգչային տվյալների բազայի գործադրման մասին մանրամասն նկարագրություն, ինչպես նշված է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 1760/2000 կանոնակարգի (ԵՀ) 5-րդ հոդվածում. (22)

գ) անդամ պետության տարածքում վերջին վեց տարվա ընթացքում կենդանական կերի մասին արգելքների վերաբերյալ տեղեկություն՝ ներառյալ ֆերմային կենդանիների համար կերակրային արգելքների կիրարկման մասին մանրամասն նկարագրությունը, ինչպես նշված է 6(1բ) հոդվածի երրորդ ենթապարբերության (գ) կետում՝ ներառյալ նմուշառման ծրագիրը եւ խախտումների թիվն ու տեսակը, ինչպես նաեւ դրանց հետետող գործողությունների արդյունքները.

դ) առաջարկվող ԽԵԱՍԷ դիտանցման համար վերանայված ծրագրի առաջարկի մասին մանրամասն նկարագրություն, որը ներառում է աշխարհագրական այն տարածքը, որտեղ ծրագիրը պետք է իրականացվի եւ այդ ծրագրով կարգավորվող՝ խոշոր եղջերավոր անասունների ենթապոպուլյացիաների նկարագրությունը, այդ թվում՝ տարիքային սահմանափակումներն ու փորձաստուգման նմուշառման չափը.

ե) համապարփակ ռիսկի գնահատման արդյունքը, որը ցույց է տալիս, որ վերանայված ԽԵԱՍԷ դիտանցման ծրագիրը կապահովի մարդու եւ կենդանիների առողջության պաշտպանությունը: Ռիսկի գնահատումը ներառում է տարիքային կոհորտի վերլուծության եւ մյուս համապատասխան ուսումնասիրությունները, որոնց նպատակը ցույց տալն է, որ ԽԵԱՍԷ-ի ռիսկը նվազեցնող միջոցները, այդ թվում՝ կերային արգելքները, ինչպես նշված է 6(1բ) հոդվածի երրորդ ենթապարբերության (գ) կետում, արդյունավետորեն են իրականացվել:

7.2. Համաճարակաբանական չափորոշիչները

ԽԵԱՍԷ դիտանցման ծրագրի վերանայման համար ներկայացվող դիմումը կարող է հաստատվել միայն այն դեպքում, եթե համապատասխան անդամ պետությունը կարող է ցույց տալ, որ 6(1բ) հոդվածի երրորդ ենթապարբերության (ա), (բ) եւ (գ) կետերում սահմանված պահանջներից բացի՝ իր տարածքում բավարարված են հետեւյալ համաճարակաբանական չափորոշիչները՝

ա) առնվազն վեց իրար հաջորդող տարիների ընթացքում, որոնք հետետում են ԽԵԱՍԷ Համայնքի փորձաստուգման ծրագրի իրականացման ամսաթվին, ինչպես նշված է 6(1բ) հոդվածի երրորդ ենթապարբերության (բ) կետում.

կամ

ԽԵԱՍԷ դեպքերի դիտարկված տոկոսադրույքը միջինն իջել է 20 %-ից ավելի մեծահասակ խոշոր եղջերավոր կենդանիների պոպուլյացիայի շրջանում. եւ Համայնքի կողմից ֆերմային

կենդանիների նկատմամբ կերային ընդհանուր արգելքի կիրառումից հետո ծնված անասունների ընդհանուր թիվը, որոնք վարակվել են ԽԵԱՍԷ-ով, չի գերազանցել ԽԵԱՍԷ հաստատված դեպքերի ընդհանուր թվի 5 %-ը, ինչպես նշված է 6(1բ) հոդվածում.

կամ

ԽԵԱՍԷ դեպքերի դիտարկված տոկոսադրույքը մեծահասակ խոշոր եղջերավոր կենդանիների պոպուլյացիայում (24 ամսականից բարձր) տարեկան կտրվածքով հաստատուն կերպով մնացել է 1/100 000-ից պակաս.

կամ

որպես անդամ պետություններին տրվող տարբերակ՝ մեծահասակ խոշոր եղջերավոր կենդանիների պոպուլյացիայում (24 ամսականից բարձր), որը ներառում է 1 000 000-ից պակաս կենդանիներ, ԽԵԱՍԷ հաստատված դեպքերի կուտակային թիվը մնացել է հինգից պակաս.

բ) (ա) կետում նշված վեց տարվա ժամանակահատվածից հետո փաստեր չկան, որ ԽԵԱՍԷ համաճարակաբանական իրավիճակը վատացել է:

▼M32

II. ՈՉԽԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՅԾԵՐԻ ԴԻՏԱՆՑՈՒՄԸ

1. Ընդհանուր դրույթները

Ոչխարների եւ այծերի դիտանցումը կատարվում է X հավելվածի, Գ գլխի, 3.2(բ) կետում սահմանված լաբորատոր մեթոդների համաձայն:

2. Մարդու կողմից սպառման նպատակով սպանդի ենթարկված կենդանիների դիտանցումը

ա) այն անդամ պետություններում, որտեղ մեծացնելու նպատակով պահվող ոչխարների եւ ոչխարների ձագերի պոպուլյացիան գերազանցում է 750 000 կենդանին, փորձաստուգվում են 4-րդ կետում սահմանված նմուշառման կանոնների համաձայն՝ ներառելով մարդու կողմից սպառման նպատակով սպանդի ենթարկված 10 000 ոչխարներից կազմված նվազագույն տարեկան նմուշ.

բ) այն անդամ պետություններում, որտեղ այծերի՝ արդեն ձագ ունեցած եւ զուգավորված պոպուլյացիան գերազանցում է 750 000-ը, պետք է 4-րդ կետում սահմանված նմուշառման

կանոնների համաձայն, փորձաստուգում անցնեն՝ ներառելով մարդու կողմից սպառման նպատակով սպանդի ենթարկված 10 000 այծերից կազմված նվազագույն տարեկան նմուշ.

Եթե անդամ պետությունը դժվարությունների է հանդիպում բավարար թվով սպանդի ենթարկված առողջ ոչխար կամ այծ հավաքելու հարցում, որպեսզի նմուշառում կատարի իրեն սահմանված նվազագույն չափին համապատասխան, ինչպես սահմանված է (ա) եւ (բ) կետերում, ապա այն կարող է փոխարինել նվազագույն նմուշառման չափի առավելագույն 50 %-ին՝ փորձաստուգում կատարելով սատկած՝ 18 ամսականից բարձր ոչխարների կամ այծերի վրա մեկը մեկի հարաբերությամբ՝ դրան ավելացնելով 3-րդ կետում սահմանված նվազագույն նմուշառման չափը: Բացի դրանից՝ անդամ պետությունը կարող է փոխարինել իր նվազագույն նմուշառման չափի առավելագույնը 10 %-ին՝ փորձաստուգում կատարելով 18 ամսականից բարձր ոչխարների կամ այծերի վրա, որոնք սպանվել են հիվանդության դեմ պայքարի ծրագրի շրջանակում՝ մեկը մեկի հարաբերությամբ:

3. Մարդու կողմից սպառման նպատակով սպանդի չենթարկված ոչխարների եւ այծերի դիտանցումը

Անդամ պետությունները 4-րդ կետում սահմանված նմուշառման կանոնների համաձայն եւ Ա աղյուսակում ու Բ աղյուսակում նշված նմուշառման նվազագույն չափով պետք է փորձաստուգեն այն ոչխարներին կամ այծերին, որոնք սատկել կամ սպանվել են, բայց որոնք՝

- չեն սպանվել հիվանդության դեմ ծրագրի շրջանակում.
- սպանդի չեն ենթարկվել մարդու կողմից սպառման նպատակով:

Աղյուսակ Ա

Բտման համար պահված մաքիների եւ գառների պոպուլյացիան անդամ պետությունում	Սատկած ոչխարներից վերցված նվազագույն նմուշառման չափը (1)
> 750 000	10 000
100 000-750 000	1 500

40 000-100 000	100 % մինչև 500
< 40 000	100 % մինչև 100
1) նմուշառման նվազագույն չափը որոշելիս հաշվի է առնվում ոչխարների պոպուլյացիայի չափը առանձին անդամ պետություններում՝ նպատակ ունենալով ձեռք բերելու հասանելի շեմեր:	

Աղյուսակ Բ

Անդամ պետության՝ ձագ ունեցած եւ զուգավորված այծերի պոպուլյացիան	Սատկած այծերի նմուշառման նվազագույն չափը (1)
> 750 000	10 000
250 000-750 000	1 500
40 000-250 000	100 % մինչև 500
< 40 000	100 % մինչև 100
1) Նվազագույն նմուշառման չափը որոշելիս հաշվի է առնվում այծերի պոպուլյացիայի չափը առանձին անդամ պետություններում՝ նպատակ ունենալով ձեռք բերելու հասանելի շեմեր:	

4. 2-րդ եւ 3-րդ կետերում նշված կենդանիների համար կիրառելի նմուշառման կանոնները Կենդանիները պետք է լինեն 18 ամսականից բարձր եւ լնդերից պետք է դուրս եկած լինեն երկուսից ավելի հիմնական կտրիչ ատամներ:

Կենդանիների տարիքը պետք է գնահատվի դուրս եկած ատամներով, հասունության ակնհայտ նշաններով կամ որեւէ այլ վստահելի տեղեկության հիման վրա:

Նմուշառման ընտրությունը պետք է կատարվի՝ նպատակ ունենալով խուսափելու ցանկացած խմբի գերներկայացուցչությունից՝ կապված ծագում ունեցող, տարիքի, ցեղի, արտադրության տեսակի կամ որեւէ այլ բնորոշիչ հատկության հետ:

Նմուշառումը պետք է ներկայացուցչական լինի յուրաքանչյուր տարածաշրջանի եւ սեզոնի առումով: Միեւնույն խմբում մի քանի նմուշառումից պետք է խուսափել, որքան հնարավոր է: Անդամ պետությունները պետք է նպատակաուղղեն իրենց դիտանցման ծրագրերը նրան այն բանին, որ դիտանցման ծրագրերը հնարավորություն դեպքում հաջորդական բոլոր նմուշառման տարիների ընթացքում պաշտոնապես գրանցված 100-ից ավելի կենդանի ունեցող անասնագոմերը եւ այն տեղերը, որտեղ ՓՍԷ-ի դեպք չի հայտնաբերվել, ենթարկվեն ՓՍԷ-ի փորձաստուգման:

Անդամ պետությունները պետք է ներմուծեն վերահսկողական համակարգ շեմային կամ մեկ այլ հիմքով, որպեսզի կենդանիները դուրս չմնան նմուշառման շրջանակից:

Այնուամենայնիվ, անդամ պետությունները կարող են բացառել նմուշառումից կենդանիներով քիչ բնակեցրած ծայրամասային տարածքները, որտեղ սատկած կենդանիների հավաքում չի կազմակերպվում: Այս շեղումից օգտվող անդամ պետությունները պետք է դրա մասին տեղեկացնեն Հանձնաժողովին եւ պետք է ներկայացնեն այն ծայրամասային տարածքների ցուցակը, որտեղ կիրառվում է շեղումը: Այս շեղման գործողությունը չի տարածվում անդամ պետության ոչխարների եւ այծերի պոպուլյացիայի 10%-ից ավելի անասունների վրա:

5. Վարակված անասունների դիտանցումը

Այն կենդանիները, որոնք 18 ամսականից բարձր են կամ որոնք ունեն լինող ծակած երկու հիմնական կտրիչ առամ եւ որոնք, VII հավելվածի 2.3(բ)(i) կամ (ii) կամ 5(ա) կետի համաձայն, սպանվել են ոչնչացման նպատակով, պետք է փորձաստուգում անցնեն պարզ պատահական ընտրության նմուշառման սկզբունքով՝ հետեյալ աղյուսակում նշված նմուշառման մեծության համաձայն:

18 ամսականից մեծ կամ լնդերից դուրս եկած երկուսից ավելի հիմնական կտրիչներ ունեցող կենդանիների թիվը , որոնք հոտում կամ կենդանիների խմբում սպանվել են ոչնչացման նպատակով	Նմուշառման նվազագույն չափը
---	----------------------------

70 կամ պակաս	Բոլոր թույլատրելի կենդանիները
80	68
90	73
100	78
120	86
140	92
160	97
180	101
200	105
250	112
300	117
350	121
400	124
450	127
500 կամ ավելի	150

6. Այլ կենդանիների դիտանցումը

2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերում սահմանված դիտանցման ծրագրերից բացի՝ անդամ պետությունները կարող են կամավոր հիմունքներով կատարել այլ կենդանիների դիտանցում, մասնավորապես՝

- կաթնամթերքի արտադրության համար օգտագործվող կենդանիները.
- տեղանքին հատուկ ՓՄԷ ունեցող երկրներից բերված կենդանիները.

– կենդանիներ, որոնք կերել են պոտենցիալ կերպով ախտահարված կերային նյութեր

– վարակված գոմերից ստացված կամ այդ գոմերում ծնված կենդանիները:

7. Ոչխարների եւ այծերի փորձաստուգմանը հետեւող միջոցները

7.1. Երբ մարդու կողմից սպառման նպատակով սպանդի ենթարկված ոչխարը կամ այծը, 2-րդ կետի համաձայն, ընտրվում է ՓՍԷ փորձաստուգման համար, ապա նրա մսեղիքի վրա առողջության մասին նշադրում չպետք է կատարվի, որը պահանջվում է թիվ 854/2004 կանոնակարգի I հավելվածի III գլխի I բաժնի համաձայն, քանի դեռ արագացված փորձաստուգումը բացասական արդյունք ցույց չի տվել:

7.2. Անդամ պետությունները կարող են շեղում կատարել 7.1. կետից, եթե սպանդանոցում գործում է իրավասու մարմնի կողմից հաստատված համակարգ, որն ապահովում է, որ կենդանու բոլոր մասերը հնարավոր լինի դիտարկել, եւ որ կենդանու ոչ մի մաս, որն առողջության մասին նշադրում ունի, չհեռացվի սպանդանոցից՝ մինչեւ արագացված փորձաստուգումը բացասական արդյունք ցույց չտա:

7.3. Փորձաստուգված կենդանու մարմնի բոլոր մասերը պահվում են պաշտոնական վերահսկողության տակ՝ մինչեւ արագացված փորձաստուգման բացասական արդյունք ստանալը՝ բացի կենդանական ծագման օժանդակ արտադրանքից, որն անմիջապես հեռացվում է՝ թիվ 1774/2002 կանոնակարգի (ԵՀ) 4(2)(ա), (բ) կամ (ե) հոդվածի համաձայն:

7.4. Բացառությամբ սույն հավելվածի III մասի Բ գլխում սահմանված տվյալները արձանագրելու համար պահպանվող նյութերի՝ արագացված փորձաստուգման ժամանակ դրական արդյունք ցույց տված կենդանու մարմնի բոլոր մասերը՝ ներառյալ կաշին, պետք է ուղղակիորեն ոչնչացվի՝ թիվ 1774/2002 կանոնակարգի (ԵՀ) 4(2)(ա), (բ) կամ (ե) հոդվածի համաձայն:

8. Գենոտիպավորումը

8.1. Ոչխարի մոտ յուրաքանչյուր ՓՍԷ դրական դեպքում սահմանվում է 136, 154 եւ 171 կոդոնների համար պրիոն սպիտակուցային գենոտիպը: Ոչխարի մոտ հայտնաբերված այնպիսի գենոտիպով ՓՍԷ դեպքերը, որոնք կոդոն 136 մակարդակում երկու ալելի վրա ծածկագրված ունեն ալանին, կոդոն 154 մակարդակում երկու ալելի վրա՝ անգինին եւ կոդոն 171 մակարդակում երկու ալելի վրա՝ արգինին, անմիջապես տեղեկացվում են Հանձնաժողովին: Եթե դրական ՓՍԷ դեպքը ոչ տիպային քորոկ հիվանդությունն է, ապա 141 կոդոնի համար պետք է սահմանվի պրիոն սպիտակուցային գենոտիպը:

8.2. կետի համաձայն գենոտիպավորված կենդանիներից բացի՝ պետք է սահմանվի 136, 141, 154 եւ 171 կոդոնների դեպքում պրիոն սպիտակուցային գենոտիպը՝ ոչխարների նվազագույն նմուշի հիման վրա: 750 000-ից ավելի մեծահասակ ոչխարների պոպուլյացիա ունեցող անդամ պետությունների դեպքում, այդ նվազագույն նմուշը բաղկացած է առնվազն 600 կենդանուց: Այլ անդամ պետությունների դեպքում նվազագույն նմուշ պետք է վերցնել առնվազն 100 կենդանուց: Նմուշներ կարելի է վերցնել մարդու կողմից սպառման համար սպանդի ենթարկված կենդանիներից, սատկած կենդանիներից կամ կենդանի կենդանիներից: Նմուշները պետք է ներկայացուցչական լինեն ոչխարների ամբողջ պոպուլյացիայի համար:

▼M18

III. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՅԼ ՏԵՍԱԿԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԴԻՏԱՆՑՈՒՄԸ

Անդամ պետությունները կարող են կամավոր հիմունքներով կատարել խոշոր եղջերավոր կենդանիներից, ոչխարներից եւ այծերից բացի այլ տեսակի կենդանիների դիտանցում՝ ՓՍԷ հայտնաբերելու համար:

ԳԼՈՒԽ Բ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ա. Տարեկան հաշվետվության մեջ անդամ պետությունների կողմից պարտադիր ներկայացվող տեղեկությունները, ինչպես սահմանված է 6(4) հոդվածում

1. Տեղաշարժման պաշտոնական սահմանափակումների դրված կասկածվող կենդանիների թիվը՝12(1) հոդվածի համաձայն՝ կենդանու յուրաքանչյուր տեսակի համար:
2. Լաբորատոր զննման ենթակա կասկածվող կենդանիների թիվը՝ 12(2) հոդվածի համաձայն՝ կենդանու յուրաքանչյուր տեսակի համար՝ ներառյալ արագացված եւ հաստատող փորձաստուգումների արդյունքները (դրական եւ բացասական դեպքերի թիվը), իսկ խոշոր եղջերավոր անասունների առումով՝ փորձաստուգված կենդանիների տարիքային բաշխման գնահատականը: Տարիքային բաշխումը հնարավորության դեպքում պետք է խմբավորվի հետեւյալ ձեւով՝ «24 ամսականից ցածր», 24 եւ 155 ամսականների միջեւ՝ ըստ յուրաքանչյուր 12 ամսվա բաշխվածության եւ «155 ամսականից բարձր»:

3. Հոտերի թիվը, եթե հիվանդ կասկածվող ոչխարների եւ այծերի դեպքերի մասին զեկուցվել ու հետաքննվել են 12(1) եւ (2) հոդվածի համաձայն
4. Խոշոր եղջերավոր անասունների թիվը Ա գլխի, (I) մասի 2.1., 2.2., 2.3., 3.1., 4.1., 4.2., 4.3. եւ 5-րդ կետերում նշված յուրաքանչյուր ենթապոպուլյացիայում: Նմուշառման մեթոդը, արագացված եւ հաստատող փորձաստուգումները եւ փորձարկված կենդանիների տարիքային բաշխվածությունը, ըստ 2-րդ կետում նշված խմբավորումների, պետք է տրամադրվի:
5. Ա գլխի II մասի 2-րդ, 3-րդ եւ 5-րդ կետերում նշված յուրաքանչյուր ենթապոպուլյացիայի ներսում փորձաստուգված ոչխարների եւ այծերի ու այլ անասունների թիվը՝ նմուշառման մեթոդի եւ արագացված ու հաստատող փորձաստուգումների արդյունքները:
6. ԽԵԱՍԷ դրական դեպքերի եւ քորուկ հիվանդության աշխարհագրական տարածվածություն՝ ներառյալ ծագում ունեցող երկիրը, եթե այդ երկիրը տարբերվում է հաշվետվություն ներկայացրած երկրից: Խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների եւ այծերի մոտ ՓՍԷ-ով վարակված յուրաքանչյուր կենդանու ծննդյան տարին եւ, եթե հնարավոր է՝ ամիսը: ՓՍԷ-ի այն դեպքերը, որոնք համարվել են ոչ տիպային եւ պատճառները, թե ինչու են դրանք ոչ տիպային: Քորուկով վարակված կենդանիների դեպքում, առաջնային մոլեկուլային փորձաստուգման արդյունքները X հավելվածի Գ գլխի 3.2.(c)(i) կետում նշված խտրական իմունառնչացման պարամետրերի հետ միասին պետք է զեկուցվեն:
7. Խոշոր եղջերավոր անասուններից, ոչխարներից եւ այծերից բացի այլ կենդանիների դեպքերում՝ նմուշառման թիվը եւ հաստատված ՓՍԷ դեպքերն ըստ տեսակների:
8. Ոչխարներից յուրաքանչյուրի գենոտիպը եւ, եթե հնարավոր է՝ ցեղատեսակը, որի մոտ կամ ՓՍԷ դրական դեպք է գրանցվել, կամ որն ընդգրկվել է Ա գլխի, II մասի, 8.1. եւ 8.2 կետերի համաձայն նմուշառման մեջ:

Բ. Հաշվետվությունները ներկայացնելու ժամկետները

8-րդ կետում նշված տեղեկությունների առումով Ա կետում նշված տեղեկություններ պարունակող հաշվետվությունները կազմվում եւ ուղարկվում են Հանձնաժողովին եռամսյակը մեկ, որոնք ընդգրկվում են 6(4) հոդվածով պահանջվող տարեկան հաշվետվության մեջ՝ պայմանով, որ տեղեկությունները թարմացվեն, երբ հասանելի են լինում նոր տվյալներ:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համառոտ տեղեկությունները ներկայացվում են աղյուսակի ձեւաչափով՝ ընդգրկելով յուրաքանչյուր անդամ պետության համար առնվազն I մասում նշած տեղեկությունները:

III. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

1. Իրավասու մարմինը յոթ տարվա ընթացքում պահում է հետեւյալ տվյալները՝

տեղաշարժման սահմանափակման դրված կենդանիների թիվը եւ տեսակը, ինչպես նշված է 12(1) հոդվածում.

լինիկական եւ համաճարակաբանական հետազոտությունների թիվը եւ արդյունքները, ինչպես նշված է 12(1) հոդվածում.

լաբորատոր ուսումնասիրությունների թիվը եւ արդյունքները, ինչպես նշված է 12(1) հոդվածում.

1 գլխում նշված դիտանցման ծրագրերի շրջանակում նմուշառված կենդանիների թիվը, նույնականացումը եւ ծագումը, իսկ հնարավորության դեպքում՝ դրանց տարիքը, ցեղատեսակը եւ անամնեստիկ տվյալները.

ոչխարի մոտ ՓՍԷ –ի դրական դեպքերի պրիոն հիվանդության սպիտակուցային գենոտիպը:

2. Հետազոտական լաբորատորիան յոթ տարվա ընթացքում տվյալներ է պահում փորձաստուգման մասին, մասնավորապես, լաբորատոր մատյաններում, իսկ հարկ եղած դեպքում՝ որպես պարաֆինից բլոկեր եւ իմունոբլոտինգի լուսանկարներ:

▼M22

ՀԱՎԵԼՎԱԾ IV

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

I. 7(1) հոդվածում սահմանված արգելքի ընդլայնումը

7(1) հոդվածում սահմանված արգելքը տարածվում է հետեւյալ կենդանիների կերակրման վրա՝

ա) ֆերմային կենդանիների, բացառությամբ գիշատիչ մորթատու կենդանիների կերակրման, հետեւյալ կերով՝

i) վերամշակված կենդանական սպիտակուց.

ii) որոճողների ծագմամբ դոնդող.

iii) արյունից ապրանքներ.

iv) հիդրոլիզացված սպիտակուց.

v) կենդանական ծագմամբ երկկալցիում ֆոսֆատ եւ եռակալցիում ֆոսֆատ (դիկալցիում ֆոսֆատ եւ տրիկալցիում ֆոսֆատ).

vi) (i) – (v) կետերում նշված սպիտակուցներ պարունակող կերային նյութեր:

բ) որոճողների՝ կենդանական սպիտակուցով եւ նման սպիտակուց պարունակող կերային նյութերով.

II. 7(1) եւ(2) հոդվածում սահմանված արգելքներից շեղումները եւ նման շեղումներ կիրառելու հատուկ պայմանները

Ա. 7(1) եւ(2) հոդվածում սահմանված արգելքներ չեն կիրառվում հետեւյալի նկատմամբ՝

ա) ֆերմային կենդանիներին (i), (ii), (iii) and (iv) կետերում նշված սպիտակուցներով եւ նման սպիտակուցներից առաջացած կերային նյութերով կերակրում՝

i) կաթ, կաթնային հիմքով ապրանքներ եւ խեժ.

ii) ձու եւ ձվամթերք.

iii) որոճողներին չպատկանող կենդանիներից դոնդող.

iv) որոճողներին չպատկանող կենդանիների մասերից եւ որոճողների կաշվից ու մաշկից ստացված հիդրոլիզացված սպիտակուցներ.

ա) որոճողներին չպատկանող ֆերմային կենդանիներին (i), (ii) եւ (iii) կետերում նշված սպիտակուցներով եւ նման սպիտակուցներից առաջացած կերով կերակրում՝

i) ձկնամթերք՝ Բ կետում սահմանված պայմանների համաձայն.

ii) դիկալցիում ֆոսֆատ եւ տրիկալցիում ֆոսֆատ՝ Գ կետում սահմանված պայմանների համաձայն.

iii) արյունից ստացվող արտադրանք, որն ստացվել է որոճողներին չպատկանող կենդանիներից՝ Դ կետում սահմանված պայմանների համաձայն.

գ) ձկներին արյունից ստացվող արտադրանքով կերակրում, որն ստացվել է որոճողներին չպատկանող կենդանիներից՝ Դ կետում սահմանված պայմանների համաձայն.

▼M43

դ) բուսական ծագում ունեցող կերային նյութերով եւ նման արտադրանք պարունակող կերով ֆերմային կենդանիների կերակրումը, որից հանվում են աննշան ոսկրային մնացորդները, կարող է թույլատրվել անդամ պետությունների կողմից, եթե կատարվել է դրական ռիսկի գնահատում: Ռիսկի գնահատման ժամանակ առնվազն հաշվի է առնվում ախտահարման քանակությունը եւ հնարավոր աղբյուրը, ինչպես նաեւ խմբաքանակի վերջնական նպատակավայրը.

▼M40

ե) մայրական կաթով սնվող որոճողներին պատկանող ֆերմային կենդանիների կերակրում ձկնամթերքով՝ ԲԱ կետում սահմանված պայմանների համաձայն:

▼M22

Բ. որոճողներին չպատկանող ֆերմային կենդանիների կերակրման ժամանակ Ա(բ)(i) կետում նշված ձկնամթերքի եւ ձկնամթերք պարունակող կերային նյութերի մեջ օգտագործման համար կիրառվում են հետեւյալ պայմանները (կիրառելի չէ գիշատիչ մորթատու կենդանիներին կերակրելու համար)՝

ա) ձկնամթերքը պետք է արտադրվի ձկնամշակման գործարաններում, որտեղ արտադրվում են բացառապես ձկներից ստացված ապրանքներ.

բ) նախքան Համայնքում ազատ շրջանառության համար բաց թողնելը, ներկրված ձկնամթերքի յուրաքանչյուր խմբաքանակ պետք է վերլուծության ենթարկվի միկրոսկոպի միջոցով՝ 2003/126/ԵՀ հրահանգի համաձայն.

գ) ձկնամթերք պարունակող կերային նյութն արտադրվում է այն ձեռնարկություններում, որոնք որոճողների համար նախատեսված կեր չեն արտադրում եւ որոնք արտոնված են այդ նպատակով իրավասու մարմնի կողմից:

Շեղում կատարելով (գ) կետից՝

i) հատուկ թույլտվություն չի պահանջվում ձկնամթերք պարունակող կերային նյութերից լիարժեք օրական կերաբաժինն ապահովող անասնակեր արտադրելու համար տեղի հետեյալ տեխնոլոգներից՝

– որոնք գրանցված են իրավասու մարմնի կողմից.

– որոնք պահում են միայն որոճողներին չպատկանող կենդանիներ.

– որոնք արտադրում են լիարժեք օրական կերաբաժինն ապահովող անասնակեր միայն տվյալ անասնագոմում օգտագործման համար. եւ

– պայմանով, որ արտադրության մեջ օգտագործվող ձկնամթերք պարունակող կերային նյութերի պարունակության մեջ անմշակ սպիտակուցը լինի 50 %-ից պակաս.

ii) որոճողների համար կերային նյութերի արտադրությունն այնպիսի հաստատություններում, որոնք արտադրում են ձկնամթերք պարունակող անասնակեր նաեւ կենդանիների այլ տեսակների համար, կարող է թույլատրվել իրավասու մարմնի կողմից՝ հետեյալ պայմանների համաձայն՝

– որոճողների համար նախատեսված չմանրակշռված եւ փաթեթավորված կերային նյութերը պահվում է այնպիսի տարածքում, որը պահեստավորման, տեղափոխման եւ փաթեթավորման ընթացքում ֆիզիկապես առանձնացած է չմանրակշռված ձկնամթերքից եւ չմանրակշռված ձկնամթերք պարունակող անասնակերի պահման վայրից.

– որոճողների համար նախատեսված կերային նյութերն արտադրվում են այնպիսի տարածքում, որը ֆիզիկապես տարանջատված է ձկնամթերք պարունակող անասնակերի արտադրության վայրից.

- ձկնամթերք գնելու եւ օգտագործելու եւ ձկնամթերք պարունակող կերային նյութերի վաճառքի մասին տվյալները հասանելի են իրավասու մարմնին առնվազն հինգ տարվա ընթացքում. եւ
- որոճողների համար նախատեսված կերային նյութերը ենթարկվել են ընթացիկ փորձաստուգման՝ ապահովելու համար, որ ձկնամթերք պարունակող արգելված սպիտակուցներ առկա չլինեն:

▼M40

- դ) ձկնամթերք պարունակող կերային նյութերի խմբաքանակին կցված առետրային փաստաթղթերի եւ նման խմբաքանակի փաթեթվածքի վրա պետք է հստակորեն նշված լինի «պարունակում է ձկնամթերք. արգելվում է կերակրել որոճողներին»:

▼M22

- ե) ձկնամթերք պարունակող չմանրակշռված կերային նյութերը պետք է տեղափոխվեն այնպիսի փոխադրամիջոցով, որը միեւնույն ժամանակ որոճողների համար կեր չի փոխադրում: Եթե փոխադրամիջոցը հետագայում պետք է օգտագործվի որոճողների համար կերային նյութեր տեղափոխելու համար, ապա այն պետք է մանրազնին մաքրվի իրավասու մարմնի կողմից հաստատված ընթացակարգի համաձայն՝ խաչաձեւ ախտահարումից խուսափելու համար:
- զ) ձկնամթերք պարունակող կերային նյութերի օգտագործումն ու պահեստավորումն արգելվում են այն ֆերմաներում, որտեղ պահվում են որոճող կենդանիներ:

Շեղում կատարելով այս պայմանից՝ իրավասու մարմինը կարող է թույլատրել ձկնամթերք պարունակող կերային նյութերի պահեստավորումը այն ֆերմաներում, որտեղ պահվում են որոճող կենդանիներ, եթե հաստատ է, որ ֆերմայում կիրառվող միջոցներ կան, որոնք կանխում են որոճող կենդանիներին ձկնամթերք պարունակող անասնակերով կերակրումը:

▼M40

- ԲԱ. մայրական կաթով սնվող որոճողներին ցեղին պատկանող ֆերմային կենդանիների կերակրման ժամանակ Ա(ե) կետում նշված ձկնամթերքի օգտագործման եւ ձկնամթերք պարունակող կերային նյութերում օգտագործման համար կիրառվում են հետեւյալ պայմանները՝

ա) ձկնամթերքն արտադրվում է ձկնամշակման գործարաններում, որտեղ բացառապես ձկներից ստացված ապրանքներ են արտադրվում .

բ) նախքան Համայնքում ազատ շրջանառության համար բաց թողնելը՝ ներկրված ձկնամթերքի յուրաքանչյուր խմբաքանակ պետք է վերլուծության ենթարկվի միկրոսկոպի միջոցով՝ 2003/126/ԵՀ հրահանգի համաձայն.

գ) որոճողների ցեղի մատղաշ ֆերմային կենդանիների համար ձկնամթերքի օգտագործումը թույլատրվում է միայն կաթին փոխարինող մթերքներում, որոնք առաքվում են չոր վիճակում եւ օգտագործվում են որոշակի քանակությամբ հեղուկի լուծույթի մեջ՝ նախատեսված մայրական կաթով սնվող որոճողներին առաջին կաթին հաջորդող շրջանում որպես սնման հավելյալ կեր կամ փոխարինող կեր՝ մինչեւ կաթով սնվելն ավարտելը.

գ) որոճողների ցեղի մատղաշ ֆերմային կենդանիների համար ձկնամթերք պարունակող կաթին փոխարինող կերը արտադրվում է այն հաստատություններում, որոնք չեն արտադրում որոճողների համար նախատեսված կերային նյութեր եւ որոնք այդ նպատակով արտոնված են իրավասու մարմնի կողմից:

(դ) կետից շեղում կատարելով՝ որոճողների համար նախատեսված այլ կերային նյութերի արտադրությունն այնպիսի հաստատություններում, որտեղ արտադրվում է նաեւ որոճողների ցեղի մատղաշ ֆերմային կենդանիների համար նախատեսված ձկնամթերք պարունակող կաթին փոխարինող մթերք, կարող է թույլատրվել իրավասու մարմնի կողմից հետեւյալ պայմանների համաձայն՝

i) որոճողների համար նախատեսված չմանրակշռված եւ փաթեթավորված մյուս կերային նյութերը պահվում են այնպիսի տարածքում, որը պահեստավորման, տեղափոխման եւ փաթեթավորման ընթացքում ֆիզիկապես առանձնացած է չմանրակշռված ձկնամթերքից եւ ձկնամթերք պարունակող չմանրակշռված կաթնամթերքի փոխարինողների պահման վայրից.

ii) որոճողների համար նախատեսված մյուս կերային նյութերն արտադրվում են այնպիսի տարածքում, որը ֆիզիկապես տարանջատված է ձկնամթերք պարունակող կաթնամթերքի փոխարինողների արտադրության վայրից.

– ձկնամթերք գնելու եւ օգտագործելու եւ ձկնամթերք պարունակող կաթնամթերքի փոխարինողների վաճառքի մասին տվյալները հասանելի են իրավասու մարմնին առնվազն հինգ տարվա ընթացքում. եւ

– որոճողների համար նախատեսված մյուս կերային նյութերը կանոնավորապես ենթարկվում են ընթացիկ փորձաստուգման՝ ապահովելու համար, որ ձկնամթերք պարունակող արգելված սպիտակուցներ առկա չլինեն: Արդյունքները պետք է հասանելի լինեն իրավասու մարմնին առնվազն հինգ տարվա ընթացքում.

ե) ձկնամթերք պարունակող՝ կաթին փոխարինող մթերքներին կից պետք է ներկայացվի առետրային փաստաթուղթ՝ նախատեսված որոճողների ցեղի մատղաշ ֆերմային կենդանիների համար եւ նման խմբաքանակի ցանկացած փաթեթավորման վրա պետք է հստակորեն նշվի հետեւյալ բառերը. «պարունակում է ձկնամթերք. արգելվում է կերակրել մայրական կաթով սնվող՝ որոճող կենդանիներին».

զ) ձկնամթերք պարունակող՝ կաթին փոխարինող չմանրակշռված մթերքները, որոնք նախատեսված են որոճողների ցեղի մատղաշ ֆերմային կենդանիների համար եւ պարունակում են ձկնամթերք, պետք է տեղափոխվեն այնպիսի փոխադրամիջոցով, որը միեւնույն ժամանակ որոճողների համար այլ կերային նյութեր չի փոխադրում: Եթե փոխադրամիջոցը հետագայում պետք է օգտագործվի որոճողների համար այլ կերային նյութեր տեղափոխելու համար, ապա այն պետք է մանրազնին մաքրվի իրավասու մարմնի կողմից հաստատված ընթացակարգի համաձայն՝ խաչաձեւ ախտահարումից խուսափելու համար.

է) այն ֆերմաներում, որտեղ պահվում են որոճողներ, պետք է առկա լինեն այնպիսի միջոցներ, որոնց նպատակը ձկնամթերք պարունակող՝ կաթին փոխարինող մթերքներով կերակրումը մյուս որոճողներին կանխելն է, որոնց նկատմամբ, IV հավելվածի, II մասի Ա(ե) կետի համաձայն, շեղումը չի գործում : Իրավասու մարմինը կազմում է ֆերմաների ցուցակ, որտեղ ձկնամթերք պարունակող՝ կաթին փոխարինող մթերքներն օգտագործվում են ֆերմայի կողմից նախօրոք ծանուցման համակարգի համաձայն կամ, սույն դրույթին համապատասխանություն ապահովող այլ համակարգի համաձայն:

▼M22

9. Որոճողներին չպատկանող ֆերմային կենդանիների կերակրման ժամանակ Ա(բ)(ii) կետում նշված դիկալցիում ֆոսֆատ եւ տրիկալցիում ֆոսֆատ պարունակող կերային նյութերի մեջ եւ նման սպիտակուցներ պարունակող անասնակերի օգտագործման համար կիրառվում են հետեւյալ պայմանները (կիրառելի չէ գիշատիչ մորթատու կենդանիներին կերակրելու համար)՝

ա) ձկնամթերք պարունակող կերային նյութերն արտադրվում են այն հաստատություններում, որոնք որոճողների համար նախատեսված անասնակեր չեն արտադրում եւ որոնք արտոնված են այդ նպատակով իրավասու մարմնի կողմից:

Շեղում կատարելով այդ պայմանից՝

i) հատուկ թույլտվություն չի պահանջվում արյունից ստացվող արտադրանք եւ արյունից պատրաստված մթերք պարունակող կերային նյութերից լիարժեք օրական կերաբաժինն ապահովող անասնակեր արտադրելու համար տեղի հետեւյալ տեխնոլոգներից՝

- որոնք գրանցված են իրավասու մարմնի կողմից.
- որոնք պահում են միայն որոճողներին չպատկանող կենդանիներ.
- որոնք արտադրում են լիարժեք օրական կերաբաժինն ապահովող անասնակեր միայն տվյալ անասնագոմում օգտագործման համար. եւ
- պայմանով, որ արտադրության մեջ օգտագործվող դիկալցիում ֆոսֆատ կամ տրիկալցիում ֆոսֆատ պարունակող կերային նյութերի պարունակության մեջ ֆոսֆորը լինի 10 %-ից պակաս.

ii) որոճողների համար կերային նյութերի արտադրությունն այնպիսի հաստատություններում, որոնք արտադրում են դիկալցիում ֆոսֆատ կամ տրիկալցիում ֆոսֆատ պարունակող կերային նյութեր նաեւ կենդանիների այլ տեսակների համար, կարող է թույլատրվել իրավասու մարմնի կողմից՝ հետեւյալ պայմանների համաձայն՝

- որոճողների համար նախատեսված չմանրակշռված եւ փաթեթավորված կերային նյութերն արտադրվում են այնպիսի տարածքում, որը ֆիզիկապես տարանջատված է այն տարածքներից, որտեղ արտադրվում է դիկալցիում ֆոսֆատ կամ տրիկալցիում ֆոսֆատ պարունակող անասնակեր.
- որոճողների համար նախատեսված չմանրակշռված կերային նյութերը պահեստավորման, տեղափոխման եւ փաթեթավորման ընթացքում պահվում են այնպիսի տարածքում, որը ֆիզիկապես տարանջատված է չմանրակշռված դիկալցիում ֆոսֆատի, չմանրակշռված տրիկալցիում ֆոսֆատի ու դիկալցիում ֆոսֆատ եւ տրիկալցիում ֆոսֆատի պարունակող չմանրակշռված անասնակերի գտնվելու վայրից.

– դիկալցիում ֆոսֆատի եւ տրիկալցիում ֆոսֆատի գնելու եւ օգտագործելու եւ դիկալցիում ֆոսֆատ ու տրիկալցիում ֆոսֆատի պարունակող կերային նյութերի վաճառքի մասին տվյալները հասանելի են իրավասու մարմնին առնվազն հինգ տարվա ընթացքում:

բ) դիկալցիում ֆոսֆատ կամ տրիկալցիում ֆոսֆատ պարունակող կերային նյութերի պիտակի եւ հարակից փաստաթղթերի վրա պետք է հստակորեն նշվեն հետեւյալ բառերը. «պարունակում է կենդանական ծագում ունեցող դիկալցիում/տրիկալցիում ֆոսֆատ. արգելվում է կերակրել որոճողներին»:

գ) Դիկալցիում ֆոսֆատ կամ տրիկալցիում ֆոսֆատ պարունակող չմանրակշռված կերային նյութերը պետք է տեղափոխվեն այնպիսի փոխադրամիջոցով, որը միեւնոյն ժամանակ որոճողների համար կեր չի փոխադրում: Եթե փոխադրամիջոցը հետագայում պետք է օգտագործվի որոճողների համար կերային նյութեր տեղափոխելու համար, ապա այն պետք է մանրագնին մաքրվի իրավասու մարմնի կողմից հաստատված ընթացակարգի համաձայն՝ խաչաձեւ ախտահարումից խուսափելու համար:

դ) Դիկալցիում ֆոսֆատ կամ տրիկալցիում ֆոսֆատ պարունակող կերային նյութերի օգտագործումն ու պահեստավորումն արգելվում են այն ֆերմաներում, որտեղ պահվում են որոճող կենդանիներ:

Շեղում կատարելով այս պայմանից՝ իրավասու մարմինը կարող է թույլատրել դիկալցիում ֆոսֆատ կամ տրիկալցիում ֆոսֆատ պարունակող անասնակերի պահեստավորումն այն ֆերմաներում, որտեղ պահվում են որոճող կենդանիներ, եթե հաստատ է, որ ֆերմայում կիրառվող միջոցները կան, որոնք կանխում են որոճող կենդանիներին դիկալցիում ֆոսֆատով կամ տրիկալցիում ֆոսֆատով կերային նյութերով կերակրումը:

Դ. Հետեւյալ պայմանները կիրառվում են Ա(բ)(iii) կետում նշված՝ արյուն պարունակող արտադրանքի եւ Ա(գ) կետում նշված՝ արյունից պատրաստված մթերքի եւ նման սպիտակուցներ պարունակող կերային նյութերի օգտագործման համար համապատասխանաբար որոճողներին չպատկանող ֆերմային կենդանիների եւ ձկան կերակրման ընթացքում՝

ա) արյունը պետք է ստացվի ԵՄ–ի կողմից հաստատված սպանդանոցից, որոնք սպանդի չեն ենթարկում որոճողներին եւ որոնք գրանցված են որպես որոճողներին սպանդի չենթարկող սպանդանոցներ, եւ դրանք պետք է անմիջականորեն տեղափոխվեն վերամշակման գործարան այնպիսի փոխադրամիջոցներով, որոնք նախատեսված են բացառապես

որոճողներից չստացված արյան տեղափոխման համար: Մաքրումից հետո այն պետք է ստուգվի իրավասու մարմնի կողմից՝ նախքան որոճողներին չպատկանող արյան տեղափոխումը:

Շեղում կատարելով այս պայմանից՝ իրավասու մարմինը կարող է թույլ տալ որոճողների սպանդը այն սպանդանոցներում, որտեղ կատարվում է որոճողներին չպատկանող կենդանիների արյան հավաքում, որը նախատեսված է արյունից ստացված արտադրանքի եւ արյունից պատրաստված մթերքի արտադրության համար որոճողներին չպատկանող ֆերմային կենդանիներին եւ ձկներին կերակրելու նպատակով, եթե սպանդանոցում թույլատրված վերահսկման համակարգ է գործում: Այդ վերահսկման համակարգը պետք է առնվազն ներառի հետեւյալը՝

- որոճողներին չպատկանող կենդանիների սպանդը պետք է ֆիզիկապես առանձին կատարվի որոճող կենդանիների սպանդից.
- որոճողներից ստացված արյան հավաքման, պահեստավորման, տեղափոխման եւ փաթեթավորման տարածքները պետք է ֆիզիկապես առանձին գտնվեն որոճողներին չպատկանող կենդանիներից ստացված արյունից.
- որոճողներին չպատկանող կենդանիներից ստացված արյան կանոնավոր նմուշառում եւ վերլուծություն՝ հայտնաբերելու համար որոճողների սպիտակուցների առկայություն:

բ) արյունից ստացվող արտադրանքը եւ արյունից պատրաստված մթերքն արտադրվում է այնպիսի հաստատությունում, որտեղ բացառապես մշակվում է որոճողներին չպատկանող կենդանիների արյունը:

Այդ պայմանից շեղում կատարելով՝ իրավասու մարմինը կարող է թույլատրել արյունից ստացվող արտադրանքը եւ արյունից պատրաստված մթերքն արտադրել համապատասխանաբար որոճողներին չպատկանող ֆերմային կենդանիների եւ ձկան կերի մեջ օգտագործման համար այնպիսի հաստատություններում, որոնք որոճող կենդանիների արյուն են մշակում եւ որտեղ գործում է հաստատված վերահսկման համակարգ՝ խաչաձեւ ախտահարումից խուսափելու նպատակով: Այդ վերահսկման համակարգը պետք է առնվազն ներառի հետեւյալը՝

- որոճողներին չպատկանող կենդանիների արյան մշակում փակ համակարգում, որը ֆիզիկապես բաժանված է որոճողների արյան մշակումից.
- պահեստավորման, տեղափոխման եւ փաթեթավորման ժամանակ որոճողներից ստացված չմանրակշռված հումքը եւ չմանրակշռված ու պատրաստի արտադրանքի պահում այնպիսի տարածքներում, որոնք ֆիզիկապես բաժանված են որոճողներին չպատկանող կենդանիներից ստացված չմանրակշռված հումքի եւ չմանրակշռված ու պատրաստի արտադրանքի պահման տարածքներից. եւ
- որոճողներին չպատկանող կենդանիներից ստացված արյունից ստացվող արտադրանքի եւ արյունից ստացվող մթերքի կանոնավոր նմուշառում եւ վերլուծություն՝ հայտնաբերելու համար որոճողների սպիտակուցների առկայությունը.

գ) արյունից ստացվող արտադրանք կամ արյունից ստացված մթերք պարունակող կերային նյութը արտադրվում է այն ձեռնարկություններում, որոնք, բացի ձկից, համապատասխանաբար որոճողների կամ ֆերմային կենդանիների համար նախատեսված կեր չեն արտադրում, եւ որոնք այդ նպատակով արտոնված են իրավասու մարմնի կողմից:

Շեղում կատարելով այդ պայմանից՝

- i) հատուկ թույլտվություն չի պահանջվում արյունից ստացվող արտադրանք եւ արյունից պատրաստված մթերք պարունակող կերային նյութերից լիարժեք օրական կերաբաժինն ապահովող անասնակեր արտադրելու համար տեղի հետեւյալ տեխնոլոգներից՝
 - որոնք գրանցված են իրավասու մարմնի կողմից.
 - որոնք պահում են միայն որոճողներին չպատկանող կենդանիներ, եթե օգտագործվում է արյունից ստացվող արտադրանք եւ միայն ձուկ՝ եթե օգտագործվում է արյունից պատրաստված մթերք.
 - որոնք արտադրում են լիարժեք օրական կերաբաժինն ապահովող անասնակեր միայն տվյալ անասնագոմում օգտագործման համար. եւ
 - պայմանով, որ արտադրության մեջ օգտագործվող արյունից ստացվող արտադրանք կամ արյունից պատրաստված մթերք պարունակող կերային նյութերի պարունակության մեջ անմշակ սպիտակուցը լինի 50 %-ից պակաս.
- ii) որոճողների համար կերային նյութերի արտադրությունն այնպիսի հաստատություններում, որոնք արտադրում են արյունից ստացվող արտադրանք կամ արյունից պատրաստված

մթերք պարունակող անասնակեր՝ նաեւ համապատասխանաբար որոճողներին չպատկանող ֆերմային կենդանիների եւ ձկան համար, որը կարող է թույլատրվել իրավասու մարմնի կողմից՝ հետեւյալ պայմանների համաձայն՝

- որոճողների կամ ձկից բացի այլ ֆերմային կենդանիների համար նախատեսված չմանրակշռված եւ փաթեթավորված կերային նյութերն արտադրվում են այնպիսի տարածքում, որը ֆիզիկապես տարանջատված է այն տարածքներից, որտեղ արտադրվում է համապատասխանաբար արյունից ստացվող արտադրանք կամ արյունից պատրաստված մթերք պարունակող անասնակեր.
- չմանրակշռված կերային նյութերը պահեստավորման, տեղափոխման եւ փաթեթավորման ընթացքում պահվել են ֆիզիկապես առանձնացված տարածքում հետեւյալ ձեւով՝

—

ա) որոճողների համար նախատեսված կերային նյութերը պահվում են արյունից ստացվող արտադրանքից եւ արյունից պատրաստված մթերք պարունակող կերային նյութերից զատ.

բ) ձկից բացի այլ ֆերմային կենդանիների համար նախատեսված կերային նյութն առանձին է պահվում արյունից պատրաստված մթերքից եւ արյունից պատրաստված մթերք պարունակող անասնակերերից.

- արյունից ստացվող արտադրանք կամ արյունից պատրաստված մթերք գնելու եւ օգտագործելու եւ նման ապրանքներ պարունակող կերային նյութերի վաճառքի մասին տվյալները հասանելի են իրավասու մարմնին առնվազն հինգ տարվա ընթացքում:

դ) արյունից ստացվող արտադրանք կամ արյունից պատրաստված մթերք պարունակող կերային նյութերի պիտակի, հարակից առետրային փաստաթղթի կամ, կիրառության դեպքում՝ առողջության մասին վկայականի վրա հստակորեն նշվում են հետեւյալ բառերը. «պարունակում է արյունից պատրաստված մթերք. արգելվում է կերակրել որոճող կենդանիներին» կամ «պարունակում է արյունից պատրաստված մթերք. թույլատրվում է կերակրել միայն ձկներին»՝ ըստ անհրաժեշտության:

ե) արյունից պատրաստված մթերքներ պարունակող չմանրակշռված կերային նյութերը տեղափոխվում են այնպիսի փոխադրամիջոցներով, որոնք միաժամանակ չեն տեղափոխում որոճողների համար նախատեսված անասնակեր եւ արյունից պատրաստված մթերք պարունակող չմանրակշռված անասնակեր՝ այնպիսի փոխադրամիջոցներով, որոնք միաժամանակ ձկներից բացի այլ ֆերմային կենդանիների համար նախատեսված

անասնակեր չեն տեղափոխում: Եթե փոխադրամիջոցը հետագայում պետք է օգտագործվի որոճողների կամ ձկներից բացի այլ ֆերմային կենդանիների համար կերային նյութեր տեղափոխելու համար, ապա այն պետք է մանրազնին մաքրվի իրավասու մարմնի կողմից հաստատված ընթացակարգի համաձայն՝ խաչաձեւ ախտահարումից խուսափելու համար:

զ) արյունից ստացված արտադրանք պարունակող կերային նյութերի կիրառությունը կամ պահեստավորումն արգելվում է այն ֆերմաներում, որտեղ պահվում են որոճողներ, իսկ արյունից պատրաստված մթերքներ պարունակող անասնակերն արգելվում է այն ֆերմաներում, որտեղ պահվում են ձկներից բացի այլ ֆերմային կենդանիներ:

Շեղում կատարելով՝ իրավասու մարմինը կարող է թույլ տալ օգտագործել կամ պահեստավորել արյունից ստացվող արտադրանք կամ արյունից պատրաստված մթերք պարունակող անասնակեր այն ֆերմաներում, որտեղ համապատասխանաբար որոճողներ կամ ձկներից բացի, այլ ֆերմային կենդանիներ են պահվում, եթե այն համոզված է, որ ֆերմայում արյունից ստացվող արտադրանք կամ արյունից պատրաստված մթերք պարունակող կերային նյութերով որոճողներին կամ ձկներից բացի այլ ցեղատեսակներին կերակրելու միջոցներ են իրականացվում՝ համապատասխանաբար:

III. Կիրարկման ընդհանուր պայմանները

Ա. Սույն հավելվածը կիրառվում է՝ չսահմանափակելով թիվ 1774/2002 կանոնակարգի (ԵՀ) դրույթների գործողությունը:

Բ. Անդամ պետությունները պահում են հետեւյալ մշտապես թարմացվող ցուցակներ՝

ա) սպանդանոցներ, որոնք II մասին D(ա) կետի համաձայն, իրավասություն են ստացել արյուն հավաքելու հարցում.

բ) թույլտվություն ունեցող վերամշակման գործարաններ, որոնք արտադրում են դիկալցիում ֆոսֆատ, տրիկալցիում ֆոսֆատ, արյունից ստացվող արտադրանք կամ արյունից պատրաստված մթերք. եւ

գ) հաստատություններ, բացառությամբ տեղական տեխնոլոգների, որոնք իրավասություն ունեն արտադրելու ձկնամթերք պարունակող կերային նյութեր եւ (բ) կետում նշված սպիտակուցներ եւ շահագործվում են II մասի Բ(գ), Գ(ա) եւ Դ(գ) կետերում սահմանված պայմանների համաձայն:

Գ.

ա) Չմանրակշռված վերամշակված կենդանական սպիտակուցները, բացառությամբ ձկնամթերքի, եւ նման սպիտակուցներ պարունակող չմանրակշռված արտադրանքը՝ ներառյալ կերային նյութերը, օրգանական պարարտանյութերը եւ հողը հարստացնող նյութերը պետք է պահվեն հատուկ վայրերում ու տեղափոխվեն հատուկ միջոցներով: Պահեստը կամ փոխադրամիջոցը կարող են մաքրումից հետո օգտագործվել այլ նպատակներով եւ այն բանից հետո, երբ իրավասու մարմինը տեսչական ստուգում կանցկացնի այնտեղ:

բ) II մասի Ա(բ)(i) կետում նշված չմանրակշռված ձկնամթերքը, II մասի Ա(բ)(ii) կետում նշված չմանրակշռված դիկալցիում ֆոսֆատը եւ չմանրակշռված տրիկալցիում ֆոսֆատը, II մասի Ա(բ)(iii) կետում նշված արյունից ստացվող արտադրանքը եւ II մասի Ա(գ) մասում նշված արյունից պատրաստված մթերքը պետք է պահեստավորվի եւ տեղափոխվի հատուկ այդ նպատակով նշանակված պահեստներում ու փոխադրամիջոցներում

Շեղում կատարելով (բ) կետից՝

i) պահեստները կամ փոխադրամիջոցները կարող են օգտագործվել միեւնույն սպիտակուցը պարունակող կերային նյութեր.

ii) մաքրումից հետո պահեստները կամ փոխադրամիջոցները կարող են օգտագործվել այլ նպատակներով իրավասու մարմնի կողմից տեսչական ստուգում անցկացնելուց հետո. եւ

iii) ձկնամթերքը կարելի է պահեստավորվել եւ տեղափոխվել այլ նպատակներով, եթե ընկերությունում գործում է իրավասու մարմնի կողմից ընդունված վերահսկման համակարգ՝ խաչաձեւ ախտահարումից խուսափելու համար: Վերահսկման համակարգը պետք է առնվազն ներառի՝

– տեղափոխվող նյութի եւ փոխադրամիջոցի մաքրման մասին տվյալները. եւ

– կերային նյութերի կանոնավոր նմուշառումը եւ վերլուծությունը՝ հայտնաբերելու համար ձկնամթերքի առկայությունը:

Իրավասու մարմինն իրականացնում է տեղում անցկացվող ստուգումներ՝ վերոնշյալ վերահսկման համակարգի ճիշտ կիրառումը հաստատելու համար:

Դ. Կերային նյութերը՝ ներառյալ ընտանի կենդանիների կերը, որը պարունակում է որոճողների արյունից ստացվող արտադրանք կամ ձկնամթերքից բացի վերամշակված կենդանական սպիտակուց, չեն արտադրվում այն հաստատություններում, որոնք ֆերմային կենդանիների

համար անասնակեր են արտադրում՝ բացառությամբ գիշատիչ մորթատու կենդանիների համար արտադրվող անասնակերի:

Չմանրակշռված կերային նյութերը, ներառյալ ընտանի կենդանիների կերը, որը պարունակում է որոճողների արյունից ստացվող արտադրանք կամ ձկնամթերքից բացի վերամշակված կենդանական սպիտակուց, պահեստավորման, տեղափոխման եւ փաթեթավորման ժամանակ պետք է պահվի այնպիսի տարածքում, որը ֆիզիկապես տարանջատված լինի ֆերմային կենդանիների համար չմանրակշռված անասնակերի պահման տարածքից՝ բացառությամբ գիշատիչ մորթատու կենդանիների համար անասնակերի:

II մասի Ա(բ)(ii) կետում նշված դիկալցիում ֆոսֆատ եւ տրիկալցիում ֆոսֆատ, II մասի Ա(բ)(iii) կետում նշված արյունից ստացվող արտադրանք պարունակող ընտանի կենդանիների համար նախատեսված կերը եւ գիշատիչ մորթատու կենդանիների համար նախատեսված կերային նյութերն արտադրվեն ու տեղափոխվեն համապատասխանաբար II մասի Գ(ա) եւ (գ) եւ Դ(գ) ու (ե) կետերի համաձայն:

▼M40

Ե.

1. Վերամշակված կենդանական ծագում ունեցող սպիտակուցների եւ նման վերամշակված կենդանական սպիտակուցներ պարունակող ապրանքների արտահանումը երրորդ երկրներ արգելվում է: Այնուամենայնիվ, այս արգելքը չի կիրառվում ընտանի կենդանիների վերամշակված կերի նկատմամբ, այդ թվում՝ պահածոյացված վիճակում, որը պարունակում է որոճողներից ստացված կենդանական վերամշակված սպիտակուցներ, եւ որը մշակվել ու պիտակավորվել է թիվ 1774/2002 կանոնակարգի (ԵՀ) համաձայն:

▼M22

2. Որոճողներին չպատկանող կենդանիներից ստացված՝ կենդանական ծագում ունեցող վերամշակված սպիտակուցների եւ նման սպիտակուցներ պարունակող ապրանքների արտահանումը թույլատրվում է իրավասու մարմնի կողմից միայն հետեւյալ պայմանների համաձայն՝

– դրանք նախատեսված են 7-րդ հոդվածով չարգելված կիրառության համար.

– նախքան արտահանումը երրորդ երկրի հետ կնքված գրավոր համաձայնություն, որի համաձայն, երրորդ երկրի կազմակերպությունը պետք է պահպանի վերջնական օգտագործման պարտավորությունը եւ չպետք է վերաարտահանի կենդանական ծագում ունեցող վերամշակված սպիտակուցը կամ նման սպիտակուցներ պարունակող ապրանքները 7-րդ հոդվածով արգելված կիրառության համար:

3. Այն անդամ պետությունները, որոնք, 2-րդ կետի համաձայն, թույլատրում են արտահանում՝ սույն Կանոնակարգն արդյունավետ իրականացնելու համար, տեղեկացնում են Հանձնաժողովին եւ մյուս անդամ պետություններին տվյալ երրորդ երկրի հետ կնքված համաձայնության բոլոր պայմանների մասին Պարենի շղթայի եւ կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեի շրջանակում:

2-րդ եւ 3-րդ կետերը չեն կիրառվում՝

– ձկնամթերքի արտահանման նկատմամբ՝ պայմանով, որ այն ապահովի II մասի Բ կետում սահմանված պայմանները.

– ձկնամթերք պարունակող ապրանքների նկատմամբ.

– ընտանի կենդանիների կերի նկատմամբ:

2. Իրավասու մարմինը արտադրության եւ բաշխման ամբողջ շղթայում իրականացնում է փաստաթղթային եւ փաստական ստուգումներ՝ ներառյալ կերային նյութերի փորձաստուգումներ, 95/53/ԵՀ հրահանգի համաձայն՝ նպատակ ունենալով վերահսկելու այդ կանոնակարգի եւ սույն Կանոնակարգի դրույթների հետ համապատասխանությունը: Եթե հայտնաբերվում է արգելված կենդանական սպիտակուցի առկայություն, ապա կիրառվում է 95/53/ԵՀ հրահանգը: Իրավասու մարմինը պարբերաբար ստուգում է լաբորատորիաների՝ նման պաշտոնական հսկողության նպատակով վերլուծություններ կատարելու իրավասությունը, մասնավորապես՝ գնահատելով վավերացման ուսումնասիրության արդյունքները: Եթե իրավասությունը համարվում է անբավարար, որպես նվազագույն ուղղիչ միջոց պետք է կազմակերպվի լաբորատորիայի աշխատակիցների վերապատրաստում:

ՀԱՏՈՒԿ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

1. Հատուկ ռիսկայնության նյութի սահմանումը

Հետեյալ հյուսվածքները համարվում են հատուկ ռիսկայնության նյութ, եթե դրանք ստացվել են անդամ պետության կամ երրորդ երկրի կամ դրանց որեւէ տարածաշրջանի կենդանիներից, որոնք վերահսկվող եւ չսահմանված ԽԵԱՍԷ ռիսկի երկրներ կամ տարածաշրջաններ են.

ա) խոշոր եղջերավոր անասունների մասով՝

i) 12 ամսականից մեծ կենդանիների գանգը, բացի ծնոտից՝ ներառելով գլխուղեղը եւ աչքերն ու ողնուղեղը.

▼M37

ii) 30 ամսականից մեծ կենդանիների ողնաշարը, բացի պոչի ողերից, պարանոցային, կրծքավանդակային եւ գոտկատեղային ողի փշածեւ եւ միջածիգ ելուստից ու սրբոսկրի միջին սրբոսկրային կատարից եւ թելերից, սակայն ներառելով դորսալ (մեջքային) արմատային նյարդային հանգույցը. եւ

▼M31

iii) բոլոր տարիքների կենդանիների նշագեղձերը, աղիքները՝ տասներկուամսոյա աղիքից մինչեւ ուղիղ աղիք եւ միջընդերք:

բ) ոչխարների եւ այծերի մասով՝

i) 12 ամսից մեծ կենդանիների կամ որոնք լնդից ծակել են մշտական կտրիչ ատամներ՝ գանգը, ներառյալ գլխուղեղը եւ աչքերն, նշագեղձերը ու ողնուղեղը. եւ

ii) բոլոր տարիքների կենդանիների փայծաղը եւ զստային աղիքը:

2. Անդամ պետությունների համար շեղումները

Շեղում կատարելով 1-ին կետից՝ այդ կետում նշված հյուսվածքները, որոնք ծագել են աննշան ԽԵԱՍԷ ռիսկի անդամ պետություններից, շարունակվում են համարվել հատուկ ռիսկայնության նյութ:

3. Պիտակավորումը եւ ոչնչացումը

Հատուկ ռիսկայնության նյութերի վրա դրվում է ներկ, կամ հարկ եղած դեպքում, որեւէ այլ նշում հեռացումից կամ ոչնչացումից անմիջապես առաջ՝ թիվ 1774/2002 կանոնակարգում (ԵՀ) սահմանված դրույթների եւ, մասնավորապես, դրա 4(2) հոդվածի համաձայն:

4. Հատուկ ռիսկայնության նյութերի հեռացումը

4.1. Հատուկ ռիսկայնության նյութերը հեռացվում են՝

ա) սպանդանոցներում կամ, հարկ եղած դեպքում, սպանդի իրականացման այլ վայրերում.

բ) մասնատման գործարաններում՝ խոշոր եղջերավոր անասունների ողնաշարի դեպքում.

գ) հարկ եղած դեպքում՝ թիվ 1774/2002 կանոնակարգի (ԵՀ) 10-րդ հոդվածում նշված միջանկյալ գործարաններում կամ թիվ 1774/2002 կանոնակարգի (ԵՀ) 23(2)(գ)(iv), (vi) եւ (vii) հոդվածի համաձայն լիազորություն ստացած եւ գրանցված օգտագործողների ու մսամթերքի հավաքման կենտրոններում:

4.2. Շեղում կատարելով 4.1 կետից՝ այլընտրանքային փորձաստուգման կիրառությունը հատուկ ռիսկային նյութերի հեռացման ժամանակ կարող է թույլատրվել հետեւյալ պայմանների համաձայն՝

ա) սպանդանոցներում փորձաստուգումներ պետք է անցկացվեն հատուկ ռիսկայնության նյութերի հեռացմանը հավակնող բոլոր կենդանիների նկատմամբ.

բ) խոշոր եղջերավոր անասուններից, ոչխարներից կամ այծերից ստացված ոչ մի արտադրանք, որն օգտագործվում է մարդու կողմից որպես մթերք կամ կենդանու կողմից որպես կեր, չի կարող հեռացվել սպանդանոցից՝ մինչեւ իրավասու մարմինը չի ստացել եւ ընդունել պոտենցիալ կերպով ախտահարված՝ սպանդի ենթարկված բոլոր կենդանիների վրա կատարված փորձարկումների արդյունքները, եթե ԽԵԱՍԷ –ն հաստատվել է որեւէ կենդանու մոտ.

գ) եթե այլընտրանքային փորձաստուգման արդյունքը դրական է, ապա խոշոր եղջերավոր բոլոր կենդանիները, ոչխարները եւ այծերը, որոնք պոտենցիալ կերպով ախտահարված են սպանդանոցում, ոչնչացվում են 3-րդ կետի համաձայն, բացառությամբ եթե վարակված կենդանու մարմնի բոլոր մասերը, ներառյալ կաշին, հնարավոր է նույնականացնել եւ առանձնացնել:

4.3. 4.1-ին պարբերությունից շեղում կատարելով՝ անդամ պետությունները կարող են թույլատրել, որ՝

ա) ոչխարների եւ այծերի ողնուղեղի հեռացում կատարվի մսի կտրատման գործարաններում, որոնք հատուկ թույլտվություն ունեն այդ նպատակով.

բ) խոշոր եղջերավոր անասունների ողնաշարի հեռացումը մորթած կենդանիների մսեղիքից կամ մսեղիքների մասերից մսի խանութներում, որոնք հատուկ թույլտվություն ունեն, դիտանցվի եւ գրանցվի այդ նպատակով.

գ) խոշոր եղջերավոր անասունների գլխի մսի մսահանում կատարվի մսի կտրատման գործարաններում, որոնք հատուկ թույլտվություն ունեն՝ 9-րդ կետում սահմանված դրույթների համաձայն:

4.4. Սույն գլխում սահմանված հատուկ ռիսկայնության նյութի հեռացման կանոնները չեն կիրառվում 1-ին կատեգորիայի նյութերի նկատմամբ, ինչպես սահմանված է թիվ 1774/2002 կանոնակարգում (ԵՀ), որոնք օգտագործվում են իրավասու մարմինների հսկողության տակ՝ դիակեր թռչունների վտանգված եւ պաշտպանվող որոշ տեսակների կերակրելու համար:

5. Մեխանիկական եղանակով կտորների բաժանած մսի մասին միջոցներ

Չնայած 5(2) հոդվածում նշված առանձին որոշումներին եւ շեղում կատարելով 9(3) հոդվածից՝ բոլոր անդամ պետություններին արգելվում է խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների եւ այծերի ոսկորներ ու ոսկորով մսակտորներ օգտագործել մեխանիկական եղանակով կտորների բաժանած մսի արտադրության համար:

6. Հյուսվածքների պատռմանը վերաբերող միջոցները

Չնայած 5(2) հոդվածում նշված առանձին որոշումներին եւ շեղում կատարելով 8(3) հոդվածից՝ մինչեւ բոլոր անդամ պետությունները դասակարգվեն որպես աննշան ԽԵԱՍԷ ռիսկի երկրներ, շժմեցումից հետո կենտրոնական նյարդային համակարգի հյուսվածքի պատռվածքը գլխուղեղի խոռոչ մտցված ձողածեւ երկարացված գործիքի միջոցով արգելվում է խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների կամ այծերի նկատմամբ, որոնց միսը նախատեսված է մարդու կամ կենդանու կողմից սպառման նպատակով:

7. Խոշոր եղջերավոր անասուններից լեզուներ վերցնելը

Մարդու եւ կենդանիների կողմից սպառման նպատակով բոլոր տարիքների խոշոր եղջերավոր անասունների լեզուները կտրվում են սպանդանոցում՝ լայնակի կտրելով մոուֆի մասից մինչեւ ներլեզվային ոսկորի լեզվական մասը:

8. Խոշոր եղջերավոր անասունների գլխի միսը կտրելը

8.1. 12 ամսական խոշոր եղջերավոր անասունների գլխի միսը կտրում են սպանդանոցում իրավասու մարմնի կողմից թույլատրելի վերահսկման համակարգի համաձայն՝ կանխելու համար գլխի մսի հնարավոր ախտահարումը կենտրոնական նյարդային համակարգի հյուսվածքով: Այդ համակարգը ներառում է առնվազն հետեւյալ պայմանները՝

ա) միսը պետք է կտրատվի հատուկ տարածքում, որը ֆիզիկապես առանձնացած է սպանդանոցի շարքերի այլ մասերից.

բ) երբ գլուխները հեռացվում են կոնվեյերից կամ կախիչից՝ նախքան գլխի միսը կտրատելը, անթափանց եւ դիմակայուն խցանի միջոցով փակվում են առջեւի մասում կրակած անցքը եւ ճակատային ոսկորը: Եթե ուղեղաբունը նմուշառվում է ԽԵԱՍԷ լաբորատոր փորձաստուգման նպատակով, ապա ճակատային ոսկորը խցանվում է նմուշառումից անմիջապես հետո.

գ) գլխամիսը չի կտրատվում գլխից, եթե աչքերը վնասվել կամ հանվել են սպանդանոցի անմիջապես առաջ կամ հետո, կամ որն այլ կերպ վնասվել է այնպես, որ դա կարող է ախտահարել գլուխը կենտրոնական նյարդային հյուսվածքի միջոցով.

դ) գլխամիսն արգելվում է կտրատել գլխից, որը, ինչպես հարկն է, չի խցանվել երրորդ պարբերության համաձայն.

ե) չխախտելով հիգիենայի ընդհանուր կանոնները՝ պետք է գործի աշխատանքային հատուկ հրահանգներ՝ գլխի միսը կտրատելու ժամանակ ախտահարումից խուսափելու համար, մասնավորապես եթե երկրորդ պարբերություն նշված խցանը կորել է կամ աչքերը սպանդանոցի ժամանակ վնասվել են.

զ) պետք է կատարվի համապատասխան լաբորատոր փորձաստուգման ժամանակ օգտագործվող՝ կենտրոնական նյարդային համակարգի առկայություն հայտնաբերելու համար նմուշառում՝ համոզվելու համար, որ ախտահարումը նվազեցնող միջոցները պատշաճորեն են կիրառվել:

8.2. Շեղում կատարելով 8.1 կետի պահանջներից՝ անդամ պետությունները կարող են որոշել սպանդանոցում կիրառել վերահսկման այլընտրանքային համակարգ՝ խոշոր եղջերավոր անասունների գլխի միսը կտրելու համար, որը նվազեցնում է կենտրոնական նյարդային համակարգի հյուսվածքի միջոցով գլխամսի ախտահարման աստիճանը: գ) պետք է կատարվի համապատասխան լաբորատոր փորձաստուգման ժամանակ օգտագործվող՝ կենտրոնական նյարդային համակարգի առկայություն հայտնաբերելու համար նմուշառում՝ համոզվելու համար, որ ախտահարումը նվազեցնող միջոցները պատշաճորեն են կիրառվել: Սույն շեղումից օգտվող անդամ պետությունները Պարենի շղթայի եւ կենդանիների առողջության մշտական կոմիտեի շրջանակում տեղեկացնում են Հանձնաժողովին ու այլ անդամ պետությունների իրենց վերահսկման համակարգի եւ նմուշառման արդյունքների մասին:

8.3. Եթե խոշոր եղջերավոր անասունի գլուխը կոնվեյերից կամ կախիչից առանց հեռացնելու միսը կտրատվել է, ապա 8.1 եւ 8.2 կետերը չեն գործում:

9. Խոշոր եղջերավոր անասունների գլխամիսը կտրելը՝ թույլտվություն ունեցող մսի կտրատման գործարաններում

Ց-րդ կետից շեղում կատարելով՝ անդամ պետությունները կարող են որոշել թույլատրել կտրատել խոշոր եղջերավոր անասունի գլխի կտրատումը մսի կտրատման գործարաններում, որոնք հատուկ թույլտվություն ունեն այդ նպատակով եւ պայմանով, որ պահպանվել են հետեւյալ պայմանները՝

ա) մսի կտրատման գործարան տեղափոխելու համար նախատեսված անասնագլուխները պետք է պահվեն կախիչի վրա՝ պահեստավորման ընթացքում, եւ սպանդանոցից մինչեւ մսի կտրատման գործարան տեղափոխելու ժամանակ.

բ) առջեւի մասում կրակած անցքը եւ ճակատային ոսկորը պետք է, ինչպես հարկն է, խցանվեն անթափանցելի եւ դիմակայուն խցանով՝ նախքան կոնվեյերից կամ կախիչից հիմնական կախիչի վրա տեղադրելը: Եթե ուղեղաբունը նմուշառվում է ԽԵԱՍԷ լաբորատոր փորձաստուգման նպատակով, ապա ճակատային ոսկորը խցանվում է նմուշառումից անմիջապես հետո.

գ) եթե (բ) կետի համաձայն չխցանված գլուխները, որոնց աչքերը վնասվել կամ դուրս են եկել սպանդից անմիջապես առաջ կամ հետո, մեկ այլ ձեւով են վնասվել, որը կարող է կենտրոնական նյարդային հյուսվածքով գլխամսի ախտահարման պատճառ դառնալ, ապա պետք է չտեղափոխվեն հատուկ նպատակով թույլատրված մսի կտրատման գործարաններ.

- դ) պետք է տվյալ սպանդանոցում գոյություն ունենա կենտրոնական նյարդային համակարգը հայտնաբերելու համապատասխան լաբորատոր փորձաստուգման միջոցով նմուշառման պլան՝ հաստատելու համար ախտահարումը նվազեցնելու միջոցների պատշաճ իրականացումը.
- ե) գլխամիսը կտրելը պետք է իրականացվի իրավասու մարմնի կողմից թույլատրված վերահսկման համակարգի համաձայն՝ ապահովելու համար գլխամասի հնարավոր ախտահարման կանխարգելումը: Այդ համակարգը պետք է ներառի առնվազն հետևյալը՝
- i) բոլոր գլուխները պետք է ֆիզիկապես ստուգվեն ախտահարման նշանների կամ վնասի կամ, ինչպես հարկն է, խցանելու նպատակով՝ նախքան գլխամասի կտրատելն սկսելը.
- ii) գլխամիսն արգելվում է կտրատել այն անասնագլխից, որը, ինչպես հարկն է, չի խցանվել, որի աչքերը վնասվել կամ որեւէ այլ կերպ վնասվածք են ստացել այնպես, որ դրա հետեւանքով գլխամիսը կարող է ախտահարված լինել կենտրոնական նյարդային հյուսվածքի միջոցով: Գլխամիսը չպետք է կտրել, եթե կասկածվում է, որ գլուխն ախտահարված է:
- iii) չխախտելով հիգիենայի ընդհանուր կանոնները՝ պետք է գործեն աշխատանքային հատուկ հրահանգներ՝ տեղափոխման եւ կտրատման ժամանակ գլխամասի ախտահարումից խուսափելու համար, մասնավորապես եթե խցանն ընկել կամ աչքերը վնասվել են այդ գործողությունների ընթացքում.
- զ) համապատասխան լաբորատոր փորձաստուգում իրականացնելու համար պետք է մսի կտրատման գործարանների համար նմուշառման պլան առկա լինի՝ նպատակ ունենալով հայտնաբերելու կենտրոնական նյարդային համակարգի հյուսվածքը, որպեսզի հնարավոր լինի համոզվել, որ ախտահարումը նվազեցնելու միջոցները պատշաճորեն են իրականացվում:

10. Առետրի եւ արտահանման մասին կանոնները

- 10.1. Անդամ պետությունները կարող են թույլատրել առաքել անասնագլուխները հատուկ ռիսկայնության նյութ պարունակող չկիսված մսեղիքներով դեպի մեկ այլ անդամ պետություն, միայն եթե այդ անդամ պետությունը համաձայնել է ընդունել տվյալ նյութը եւ հաստատել է առաքման ու տեղափոխման պայմանները:
- 10.2. 10.1 կետից շեղում կատարելով՝ մսեղիքները, կիսած վիճակում մսեղիքները եւ երեք մասից ավելի չբաժանված մեծածախ առետրի համար նախատեսված մսեղիքները, ինչպես նաեւ մսեղիքների քառորդ մասերը, որոնք հատուկ ռիսկայնության նյութ չեն պարունակում, բացի

ողնաշարից, այդ թվում՝ դորսալ (մեջքային) արմատային նյարդային հանգույցը, կարող են առաքվել մեկ անդամ պետությունից մյուսն առանց վերջինիս նախնական համաձայնության:

10.3. Խոշոր եղջերավոր անասունի, ոչխարի կամ այծի՝ հատուկ ռիսկայնության նյութ պարունակող գլուխների կամ թարմ մսի արտահանումը Համայնքից դուրս արգելվում է:

11. Վերահսկումները

11.1. Անդամ պետություններն իրականացնում են պարբերական պաշտոնական ստուգումներ՝ հավաստելու համար սույն հավելվածի ճիշտ կիրառությունը եւ ապահովում են ախտահարումից խուսափելու համար ձեռնարկվող միջոցները, մասնավորապես, սպանդանոցներում, մսի կտրատման գործարաններում կամ այլ վայրերում, որտեղ հեռացվում է հատուկ ռիսկայնության նյութ, ինչպես օրինակ՝ մսի խանութներում կամ 4.1 (գ) կետում նշված հաստատություններում:

11.2. Անդամ պետությունները մասնավորապես, համակարգ են հիմնում՝ համոզվելու եւ ստուգելու համար, որ հատուկ ռիսկայնության նյութերն առանձնացվում եւ ոչնչացվում են թիվ 999/2001 կանոնակարգի (ԵՀ) համաձայն:

11.3. Պետք է գործի վերահսկման համակարգ՝ ողնաշարի հեռացման համար, ինչպես սահմանված է 1(ա) կետում: Այդ համակարգը պետք է ներառի առնվազն հետեւյալ միջոցները՝

ա) այն դեպքերում, երբ ողնաշարի հեռացում չի պահանջվում, խոշոր եղջերավոր անասունների ողնաշար պարունակող մսեղիքները կամ մեծածախ վաճառքի համար նախատեսված մսեղիքների կտորները պետք է տեսանելի կապույտ գծով նույնականացվեն թիվ 1760/2000 կանոնակարգում (ԵՀ) նշված պիտակի վրա:

բ) խոշոր եղջերավոր անասունների մսեղիքների կամ մեծածախ վաճառքի համար նախատեսված մսեղիքների կտորների թվի մասին հատուկ տեղեկություններ, որոնց համար պահանջվում է ողնաշարի հեռացում, ինչպես նաեւ տեղեկություններ այն թվի մասին, որոնց դեպքում ողնաշարի հեռացում չի պահանջվում, ավելացվում են մսի խմբաքանակին վերաբերող առետրային փաստաթղթերում: Եթե կիրառելի է՝ հատուկ տեղեկությունները պետք է ավելացվեն Հանձնաժողովի թիվ 136/2004 կանոնակարգի(ԵՀ) 2(1) հոդվածում նշված փաստաթղթին (23) ներկրման դեպքում.

գ) մսի վաճառքի խանութներն առնվազն մեկ տարի պահում են (բ) կետում նշված առետրային փաստաթղթերը:

ՀԱՎԵԼՎԱԾ VI

ՈՐՈՃՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՕՐԳԱՆՆԵՐԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԿԱՄ ՆՄԱՆ ՕՐԳԱՆՆԵՐ
ՊԱՐՈՒՆԱԿՈՂ՝ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ,՝ ԻՆՉՊԵՍ
ՆՇՎԱԾ Է 9(1) ՀՈԴՎԱԾՈՒՄ

▼M32

ՓՈԽԱՆՑՎՈՂ ՍՊՈՒՆԳԱՆՄԱՆ ԷՆՑԵՖԱԼՈՊԱԹԻԱՅԻ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ

▼M39

ԳԼՈՒԽ Ա

ՓՍԷ-ի առկայության հաստատումից հետո ձեռնարկվող միջոցները

1. Պետք է 13(1)(բ) հոդվածում նշված հետազոտությամբ սահմանվի՝

ա) խոշոր եղջերավոր անասունների դեպքում՝

- բոլոր մնացած որոճող կենդանիները անասնագոմում, որտեղ հիվանդությունը հաստատվել է.
- եթե հիվանդությունը հաստատվել է էգ կենդանու մոտ, դրա ձագը, որը ծնվել է հիվանդության կլինիկական սկզբից երկու տարի առաջ կամ հետո.
- հաստատված հիվանդություն ունեցող կենդանու կոհորտի բոլոր կենդանիները.
- հիվանդության հնարավոր ծագումը.
- հիվանդությունը հաստատված կենդանու անասնանոցի կամ ՓՍԷ հարուցիչով հնարավոր կերպով ախտահարված այլ անասնանոցների բոլոր կենդանիները, կամ այն կենդանիները որոնք կարող են կերած լինել նույն կերը, կամ
- պոտենցիալ կերպով ախտահարված անասնակերի կամ որեւէ այլ նյութի կամ փոխանցման տարրեր միջոցներով վարակված կերային նյութերի տեղաշարժը, որը կարող է փոխանցել ՓՍԷ հարուցիչ դեպի տվյալ անասնանոցը կամ այդ անասնանոցից.

բ) ոչխարների եւ այծերի դեպքում՝

- ոչխարներից եւ այծերից բացի բոլոր որոճողները՝ հիվանդություն հաստատված կենդանու անասնանոցում.
- եթե հնարավոր է հայտնաբերել, հիվանդություն հայտնաբերած ծնող կենդանիները կամ էգերի մոտ՝ դրանց սաղմերը, ծվաբջիջը եւ վերջին ձագը.
- հիվանդություն հայտնաբերած կենդանու անասնանոցի բոլոր ոչխարները եւ այծերը՝ ի լրումն երկրորդ պարբերությունում նշված կենդանիների.

- հիվանդության հնարավոր ծագումը եւ այլ անասնանոցների նույնականացում, որտեղ կան կենդանիների, սաղմ կամ ձվաբջիջ, որոնք կարող է վարակված լինեն ՓՍԷ հարուցիչով կամ կերել են նույն անասնակերը կամ ենթարկվել են ախտահարման միեւնույն աղբյուրին.

- պոտենցիալ կերպով ախտահարված անասնակերի կամ որեւէ այլ նյութի կամ փոխանցման տարբեր միջոցներով վարակված կերային նյութերի տեղաշարժը, որը կարող է փոխանցել ՓՍԷ հարուցիչ դեպի տվյալ անասնանոցը կամ այդ անասնանոցից.

2. 13(1)(գ) հոդվածում սահմանված միջոցները ներառում են առնվազն հետեւյալը՝

2.1. Եթե ՓՍԷ-ն հաստատվել է խոշոր եղջերավոր անասունի մոտ՝ 1(ա) պարբերությունում նշված հետազոտության մեջ հայտնաբերված խոշոր եղջերավոր անասունների սպանդ եւ լիակատար ոչնչացում. Այնուամենայնիվ, անդամ պետությունը կարող է որոշել՝

- չսպանել կամ ոչնչացնել 1(ա) կետի երրորդ պարբերության նույն կոհորտի կենդանիներին, եթե փաստեր են տրամադրվել, որ այդ կենդանիները չեն կերել միեւնույն անասնակերից, ինչը կերել է վարակված կենդանին.

- հետաձգել 1(ա) կետի երրորդ պարբերության նույն կոհորտի կենդանիների սպանող կամ ոչնչացումը մինչեւ նրանց արտադրողական կյանքի վերջը, պայմանով, որ դրանք լինեն ցլիկներ, որոնք մշտապես ապահովում են սերմնահեղուկի պահպանման կենտրոնում եւ հնարավոր է ապահովել, որ նրանք լիովին կոչնչացվեն սատկելուց հետո:

▼M41

2.2. Եթե պաշտոնական տվյալներով որեւէ ոչխար կամ այծ կասկածվում է ՓՍԷ-ով վարակված լինելու մեջ անդամ պետության անասնանոցում եւ մինչեւ հաստատման հետազոտության արդյունքների հասանելի լինելը, այդ անասնանոցի բոլոր մյուս ոչխարները եւ այծերը պաշտոնապես դրվում են տեղաշարժի սահմանափակման տակ՝ մինչեւ հետազոտության արդյունքների հայտնի լինելը: Այնուամենայնիվ, եթե փաստեր կան, որ ՓՍԷ-ն կասկածելու պահին անասունը գտնվել էր մի անասնագոմում, որտեղից չէր կարող վարակվել է ՓՍԷ-ով, ապա իրավասու մարմինը կարող է որոշել տեղաշարժի պաշտոնական սահմանափակում կիրառել երկու անասնանոցների կամ միայն վարակված անասնանոցի նկատմամբ՝ կախված հասանելի համաճարակաբանական տեղեկություններից: Պաշտոնական հսկողության տակ դրված անասնանոցի այն ոչխարներից եւ այծերից ստացված կաթը եւ կաթնամթերքը, որոնք առկա են այդ անասնանոցում այն ամսաթվից,

երբ ՓՍԷ է կասկածվել, մինչեւ հաստատող հետազոտության տվյալների հասանելի լինելը, պետք է օգտագործվեն միայն այդ անասնանոցում:

▼M39

2.3. Եթե ՓՍԷ-ն հաստատվել է ոչխարների կամ այծերի մոտ՝

▼M41

ա) եթե հնարավոր չէ հերքել վավերացման ուսումնասիրության արդյունքները, որը իրականացվել է X հավելվածի Գ գլխի 3.2(գ) կետում սահմանված ընթացակարգի համաձայն՝ բոլոր կենդանիների, սաղմերի եւ ձվաբջիջների սպանող եւ լիակատար ոչնչացումը, ինչպես սահմանված է 1(բ) կետի երկրորդից հինգերորդ պարբերություն նշված տեղեկությունների հավաքման հետազոտության մեջ: Ոչնչացման ենթակա այն կենդանիներից ստացված կաթը եւ կաթնամթերքը, որոնք գտնվել են անասնանոցում այն օրվանից, երբ հաստատվել է, որ ԽԵԱՍԷ-ի առկայությունը հնարավոր չէ հերքել մինչեւ կենդանիների լիակատար ոչնչացման օրը, պետք է ոչնչացվի:

▼M39

բ) եթե ԽԵԱՍԷ վարակը հերքվել է X հավելվածի Գ գլխի, 3.2(գ) կետում սահմանված ընթացակարգի համաձայն, իրավասու մարմնի որոշմանը համապատասխան.

կամ

▼M41

ի) 1(բ) կետի երկրորդ եւ երրորդ պարբերություններում նշված տեղեկությունների հավաքման հետազոտությամբ առանձնացված բոլոր կենդանիների, սաղմերի եւ ձվաբջիջների սպանող ու լիակատար ոչնչացումը: Եթե ԽԵԱՍԷ հաստատված դեպքը դասական քորուկ է, ապա ոչնչացման ենթակա կենդանիներից ստացված կաթը եւ կաթնային արտադրանքը, որոնք գտնվել են անասնագոմում դասական քորուկի հիվանդության ամսաթվից մինչև կենդանիների լիակատար ոչնչացման ամսաթիվը, չպետք է օգտագործվի որոճողներին կերակրելու համար, այդ անասնագոմում որոճողներին կերակրելուց բացի: Նման արտադրատեսակների՝ որպես անասնակեր շուկայահանումը որոճողներին չպատկանող կենդանիների համար, սահմանափակվում է տվյալ անդամ պետության տարածքով: Նման արտադրատեսակներին հարակցող առետրային փաստաթղթի եւ նման արտադրատեսակ պարունակող ցանկացած փաթեթավորման վրա պետք է հստակորեն նշված լինի՝

«արգելվում է կերակրել որոճող կենդանիներին»: Նման արտադրատեսակներ պարունակող կերային նյութերի օգտագործումը եւ պահեստավորումն արգելվում է այն ֆերմաներում, որտեղ որոճող կենդանիներ են պահվում: Չմանրակշռված կերային նյութեր պարունակող նման արտադրատեսակները տեղափոխվում են այնպիսի փոխադրամիջոցներով, որոնք որոճողների համար անասնակեր միաժամանակ չեն տեղափոխում: Եթե նման փոխադրամիջոցները հետագայում օգտագործվում են որոճողների համար նախատեսված կերային նյութեր տեղափոխելու համար, ապա դրանք պետք է մաքուր մաքրվեն խաչաձեւ ախտահարումից խուսափելու համար իրավասու մարմնի կողմից հաստատված ընթացակարգի համաձայն:

3-րդ կետում նշված պայմանները կիրառվում են անասնանոցի նկատմամբ.

կամ

ii) բոլոր կենդանիների, սաղմերի եւ ձվաբջջի սպանդ եւ լիակատար ոչնչացում, որոնք հայտնաբերվել են 1(բ) կետի երկրորդ եւ երրորդ պարբերությունում նշված տեղեկությունների հավաքման հետազոտության արդյունքում, բացառությամբ հետեւյալի՝

- ARR/ARR գենոտիպի տեսակի վերարտադրության խոյ.

- առնվազն մեկ ARR ալել եւ ոչ մի VRQ ալել կրող տեսակի վերարտադրության մաքի, իսկ եթե այդ բուծման մաքիները հղի են հետազոտության ընթացքում՝ դրանց հետագայում ծնված ձագերը, եթե դրանց գենոտիպը համապատասխանում է այս ենթապարբերության պահանջներին.

-առնվազն մեկ ARR ալել կրող ոչխար, որը նախատեսված է բացառապես սպանդի համար.

-եթե իրավասու մարմինը որոշում է, երեք ամսեկանից փոքր ոչխարները եւ այծերը, որոնք նախատեսված են բացառապես սպանդի համար:

Եթե ԽԵԱՍԷ հաստատված դեպքը դասական քորուկ է, ապա ոչնչացման ենթակա կենդանիներից ստացված կաթը եւ կաթնային արտադրանքը, որոնք գտնվել են անասնանոցում դասական քորուկ հիվանդության ամսաթվից մինչեւ կենդանիների լիակատար ոչնչացման ամսաթիվը, չպետք է օգտագործվի որոճողներին կերակրելու համար, բացառությամբ այդ անասնանոցում որոճողներին կերակրման: Նման արտադրատեսակների՝ որպես անասնակեր շուկայահանումը, որոճողներին չպատկանող կենդանիների համար սահմանափակվում է տվյալ անդամ պետության տարածքով: Նման

արտադրատեսակներին հարակցող առևտրային փաստաթղթի եւ նման արտադրատեսակ պարունակող ցանկացած փաթեթավորման վրա պետք է հստակ նշված լինի՝ «արգելվում է կերակրել որոճող կենդանիներին»: Նման արտադրատեսակներ պարունակող կերային նյութերի օգտագործումը եւ պահեստավորումն արգելվում է այն ֆերմաներում, որտեղ որոճող կենդանիներ են պահվում: Չմանրակշռված կերային նյութեր պարունակող նման արտադրատեսակները տեղափոխվում են այնպիսի փոխադրամիջոցներով, որոնք միաժամանակ որոճողների համար անասնակեր չեն տեղափոխում: Եթե նման փոխադրամիջոցները հետագայում օգտագործվում են որոճողների համար նախատեսված կերային նյութեր տեղափոխելու համար, ապա դրանք պետք է մաքուր մաքրվեն՝ խաչաձեւ ախտահարումից խուսափելու համար իրավասու մարմնի կողմից հաստատված ընթացակարգի համաձայն:

3-րդ կետում նշված պայմանները կիրառվում են անասնանոցի նկատմամբ.

▼M39

- iii) անդամ պետությունը կարող է որոշել չսպանել եւ չոչնչացնել 1(բ) կետի երկրորդ եւ երրորդ պարբերություն նշված՝ հետազոտությամբ բացահայտված կենդանիները, եթե նույն գենոտիպի ոչխարների փոխարինում դժվար է գտնել, կամ երբ ցեղատեսակի ներսում ARR ալելի հաճախականությունը ցածր է, կամ երբ դա անհրաժեշտ է՝ խուսափելու համար ներցեղային խաչասերում կատարելուց, կամ հաշվի առնելով հիմնավորված համաճարակաբանական այլ գործոններ: 4-րդ կետում նշված պայմանները կիրառվում են անասնանոցի նկատմամբ.
- գ) շեղում կատարելով (բ) կետում սահմանված միջոցներից եւ միայն եթե ՓՍԷ-ի անասնանոցում հաստատված դեպքը ոչ տիպային քորուկ չէ, ապա անդամ պետությունը կարող է որոշել կիրառել 5-րդ կետում սահմանված միջոցները.
- դ) անդամ պետությունները կարող են որոշել՝
 - i) բ(i) կետում նշված բոլոր կենդանիների սպանող եւ լիակատար ոչնչացումը փոխարինել մարդու կողմից սպառման նպատակով սպանողով.
 - ii) բ(ii) կետում նշված բոլոր կենդանիների սպանող եւ լիակատար ոչնչացումը փոխարինել մարդու կողմից սպառման նպատակով սպանողով՝ պայմանով, որ՝
 - կենդանիները սպանողի ենթարկվեն համապատասխան անդամ պետության տարածքում.

- բոլոր կենդանիները, որոնց 18 ամիսը լրացել է կամ լնդերից դուրս են եկել երկու հիմնական կտրիչներից ավելի եւ սպանդի են ենթարկվել մարդու կողմից սպառման նպատակով, պետք է անցնեն փորձաստուգում՝ ՓՍԷ-ի առկայության համար X հավելվածի, Գ գլխի, 3.2 (բ) կետում սահմանված լաբորատոր մեթոդներին համաձայն.

ե) պրիոն սպիտակուցի գենոտիպը ոչխարների թվով առավելագույնը 50-ի մոտ, որոնք սպանվել եւ ոչնչացվել կամ սպանդի են ենթարկվել մարդու կողմից սպառման նպատակով (բ)(i) եւ (iii) կետերում սահմանված կարգով, պետք է սահմանվի.

▼M41

զ) եթե ցեղատեսակի ներսում կամ անասնանոցում ARR ավելի հաճախականությունը ցածր է կամ բացակայում է, կամ եթե անհրաժեշտ է ներցեղային խաչասերումից խուսափելու համար, անդամ պետությունը կարող է որոշել հետաձգել 2.3 (բ)(i) եւ (ii) կետում նշված կենդանիների ոչնչացումը մինչեւ հինգ վերարտադրության տարի, պայմանով, որ անասնանոցում չլինեն ARR/ARR գենոտիպից բացի այլ բուժման խոյեր:

Այնուամենայնիվ, կաթի արտադրության համար պահված ոչխարների եւ այծերի դեպքում՝ դրանք շուկայում փոխարինելու նպատակով, կենդանիների ոչնչացումը կարող է միայն ուշացվել առավելագույնը 18 ամսվա ընթացքում:

▼M39

2.4. Եթե մեկ այլ անասնանոցից ներմուծվել է վարակված կենդանի, ապա անդամ պետությունը դեպքի նկարագրության հիման վրա կարող է որոշել կիրառել ոչնչացման միջոցառումներ վարակի ծագում ունեցող անասնագոմում՝ այն անասնագոմի փոխարեն կամ, ի լրումն այն անասնագոմի, որտեղ վարակը հաստատվել է. եթե մեկից ավելի անասունների խմբերի կողմից հողն օգտագործվել է ընդհանուր արածելու համար, ապա անդամ պետությունները կարող են որոշել սահմանափակել նման միջոցների կիրառությունը անասունների մեկ խմբի նկատմամբ՝ հաշվի առնելով համաճարակաբանական բոլոր հիմնավորված գործոնները. եթե մեկ անասնանոցում պահվել է մեկից ավելի անասունների խմբեր, ապա անդամ պետությունները կարող են որոշել սահմանափակել այդ միջոցների կիրառությունը անասունների մեկ խմբի նկատմամբ, որտեղ ՓՍԷ-ի դեպքը հաստատվել է՝ պայմանով, որ այդ խմբերը վստահաբար պահվում են իրարից մեկուսացված, եւ որ հավանական չէ, որ անասունների խմբերի միջեւ վարակը կտարածվի ուղղակի կամ անուղղակի շփման միջոցով:

3. Անասնանոցում 2.3 (ա) եւ (բ)(i) ու (ii) կետերում նշված միջոցների կիրառությունից հետո՝

3.1. անասնանոց կարող են բերվել միայն հետեւյալ անասունները՝

ա) ARR/ARR գենոտիպի արու ոչխարներ.

բ) առնվազն մեկ ARR ալել եւ ոչ մի VRQ ալել կրող էգ ոչխարներ.

գ) այծեր, պայմանով, որ՝

i) (ա) եւ (բ) կետերում նշված գենոտիպերից բացի՝ անասնանոցում տեսակի վերարտադրության նպատակով առկա չէ որեւէ այլ ոչխար.

ii) անասուններին ոչնչացնելուց հետո տարածքում կենդանիների կացարանի մանրակրկիտ մաքրում եւ ախտահանում է կատարվել:

3.2. Անասնագոմում (անասնագոմերում) կարող են օգտագործվել միայն հետեւյալ ոչխարների սաղմնային ապրանքները՝

ա) ARR/ARR գենոտիպի խոյերի սերմնահեղուկը.

բ) առնվազն մեկ ARR ալել եւ ոչ մի VRQ ալել կրող սաղմերը:

3.3. Անասնանոցից կենդանիների տեղաշարժը ենթակա է հետեւյալ պայմանների՝

ա) ARR/ARR ոչխարների տեղաշարժը անասնագոմից չպետք է սահմանափակվի.

բ) միայն մեկ ARR ալել կրող ոչխարը կարող է տեղաշարժվել անասնանոցից միայն մարդու կողմից սպառման համար սպանդի ուղիղ գնալու նպատակով կամ ոչնչացվելու համար. այնուամենայնիվ

– մեկ ալել կրող մաքիները կարող են տեղափոխվել մեկ այլ անասնանոց, որը սահմանափակման ենթակա է 2.3 (բ)(ii) կամ 4 կետի համաձայն միջոցների կիրառությունից հետո.

– եթե իրավասու մարմինը որոշում է, գառները եւ ձագերը կարող են, նախքան սպանդը, տեղափոխվել մեկ այլ անասնանոց բացառապես բոման նպատակով. այդ անասնանոցում չպետք է լինի որեւէ այլ ոչխար կամ այծ, բացի այն ոչխարներից եւ այծերից, որոնք այդտեղ են բոման նպատակով՝ նախքան սպանդը եւ կենդանի ոչխարներ ու այծեր չպետք է ուղարկվեն այլ անասնանոց, բացառությամբ եթե ուղարկվում են տվյալ անդամ պետության տարածքում գտնվող սպանդանոցը.

գ) ոչխարները կարող են տեղափոխվել՝ պայմանով, որ անասնանոցը ենթակա լինի խորացված ՓՍԷ դիտանցման՝ ներառյալ բոլոր ոչխարների փորձաստուգումը, որոնք 18 ամսականից մեծ են եւ՝

i) սպանդի են ենթարկվել մարդու կողմից սպառման նպատակով իրենց արտադրողական կյանքի վերջում. կամ

ii) սատկել կամ սպանվել են անասնանոցում եւ բավարարում են III հավելվածի Ա գլխի II մասի 3-րդ կետում սահմանված պայմանները.

դ) եթե անդամ պետությունը որոշում է, գառները եւ երեք ամսականից փոքր ձագերը կարող են սպանդի համար տեղափոխվել տվյալ անասնագոմից՝ մարդու կողմից սպառման նպատակով:

3.4. 3.1, 3.2 եւ 3.3 կետերում սահմանված սահմանափակումները շարունակվում են կիրառվել անասնագոմի նկատմամբ երկու տարվա ընթացքում՝

ա) ARR/ARR կարգավիճակ ստանալու ամսաթվից անասնանոցի բոլոր ոչխարների համար. կամ

բ) վերջին օրվանից, երբ ոչխարները կամ այծերը պահվել են տվյալ տարածքում. կամ

գ) 3.3 (գ) կետում սահմանված՝ ՓՍԷ-ի խորացված դիտանցումն սկսելու ամսաթվից. կամ

դ) այն ամսաթվից, երբ անասնագոմի տեսակի վերարտադրման ենթակա բոլոր խոյերը ARR/ARR գենոտիպի են անասնանոցում եւ բոլոր բուծվող մաքիները կրում են առնվազն մեկ ARR ալել եւ ոչ մի VRQ ալել՝ պայմանով, որ երկու տարվա ընթացքում բացասական արդյունք ստացվի ՓՍԷ փորձաստուգումից 18 ամիսը լրացած հետեւյալ անասունների մոտ՝

– մարդու կողմից սպառման նպատակով ոչխարների տարեկան նմուշառման մեջ ընդգրկված կենդանիներ դրանց արտադրողական կյանքի վերջում III հավելվածի Ա գլխի II մասի 5-րդ կետում նշված նմուշառման ծավալի համաձայն. եւ

– III հավելվածի, Ա գլխի, II մասի 3-րդ կետում նշված բոլոր ոչխարները, որոնք սատկել կամ սպանվել են անասնանոցում:

4. անասնանոցում 2.3 (b)(iii) կետում սահմանված միջոցների կիրառությունից եւ ՓՍԷ-ն հայտնաբերելուց հետո տեսակի վերարտադրման երկու տարվա ընթացքում՝

ա) բոլոր ոչխարները եւ այծերը անասնանոցում պետք է նույնականացվեն.

- բ) անասնանոցում բոլոր ոչխարները եւ այծերը կարող են տեղաշարժվել միայն տվյալ անդամ պետության տարածքում մարդու կողմից սպառման համար կամ ոչնչացման նպատակով. 18 ամիսը լրացած բոլոր կենդանիները, որոնք սպանդի են ենթարկվել մարդու կողմից սպառման նպատակով, պետք է փորձաստուգվեն ՓՍԷ-ի առկայություն հայտնաբերելու նպատակով՝ X հավելվածի, Գ գլխի, 3.2(բ) կետում սահմանված լաբորատոր մեթոդների համաձայն.
- գ) իրավասու մարմինն ապահովում է, որ սաղմերը եւ ձվաբջիջները չառաքվեն անասնանոցից դուրս.
- դ) միայն ARR/ARR գենոտիպի խոյերի սերմնահեղուկը եւ առնվազն մեկ ARR ու VRQ կրող ոչ մի սաղմ չի կարող օգտագործվել անասնանոցում.
- ե) 18 ամսականից մեծ բոլոր ոչխարները եւ այծերը, որոնք սատկել կամ սպանվել են անասնանոցում, պետք է ենթարկվեն ՓՍԷ փորձաստուգման.
- զ) ARR/ARR գենոտիպի բոլոր արու ոչխարները եւ էգ ոչխարներն այն անասնանոցից, որտեղ ՓՍԷ դեպքեր չեն հայտնաբերվել կամ 3.4 կետում սահմանված պայմանները բավարարող անասնախմբերը կարող են բերվել անասնանոց.
- է) անասնանոց կարող են բերվել այծեր միայն այն անասնանոցից, որտեղ ՓՍԷ-ի դեպքեր չեն հայտնաբերվել կամ որոնք բավարարում են 3.4 կետի պայմանները.
- ը) անասնանոցի բոլոր ոչխարները եւ այծերը ենթակա են ընդհանուր արածելու սահմանափակման, ինչպես կորոշվի իրավասու մարմնի կողմից՝ հաշվի առնելով համաճարակաբանական բոլոր հիմնավոր պատճառները՝
- ի) շեղում կատարելով (բ) կետից, եթե իրավասու մարմինը որոշում է, գառները եւ ձագերը կարող են տեղափոխվել միեւնույն անդամ պետության մեկ այլ անասնանոց բացառապես սպանդից առաջ գիրանալու նպատակով. պայմանով, որ նպատակային անասնանոցում չլինեն որեւէ ոչխար կամ այծ, բացի այն ոչխարներից կամ այծերից, որոնք այդտեղ են սպանդից առաջ գիրանալու նպատակով եւ որ կենդանի ոչխարներ կամ այծեր չուղարկվեն մեկ այլ անասնանոց, բացառությամբ տվյալ անդամ պետության տարածքում անմիջապես սպանդի ենթարկվելու նպատակով:

5. 2.3 (գ) կետում սահմանված շեղումը կիրառելուց հետո, կիրառվում են հետեւյալ միջոցները՝

- ա) կամ սպանվում եւ լիակատար ոչնչացվում են բոլոր կենդանիները, սաղմերը եւ ձվաբջիջները, որոնք նույնականացվել են 1(բ) կետի երկրորդ եւ երրորդ պարբերություններում նշված

հետազոտության արդյունքում: Անդամ պետությունները կարող են որոշել սահմանել ոչխարների պրիոն սպիտակուցային գենոտիպը, որոնք սպանվել կամ ոչնչացվել են.

բ) կամ, վերջին ՓՍԷ-ի դեպքի հայտնաբերումից հետո տեսակի վերարտադրության երկու տարիների ընթացքում, առնվազն հետեյալ միջոցները՝

i) բոլոր ոչխարները եւ այծերը անասնանոցում պետք է նույնականացվեն.

ii) անասնանոցը պետք է ենթարկվի խորացված ՓՍԷ դիտանցման՝ երկու տարվա ընթացքում, այդ թվում՝ պետք է ենթարկվի 18 տարին լրացած եւ մարդու կողմից սպառման նպատակով բոլոր ոչխարների եւ այծերի, ինչպես նաեւ 18 տարին լրացած ու անասնանոցում սատկած կամ սպանված բոլոր ոչխարների եւ այծերի փորձաստուգման.

iii) իրավասու մարմինն ապահովում է, որ բոլոր կենդանի ոչխարները եւ այծերը, սաղմերը եւ ձվաբջիջները, որոնք ստացվել են տվյալ անասնանոցից, չառաքվեն մեկ այլ անդամ պետություն կամ երրորդ երկիր:

6. 2.3(բ)(iii) կետում սահմանված միջոցներ կիրառող եւ 2.3(գ) ու (դ) կետերից շեղում կատարող անդամ պետությունները ծանուցում են Հանձնաժողովին, թե ինչ պայմաններով եւ ինչպիսի չափորոշիչներ են օգտագործվել այդ միջոցները կիրառելիս: Եթե հայտնաբերվում են ՓՍԷ-ի այլ դեպքեր այն անասնախմբերում, որտեղ կիրառվել են շեղումներ, ապա այդ շեղումները կատարելու պայմանները պետք է վերագնահատվեն:

▼M32

ԳԼՈՒԽ Բ

Ճա հողվածի համաձայն՝ ոչխարների մոտ ՓՍԷ-դիմացկունություն ապահովող տեսակի վերարտադրության ծրագրի նվազագույն պահանջները

ՄԱՍ 1

Ընդհանուր պահանջները

1. Տեսակի վերարտադրության ծրագիրը պետք է կենտրոնացած լինի բարձր գենետիկ հատկություններ ունեցող անասնախմբերի վրա:
2. Պետք է ստեղծվի տվյալների բազա՝ ներառելով առնվազն հետեյալ տեղեկությունները՝

ա) տեսակի վերարտադրության ծրագրում մասնակցող բոլոր անասնախմբերի կենդանիների նույնականությունը, ցեղատեսակը եւ թիվը.

բ) տեսակի վերարտադրության ծրագրի շրջանակում որպես նմուշ վերցված առանձին կենդանիների նույնականացումը.

գ) գենոտիպի փորձաստուգման արդյունքները:

3. Պետք է հաստատվի ընդհանուր հավաստագրման համակարգ, որի համաձայն, տեսակի վերարտադրության ծրագրով նմուշառված յուրաքանչյուր կենդանի հավաստագրվում է՝ ըստ նույնականացման առանձին համարի:

4. Կենդանիների եւ նմուշների նույնականացման համակարգը, նմուշների փորձաստուգումը եւ արդյունքների տրամադրումը պետք է այնպես կատարվի, որ մարդու կողմից կատարվող սխալները հասցվեն նվազագույնի: Այդ համակարգի արդյունավետությունը պետք է պարբերաբար պատահականության սկզբունքով ստուգվի:

5. Տեսակի վերարտադրության ծրագրի նպատակներով հավաքված արյան եւ հյուսվածքների գենոտիպավորումն իրականացվում է այն լաբորատորիաներում, որոնք հաստատվել են այդ ծրագրի շրջանակներում:

6. Անդամ պետության իրավասու մարմինը կարող է օժանդակել բուժմամբ զբաղվող կազմակերպություններին գենետիկ բանկեր ստեղծելու հարցում՝ ներառյալ պրիոն սպիտակուցային գենոտիպերին հատուկ սեղմնահեղուկը, ձվաբջիջները եւ (կամ) սաղմերը, որոնք կարող են հազվագյուտ դառնալ տեսակի վերարտադրության ծրագրի հետեւանքով:

7. Տեսակի վերարտադրության ծրագիր կազմվում է յուրաքանչյուր ցեղատեսակի համար՝ հաշվի առնելով հետեւյալը՝

ա) ցեղատեսակի ներսում տարբեր ալելների հաճախականությունը.

բ) ցեղատեսակի հազվագյուտ լինելը.

գ) ներցեղային խաչասերում կատարելուց եւ գենետիկ կազմից հեռանալուց խուսափում:

ՄԱՍ 2

Ծրագրում ներառված անասնախմբերի համար հատուկ կանոնները

1. Տեսակի վերարտադրության ծրագիրը նպատակաուղղված է ARR ալելի հաճախականությունը ոչխարների հոտում մեծացնելուն, միեւնույն ժամանակ նվազեցնելով այն ալելների առկայությունը, որոնք նպաստում են ՓՍԷ-ների առաջացմանը:
2. Ծրագրում մասնակից անասնախմբերի համար նվազագույն պահանջները հետեւյալն են՝
 - ա) անասնախմբի բոլոր կենդանիները, որոնց գենոտիպը սահմանված է, պետք է նույնականացվեն ապահով միջոցներով.
 - բ) անասնախմբի մեջ տեսակի վերարտադրության համար նախատեսված բոլոր խոյերի գենոտիպը պետք է սահմանվի՝ նախքան բուծումն սկսելը.
 - գ) VRQ ալել կրող բոլոր որձ կենդանիները պետք է սպանդի կամ ամորձատման (կաստրացիա) ենթարկվեն գենոտիպի սահմանմանը հետեւող վեց ամսվա ընթացքում. Նման կենդանիները չպետք է հեռանան սպանդանոցից, բացառությամբ բուծման նպատակի.
 - դ) էգ կենդանիները, որոնք կրում են VRQ ալել, չպետք է հեռանան անասնանոցից, բացառությամբ բուծման նպատակի
 - ե) որձ կենդանիները, այդ թվում՝ սերմնահեղուկի դոնորները որոնք օգտագործվում են արհեստական բեղմնավորման նպատակով, բացառությամբ այն կենդանիների, որոնք հավաստագրված են տեսակի վերարտադրության ծրագրի շրջանակներում, չպետք է բուծման նպատակով օգտագործվեն անասնախմբի ներսում:
3. Անդամ պետությունները կարող են որոշել շեղում կատարելու իրավունք տրամադրել 2(գ) եւ (դ) կետում սահմանված պահանջից ցեղատեսակների եւ արտադրական հատկանիշները պաշտպանելու նպատակով:
4. Անդամ պետությունները տեղեկացնում են Հանձնաժողովին 3-րդ կետի համաձայն տրամադրված շեղումների եւ օգտագործված չափորոշիչների մասին:

ՄԱՍ 3

Ոչխարների հոտերի ՓՍԷ-ակայուն կարգավիճակի ճանաչման համակարգը

1. Այդ համակարգով ճանաչվում է այն ոչխարների հոտերի ՓՍԷ կայուն կարգավիճակը, որոնք 6ա հոդվածում սահմանված կարգով, տեսակի վերարտադրության ծրագրում մասնակցելու շնորհիվ բավարարում են ծրագրով պահանջվող չափորոշիչները:

Ճանաչումը տրամադրվում է առնվազն հետևյալ երկու մակարդակներում՝

- ա) I կարգի հոտեր են համարվում այն հոտերը, որոնք ամբողջապես բաղկացած են ARR/ARR գենոտիպի ոչխարներից.
- բ) II կարգի հոտեր համարվում են այն հոտերը, որոնց ձագերը ծնվել են բացառապես ARR/ARR գենոտիպի խոյերից:

Անդամ պետությունները կարող են որոշել ճանաչել այլ կարգեր նույնպես՝ ազգային պահանջներին համապատասխան:

2. ՓՍԷ-ակայուն հոտերից կանոնավոր պատահականության սկզբունքով պետք է ոչխարների նմուշառում կատարվի՝

- ա) ֆերմայում կամ սպանդանոցում՝ դրանց գենոտիպը հաստատելու համար.
- բ) I կարգի հոտերի դեպքում՝ սպանդանոցում 18 ամիսը լրացած կենդանիների նկատմամբ ՓՍԷ փորձաստուգում՝ III հավելվածի համաձայն:

ՄԱՍ 4

Անդամ պետությունների կողմից Հանձնաժողովին ներկայացվող հաշվետվությունները

Անդամ պետությունները ոչխարների պոպուլյացիայում ՓՍԷ-ակայունության ընտրության տեսակի վերարտադրության ազգային ծրագրեր ներդնելիս ծանուցում են Հանձնաժողովին նման ծրագրի պահանջների մասին եւ առաջընթացի մասին տարեկան հաշվետվություն են տրամադրում: Յուրաքանչյուր օրացուցային տարվա հաշվետվությունը ներկայացվում է ամենաուշը հաջորդ տարվա մարտի 31-ին:

▼B

ՇՈՒԿԱՅԱՀԱՆՈՒՄԸ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ

▼M5

ԳԼՈՒԽ Ա

▼M16

Կենդանիների, սերմնահեղուկի եւ սաղմերի ներհամայնքային առետրի պայմանները

▼M31

I. ՈՉԽԱՐՆԵՐԻՆ, ԱՅԾԵՐԻՆ, ԴՐԱՆՑ ՍԵՐՄՆԱՀԵՂՈՒԿԻՆ ԵՎ ՍԱՂՄԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

▼M5

Ոչխարների եւ այծերի առետրի համար կիրառվում են հետեւյալ պայմանները.

▼M14

ա) տեսակի վերարտադրության համար նախատեսված ոչխարները եւ այծերը կա'մ ARR/ARR պրիոնի սպիտակուցային գենոտիպով ոչխարներն են՝ սահմանված Հանձնաժողովի 2002/1003/ԵՀ որոշման I հավելվածով (24), (24), կա'մ այն այծերն ու ոչխարները, որոնք ի ծնե շարունակաբար կամ իրենց կյանքի վերջին երեք տարվա ընթացքում պահվել են առնվազն երեք տարի շարունակ հետեւյալ պահանջները բավարարած անասնանոցում կամ անասնանոցներում՝

i) մինչեւ 2007 թվականի հունիսի 30-ը՝

- կենդանիները պաշտոնապես ենթարկվում են կանոնավոր ստուգումների անասնաբույժի կողմից.
- կենդանիները նշադրվում են.
- քորուկի դեպքեր չեն հայտնաբերվել.,
- անցկացվում են ստուգումներ՝ սպանդի համար նախատեսված ծեր էգ կենդանիներից փորձանմուշ վերցնելով.,

iii) - Էզերը, բացառությամբ ARR/ARR պրիոնի սպիտակուցային գենոտիպով ոչխարների, բերվում են անասնանոց միայն այն դեպքում, եթե դրանք տեղափոխվում են միեւնույն պահանջներին համապատասխանող անասնանոց:

Ամենաուշը 2004 թվականի հուլիսի 1-ից անասնանոցը կամ անասնանոցները բավարարում են հետեւյալ լրացուցիչ պահանջները՝

- III հավելվածի Ա գլխի II մասի 3-րդ կետում նշված՝ 18 ամսականից մեծ բոլոր կենդանիները, որոնք սատկել են կամ որոնց մորթել են անասնանոցում, անցնում են քորուկի հետազոտություն՝ X հավելվածի Գ գլխի 3.2(բ) կետով սահմանված լաբորատոր մեթոդներին համապատասխան, եւ
- ոչխարները եւ այծերը, բացառությամբ ARR/ARR պրիոնի սպիտակուցային գենոտիպով ոչխարների, բերվում են անասնանոց միայն այն դեպքում, եթե դրանք տեղափոխվում են միեւնույն պահանջներին համապատասխանող անասնանոց:

ii) 2007 թվականի հուլիսի 1-ից՝

- կենդանիներն անասնաբույժի կողմից պաշտոնապես ենթարկվում են կանոնավոր ստուգումների.
- կենդանիները նույնականացվում են Համայնքի օրենսդրությանը համապատասխան,
- քորուկի դեպքեր չեն հայտնաբերվել.
- III հավելվածի Ա գլխի II մասի 3-րդ կետում նշված՝ 18 ամսականից բարձր այն բոլոր կենդանիները, որոնք սատկել են կամ որոնց մորթել են անասնանոցում, անցել են քորուկի հետազոտություն՝ X հավելվածի Գ գլխի 3.2(բ) կետով սահմանված լաբորատոր մեթոդներին համապատասխան,
- ոչխարները եւ այծերը, բացառությամբ ARR/ARR պրիոնի սպիտակուցային գենոտիպով ոչխարների, բերվում են անասնագոմ միայն այն դեպքում, եթե դրանք տեղափոխվում են նույն պահանջներին համապատասխանող անասնագոմ:

Եթե դրանք նախատեսված են այնպիսի անդամ պետության համար, որն իր ամբողջ տարածքի կամ դրա մի մասի համար օգտվում է (բ) կամ (գ) կետով սահմանված դրույթներից, ապա տեսակի վերարտադրման ենթակա ոչխարները եւ այծերը համապատասխանում են ընդհանուր կամ մասնավոր՝ 24(2) հոդվածում

նշված ընթացակարգին համապատասխան սահմանված հավելյալ երաշխիքներին:

▼M5

բ) այն անդամ պետությունը, որն իր ամբողջ տարածքի կամ դրա մի մասի համար ունի քորուկի վերահսկման ազգային ծրագիր՝ պարտադիր կամ կամավորական հիմունքներով՝

i) կարող է Հանձնաժողովին ներկայացնել նշված ծրագիրը՝ ընդգծելով, մասնավորապես՝

- անդամ պետությունում հիվանդության տարածվածությունը.
- ծրագիրն իրականացնելու պատճառները՝ հաշվի առնելով հիվանդության կարելիությունը եւ ծախս-օգուտ հարաբերակցության գործակիցը,
- այն աշխարհագրական տարածքը, որտեղ իրականացվելու է ծրագիրը.
- անասնանոցի կարգավիճակի համար սահմանված կատեգորիաները եւ այն ստանդարտները, որոնք պետք է ապահովել յուրաքանչյուր նման կատեգորիայում.
- հետազոտությունների կիրառվելիք ընթացակարգերը.
- ծրագրի դիտանցման ընթացակարգերը.
- այն միջոցը, որը պետք է ձեռնարկել, եթե որեւէ պատճառով անասնանոցը կորցնում է իր կարգավիճակը,
- այն միջոցները, որոնք պետք է ձեռնարկել, եթե ծրագրի դրույթներին համապատասխան իրականացված ստուգումների արդյունքները դրական են,

(ii) (i) կետում նշված ծրագիրը կարող է հաստատվել, եթե այն համապատասխանում է այդ կետով սահմանված չափորոշիչներին՝ 24(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան: Ընդհանուր կամ մասնավոր այն հավելյալ երաշխիքները, որոնց անհրաժեշտությունը կարող է առաջանալ ներհամայնքային առեստրում, սահմանվում են նույն ժամանակահատվածում կամ ծրագիրը հաստատվելուց հետո ամենաուշը երեք ամսվա ընթացքում՝ 24(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան: Այս երաշխիքները չպետք է գերազանցեն անդամ պետության կողմից ազգային մակարդակով իրականացվող երաշխիքները.

iii) անդամ պետությունների կողմից ներկայացված ծրագրերի փոփոխությունները կամ լրացումները կարող են հաստատվել 24(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան: ii) կետին

համապատասխան սահմանված երաշխիքների փոփոխությունները կարող են հաստատվել այդ ընթացակարգին համապատասխան,

գ) եթե անդամ պետությունը համարում է, որ իր ամբողջ տարածքում կամ դրա մի մասում չկա քորուկ, ապա՝

ի) այն պետք է Հանձնաժողովին ներկայացնի համապատասխան փաստաթղթերը, նշելով, մասնավորապես՝

- հիվանդության նկարագրությունն իր տարածքում.

- հետազոտական փորձաստուգումների արդյունքները՝ հիմնված շիճաբանական, միկրոկենսաբանական, ախտաբանական կամ համաճարակաբանական հետազոտությունների վրա.

- այն ժամանակահատվածը, որի ընթացքում իրականացվել է հսկողությունը.

- հիվանդության բացակայությունը հավաստող միջոցները.

(ii) ընդհանուր կամ մասնավոր այն հավելյալ երաշխիքները, որոնց անհրաժեշտությունը կարող է առաջանալ ներհամայնքային առեւտրում, պետք է սահմանվեն՝ 24(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան: Այս երաշխիքները չպետք է գերազանցեն անդամ պետության կողմից ազգային մակարդակով իրականացվող երաշխիքները.

iii) շահագրգիռ անդամ պետությունը պետք է ծանուցի Հանձնաժողովին (i) կետով սահմանված՝ հիվանդությանը վերաբերող տվյալների ցանկացած փոփոխության մասին: Այս ծանուցման լույսի ներքո, (ii) կետին համապատասխան սահմանված երաշխիքները կարող են փոփոխվել կամ դադարեցվել՝ 24(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:

▼M16

դ) 2005 թվականի հունվարի 1-ից ոչխարների եւ այծերի սերմնահեղուկներն ու սաղմերը՝

ի) վերցնում են այն կենդանիներից, որոնք ի ծնե շարունակաբար կամ իրենց կյանքի վերջին երեք տարվա ընթացքում պահվել են երեք տարի շարունակ (ա)(i) ենթապարբերության կամ, անհրաժեշտության դեպքում, (ա)(ii) ենթապարբերության պահանջները բավարարած անասնանոցում կամ անասնանոցներում,

ii) ոչխարների սերմնահեղուկները վերցնում են ARR/ARR պրիոն սպիտակուցային գենոտիպով արու կենդանիներից՝ սահմանված Հանձնաժողովի 2002/1003/ԵՀ որոշման I հավելվածով (25), (25)կամ

iii) ոչխարների սերմնահեղուկները վերցնում են ARR/ARR պրիոն սպիտակուցային գենոտիպով արու կենդանիներից՝ սահմանված Հանձնաժողովի 2002/1003/ԵՀ որոշման I հավելվածով

▼M31

II. ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Միացյալ Թագավորությունն ապահովում է, որ նախքան 1996 թվականի օգոստոսի 1-ն իր տարածքում ծնված կամ բուծվող խոշոր եղջերավոր անասունները չտեղափոխվեն իր տարածքից այլ անդամ պետություններ կամ երրորդ երկրներ:

▼B

ԳԼՈՒԽ Բ

15(2) հոդվածում նշված՝ հաստատված փոխանցվող սպունգանման էնցեֆալոպաթիայով կամ դրա կասկածով կենդանիների սերունդներին վերաբերող պայմանները

Արգելվում է շուկայահանել ՓՍԷ-ով վարակված էգ խոշոր եղջերավոր անասունների կամ ԽԵԱՍԷ-ով հիվանդ ոչխարների կամ այծերի վերջին սերունդները, որոնք ծնվել են հիվանդության զարգացման առաջին կլինիկական ախտանշաններն ի հայտ գալուց առաջ երկու տարվա ընթացքում կամ դրանից հետո:

▼M31

ԳԼՈՒԽ Գ

Կենդանական ծագում ունեցող որոշակի մթերքների ներհամայնքային առևտրին ներկայացվող պայմանները

ԲԱԺԻՆ Ա

Մթերքները

Կենդանական ծագում ունեցող հետեյալ մթերքներն ազատված են 16(3) հոդվածում նշված արգելքից՝ պայմանով, որ դրանց պատրաստվել են Բ բաժնի պահանջները բավարարող խոշոր եղջերավոր անասուններից, ոչխարներից եւ այծերից՝

- թարմ միս.
- աղացած միս.
- մսային կիսաֆաբրիկատներ.
- մսամթերք:

ԲԱԺԻՆ Բ

Պահանջները

Ա բաժնում նշված մթերքները պետք է բավարարեն հետևյալ պահանջները.

- ա) կենդանիները, որոնցից ստացվել են խոշոր եղջերավոր անասուններից, ոչխարներից եւ այծերից կենդանական ծագում ունեցող արտադրանք, չեն կերակրվել որոճողներից ստացված մսատկրային այլուրով կամ ճարպատակուցքի կերով եւ անցել են նախասպանդային ու հետսպանդային զննումներ.
- բ) այն խոշոր եղջերավոր անասունները, ոչխարները եւ այծերը, որոնցից մթերք է պատրաստվել, սպանդի չեն ենթարկվել ներգանգային խոռոչ գազ ներարկելու միջոցով շմեցվելուց հետո կամ չեն մորթվել նույն մեթոդով կամ սպանդի ենթարկվել կենտրոնական նյարդային հյուսվածքը բթացնելուց հետո՝ երկար ցուպիկաձեւ գործիքով պատռվածք կատարելով եւ գլխուղեղի խոռոչ թափանցելով,
- գ) եղջերավոր անասուններից, ոչխարներից եւ այծերից ստացվող՝ կենդանական ծագում ունեցող արտադրանքը չի ստացվել՝
- i) հատուկ ռիսկայնության նյութից, ինչպես սահմանված է V հավելվածում.
- ii) մսի ոսկրազատման գործընթացում բացված նյարդային եւ ավշային հյուսվածքից, եւ
- iii) մեխանիկական եղանակով առանձնացված մսից, որն ստացվել է խոշոր եղջերավոր կենդանիների, ոչխարների կամ այծերի ոսկորներից:

▼B

ԳԼՈՒԽ Դ

Արտահանումների համար կիրառելի պայմանները

Կենդանի խոշոր եղջերավոր անասունները եւ դրանցից ստացված կենդանական ծագում ունեցող ապրանքները պետք է երրորդ երկրներ կատարվող արտահանումների առումով ենթարկվեն միջհամայնքային առետորին վերաբերող՝ սույն Կանոնակարգով սահմանված կանոններին:

ԿԵՆԴԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ, ՍԱՂՄԵՐԻ, ԶՎԱԲՋԻՋՆԵՐԻ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐԿՐՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔ

▼M31 _____

▼M31

ԳԼՈՒԽ Բ

Խոշոր եղջերավոր անասունների ներկրումը

ԲԱԺԻՆ Ա

ԽԵԱՍԷ–ի աննշան ռիսկ ունեցող երկրից կամ տարածաշրջանից ներկրում

1. ԽԵԱՍԷ աննշան ռիսկի կարգավիճակ ունեցող երկրից կամ տարածաշրջանից Ա բաժնում նշված խոշոր եղջերավոր կենդանիներից, ոչխարներից եւ այծերից ստացված արտադրանքի ներմուծման դեպքում պետք է ներկայացվի կենդանիների առողջության մասին վկայագիրն այն մասին, որ.

- ա) կենդանիները ծնվել եւ մշտապես բուծվել են թիվ 999/2001 կանոնակարգի (ԵՀ) 5(2) հոդվածի համաձայն դասակարգված երկրում կամ տարածաշրջանում՝ որպես ԽԵԱՍԷ աննշան ռիսկի երկիր կամ տարածաշրջան.
- բ) կենդանիները նույնականացվել են հիմնական նույնականացման համակարգով, որը հնարավորություն է տալիս հայտնաբերելու, թե որ էգից կամ հոտից են նրանք առաջացել եւ հավաստել, որ դրանք վարակված խոշոր եղջերավոր անասուններ չեն, ինչպես նկարագրված է Գ գլխի I մասի II հավելվածի (4) (բ) (iv) կետում. եւ
- գ) եթե տվյալ երկրում եղել են տեղանքին հատուկ ԽԵԱՍԷ–ի դեպքեր, ապա հավաստել, որ կենդանիները ծնվել են որոճողներից ստացված մսաուսկորային մթերքով եւ ճարպատակուցքային կերով որոճողներին կերակրելու ամսաթվից հետո արգելքը արդյունավետ կերպով կիրարկվելուց հետո, կամ հավաստել, որ դրանք ծնվել են տեղանքին հատուկ ԽԵԱՍԷ–ի վերջին դեպքից հետո, պայմանով, որ ծնված լինեն անասնակերի մասով արգելքի ամսաթվից հետո:

ԲԱԺԻՆ Բ

ԽԵԱՍԷ-ն վերահսկող ռիսկի երկրից կամ տարածաշրջանից ներկրում

1. ԽԵԱՍԷ-ն վերահսկող ռիսկի երկրից կամ տարածաշրջանից Ա բաժնում նշված խոշոր եղջերավոր կենդանիներից, ոչխարներից եւ այծերից ստացված արտադրանքի ներմուծման դեպքում պետք է ներկայացվի կենդանիների առողջության մասին վկայագիրն այն մասին, որ.

- ա) այդ երկիրը կամ տարածաշրջանը դասակարգված է համաձայն թիվ 999/2001 կանոնակարգի (ԵՀ) 5(2) հոդվածի՝ որպես վերահսկվող ԽԵԱՍԷ ռիսկ ներկայացնող երկիր կամ տարածաշրջան.
- բ) կենդանիները նույնականացվել են նույնականացման հիմնական համակարգով, որը հնարավորություն է տալիս հայտնաբերելու այն կենդանիներին կամ հոտը, որոնցից ստացվել է տվյալ արտադրանքը, եւ դրանք վարակված խոշոր եղջերավոր անասուններ չեն, ինչպես նկարագրված է II հավելվածի Գ գլխի, II մասի, (4)(բ)(iv) կետում.
- գ) եթե տվյալ երկրում եղել են տեղանքին հատուկ ԽԵԱՍԷ դեպքեր, ապա հավաստել, որ կենդանիները ծնվել են որոճողներից ստացված մսատուրային մթերքով եւ ճարպատակուցքի կերով որոճողներին կերակրելու ամսաթվից հետո արգելքը արդյունավետ կերպով կիրարկվելուց հետո, կամ հավաստել, որ դրանք ծնվել են տեղանքին հատուկ ԽԵԱՍԷ-ի վերջին դեպքից հետո, պայմանով, որ ծնված լինեն անասնակերի մասով արգելքի կիրարկման ամսաթվից հետո:

ԲԱԺԻՆ Գ

Ներմուծում չսահմանված ԽԵԱՍԷ ռիսկի կարգավիճակ ունեցող երկրից կամ տարածաշրջանից

1. Վերահսկվող ԽԵԱՍԷ ռիսկի կարգավիճակ ունեցող երկրից կամ տարածաշրջանից Ա բաժնում նշված խոշոր եղջերավոր կենդանիներից, ոչխարներից եւ այծերից ստացված արտադրանքի ներմուծման դեպքում պետք է ներկայացվի կենդանիների առողջության մասին վկայագիրն այն մասին, որ.

- ա) այդ երկիրը կամ տարածաշրջանը դասակարգված է համաձայն թիվ 999/2001 կանոնակարգի (ԵՀ) 5(2) հոդվածի՝ որպես չսահմանված ԽԵԱՍԷ դիսկ ներկայացնող երկիր կամ տարածաշրջան.
- բ) կենդանիները նույնականացվել են նույնականացման հիմնական համակարգով, որը հնարավորություն է տալիս հայտնաբերելու այն կենդանիներին կամ հոտը, որոնցից ստացվել է տվյալ արտադրանքը, եւ դրանք վարակված խոշոր եղջերավոր անասուններ չեն, ինչպես նկարագրված է II հավելվածի Գ գլխի, II մասի, (4)(բ)(iv) կետում.
- գ) կենդանիները ծնվել են որոճողներից ստացված մասոսկորային մթերքով եւ ճարպատակուցքի կերով որոճողներին կերակրելու ամսաթվից սկսած արգելքը արդյունավետ կերպով կիրարկվելուց առնվազն երկու տարի հետո, կամ հավաստել, որ դրանք ծնվել են տեղանքին հատուկ ԽԵԱՍԷ վերջին դեպքից հետո, պայմանով, որ ծնված լինեն անասնակերի մասով արգելքի կիրարկման ամսաթվից հետո:

ԳԼՈՒԽ Գ

Վերահսկող ԽԵԱՍԷ դիսկի երկրից կամ տարածաշրջանից ներկրումները

▼M33

ԲԱԺԻՆ Ա

Մթերքները

Խոշոր եղջերավոր անասուններից, ոչխարներից եւ այծերից ստացված՝ կենդանական ծագում ունեցող հետեւյալ մթերքները, ինչպես սահմանված է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 853/2004 կանոնակարգում (ԵՀ) (26) ենթակա են Բ, Գ, Դ բաժիններում սահմանված պայմաններին՝ կախված ծագման երկրի ԽԵԱՍԷ դիսկի կատեգորիայից՝

- թարմ միս.
- աղացած միսը եւ մսային կիսապատրաստվածքներ.
- մսամթերք.
- վերամշակված աղիքներ.
- հալած կենդանական ճարպեր.

– ճարպատակուցք.

– դոնդող:

▼M31

ԲԱԺԻՆ Բ

ԽԵԱՍԷ աննշան ռիսկի երկրից կամ տարածաշրջանից ներկրում

ԽԵԱՍԷ աննշան ռիսկի կարգավիճակ ունեցող երկրից կամ տարածաշրջանից Ա բաժնում նշված խոշոր եղջերավոր կենդանիներից, ոչխարներից եւ այծերից ստացված՝ կենդանական ծագում ունեցող արտադրանքի ներմուծման դեպքում պետք է ներկայացվի կենդանիների առողջության մասին վկայագիրն այն մասին, որ.

- ա) այդ երկիրը կամ տարածաշրջանը, համաձայն թիվ 999/2001 կանոնակարգի (ԵՀ) 5(2) հոդվածի, դասակարգված է որպես ԽԵԱՍԷ աննշան ռիսկ ներկայացնող երկիր կամ տարածաշրջան.
- բ) կենդանիները, որոնցից ստացվել են խոշոր եղջերավոր անասուններից, ոչխարներից եւ այծերից ստացված՝ կենդանական ծագում ունեցող արտադրանքը, ծնվել են, շարունակաբար բուծվել եւ սպանդի են ենթարկվել ԽԵԱՍԷ աննշան ռիսկի երկրում եւ անցել են նախասպանդային ու հետսպանդային զննումներ.
- գ) եթե երկրում կամ տարածաշրջանում եղել են տեղանքին հատուկ ԽԵԱՍԷ դեպքեր՝
- ի) կենդանիները ծնվել են այն ամսաթվից հետո, երբ ուժի մեջ է մտել որոճողներին՝ որոճողներից ստացված մսատկրային այլուրով կամ ճարպատակուցքի կերով կերակրելու արգելքը, կամ
- ii) խոշոր եղջերավոր անասուններից, ոչխարներից եւ այծերից ստացված՝ կենդանական ծագում ունեցող արտադրանքը չի պարունակում եւ չի ստացվել նշված հատուկ ռիսկային նյութից, ինչպես սահմանված է թիվ 999/2001 կանոնակարգի (ԵՀ) V հավելվածում, կամ մեխանիկական եղանակով առանձնացված մսից, որն ստացվել է խոշոր եղջերավոր կենդանիների, ոչխարների եւ այծերի ոսկորներից:

ԲԱԺԻՆ Գ

ԽԵԱՍԷ վերահսկվող ռիսկի երկրից կամ տարածաշրջանից ներկրում

1. Վերահսկվող ԽԵԱՍԷ ռիսկի կարգավիճակ ունեցող երկրից կամ տարածաշրջանից Ա բաժնում նշված խոշոր եղջերավոր կենդանիներից, ոչխարներից եւ այծերից ստացված արտադրանքի ներմուծման դեպքում պետք է ներկայացվի կենդանիների առողջության մասին վկայագիրն այն մասին, որ.
 - ա) այդ երկիրը կամ տարածաշրջանը, համաձայն թիվ 999/2001 կանոնակարգի (ԵՀ) 5(2) հոդվածի, դասակարգված է որպես վերահսկվող ԽԵԱՍԷ ռիսկ ներկայացնող երկիր կամ տարածաշրջան.
 - բ) կենդանիները, որոնցից ստացվել են խոշոր եղջերավոր անասուններից, ոչխարներից եւ այծերից ստացված՝ կենդանական ծագում ունեցող արտադրանք, անցել են նախասպանդային ու հետսպանդային զննում.
 - գ) կենդանիները, որոնցից ստացվել են խոշոր եղջերավոր անասուններից, ոչխարներից եւ այծերից ստացված կենդանական ծագում ունեցող՝ արտահանման համար նախատեսված արտադրանք, չեն ենթարկվել սպանդի ներգանգային խոռոչ գազ ներարկելու միջոցով շժմեցվելուց հետո կամ չեն մորթվել նույն մեթոդով կամ սպանդի ենթարկվել կենտրոնական նյարդային հյուսվածքը բթացնելուց հետո՝ երկար ցուպիկածե գործիքով պատռվածք կատարելով եւ գլխուղեղի խոռոչ թափանցելով.
 - դ) խոշոր եղջերավոր անասուններից, ոչխարներից եւ այծերից ստացված՝ կենդանական ծագում ունեցող արտադրանքը չի պարունակում եւ չի ստացվել նշված հատուկ ռիսկայնության նյութից, ինչպես սահմանված է թիվ 999/2001 կանոնակարգի (ԵՀ) V հավելվածում, կամ մեխանիկական եղանակով առանձնացված մսից, որն ստացվել է խոշոր եղջերավոր կենդանիների, ոչխարների եւ այծերի ոսկորներից:
2. Շեղում կատարելով 1(դ) կետից՝ կարող են ներկրվել մսեղիքներ, մսեղիքների կես մասեր, մեծածախ առետրի նպատակով երեքից ավելի մասերի բաժանված մսեղիքների կես մասեր եւ սպեցիֆիկ ռիսկային նյութ չպարունակող քառորդ մասեր՝ բացառությամբ ողնաշարի՝ ներառյալ դորսալ (մեջքային) արմատային նյարդային հանգույցները:
3. Երբ ողնաշարի հեռացում չի պահանջվում, խոշոր եղջերավոր անասունների՝ ողնաշար պարունակող մսեղիքները կամ մսեղիքների մեծածախ վաճառքի համար նախատեսված

մասերը պետք է նույնականացվեն թիվ 1760/2000 կանոնակարգում (ԵՀ) նշված պիտակի վրա կապույտ գծի միջոցով:

4. Ներմուծման դեպքում ողնաշարի պարտադիր հեռացմամբ խոշոր եղջերավոր կենդանիների մսեղիքների կամ մսեղիքների՝ մեծածախ վաճառքի համար նախատեսված մասերի թիվը, ինչպես նաև այն թիվը, երբ ողնաշարի հեռացումը պարտադիր չէ, պետք է ավելացվի թիվ 136/2004 կանոնակարգի (ԵՀ) 2(1) հոդվածում նշված փաստաթղթում:

▼M33

5. Աննշան ԽԵՍԱԷ դիսկի երկրից կամ տարածաշրջանից սկզբնապես ստացված աղիքների դեպքում, մշակված աղիքների ներմուծումն իրականացվում է կենդանիների առողջության վկայագրի տրամադրմամբ այն մասին, որ.

ա) երկիրը կամ տարածաշրջանը, համաձայն 5(2) հոդվածի, դասակարգվում է որպես վերահսկվող ԽԵՍԱԷ դիսկ ներկայացնող երկիր կամ տարածաշրջան.

բ) կենդանիները, որոնցից ստացվել են խոշոր եղջերավոր անասուններից, ոչխարներից եւ այծերից ստացված՝ կենդանական ծագում ունեցող արտադրանքը, ծնվել, շարունակաբար բուծվել ու սպանդի են ենթարկվել աննշան ԽԵՍԱԷ դիսկի երկրում եւ անցել են նախասպանդային ու հետսպանդային զննումներ

գ) եթե աղիքները ստացվում են մի երկրից կամ տարածաշրջանից, որտեղ տեղի են ունեցել ԽԵՍԱԷ տեղանքին հատուկ դեպքեր՝

i) կենդանիները ծնվել են այն ամսաթվից հետո, երբ ուժի մեջ է մտել որոճողներին՝ որոճողներից ստացված մսատկրային ալյուրով կամ ճարպատակուցքի կերով կերակրելու արգելքը, կամ

ii) խոշոր եղջերավոր անասուններից, ոչխարներից եւ այծերից ստացված՝ կենդանական ծագում ունեցող արտադրանքը չի պարունակում հատուկ դիսկայնության նյութ եւ չի ստացվել դրանից՝ ինչպես սահմանված է V հավելվածում:

▼M31

ԲԱԺԻՆ Դ

Ներմուծում՝ չհայտնաբերված ԽԵՍԱԷ-ի ռիսկի երկրից կամ տարածաշրջանից

1. Ա բաժնում նշված խոշոր եղջերավոր անասուններից, ոչխարներից եւ այծերից ստացված՝ կենդանական ծագում ունեցող արտադրանքի՝ չհայտնաբերված ԽԵՍԱԷ ռիսկի երկրից ներմուծման դեպքում պարտադիր պետք է ներկայացվի կենդանիների առողջության վկայագիր այն մասին, որ.
 - ա) կենդանիները, որոնցից ստացվել են խոշոր եղջերավոր անասուններից, ոչխարներից եւ այծերից ստացված կենդանական ծագում ունեցող արտադրանք, չեն կերակրվել որոճողներից ստացված մսաոսկրային ալյուրով կամ ճարպատակուցքի կերով եւ անցել են նախասպանդային ու հետսպանդային զննումներ.
 - բ) այն խոշոր եղջերավոր անասունները, ոչխարները եւ այծերը, որոնցից մթերք է պատրաստվել, սպանդի չեն ենթարկվել ներգանգային խոռոչ գազ ներարկելու միջոցով շմեցվելուց հետո կամ չեն մորթվել նույն մեթոդով կամ սպանդի ենթարկվել կենտրոնական նյարդային հյուսվածքը բթացնելուց հետո՝ երկար ցուպիկաձեւ գործիքով պատռվածք կատարելով եւ գլխուղեղի խոռոչ թափանցելով,
 - գ) եղջերավոր անասուններից, ոչխարներից եւ այծերից ստացված՝ կենդանական ծագում ունեցող արտադրանքը չի ստացվել.
 - ի) հատուկ ռիսկայնության նյութից, ինչպես սահմանված է V հավելվածում.
 - ii) մսի ոսկրազատման գործընթացում բացված նյարդային եւ ավշային հյուսվածքից,
 - iii) մեխանիկական եղանակով առանձնացված մսից, որն ստացվել է խոշոր եղջերավոր կենդանիների, ոչխարների կամ այծերի ոսկորներից:
2. Շեղում կատարելով 1(գ) կետից՝ կարող են ներկրվել մսեղիքներ, մսեղիքների կես մասեր, մեծածախ առետրի նպատակով երեքից ավելի մասերի բաժանված մսեղիքների կես մասեր եւ սպեցիֆիկ ռիսկային նյութ չպարունակող քառորդ մասեր՝ բացառությամբ ողնաշարի՝ ներառյալ դորսալ (մեջքային) արմատային նյարդային հանգույցները:
3. Երբ ողնաշարի հեռացում չի պահանջվում, խոշոր եղջերավոր անասունների՝ ողնաշար պարունակող մսեղիքները կամ մսեղիքների մեծածախ վաճառքի համար նախատեսված մասերը պետք է նույնականացվեն թիվ 1760/2000 կանոնակարգում (ԵՀ) նշված պիտակի վրա հստակորեն երեւացող կապույտ գծի միջոցով:

4. Ներմուծման դեպքում ողնաշարի պարտադիր հեռացմամբ խոշոր եղջերավոր կենդանիների մսեղիքի կամ մեծածախ վաճառքի համար նախատեսված մսեղիքի մասերի թվի մասին հատուկ տեղեկությունները, ինչպես նաև տեղեկություններն այն թվի մասին, երբ ողնաշարի հեռացումը պարտադիր չէ, պետք է ավելացվի թիվ 136/2004 կանոնակարգի (ԵՀ) 2(1) հոդվածում նշված փաստաթղթում:

▼M33

5. Աննշան ԽԵՍԱԷ դիսկի երկրից կամ տարածաշրջանից սկզբնապես ծագող աղիքների դեպքում, մշակված աղիքների ներմուծումն իրականացվում է կենդանիների առողջության վկայագրի տրամադրմամբ այն մասին, որ.

ա) երկիրը կամ տարածաշրջանը՝ համաձայն 5(2) հոդվածի, դասակարգվում է որպես վերահսկվող ԽԵՍԱԷ դիսկ ներկայացնող երկիր կամ տարածաշրջան.

բ) կենդանիները, որոնցից ստացվել են խոշոր եղջերավոր անասուններից, ոչխարներից եւ այծերից ստացված՝ կենդանական ծագում ունեցող արտադրանքը, ծնվել են, շարունակաբար բուծվել են եւ սպանդի են ենթարկվել աննշան ԽԵՍԱԷ դիսկով երկրում եւ անցել են նախասպանդային ու հետսպանդային զննումներ

գ) եթե աղիքները ստացվում են մի երկրից կամ տարածաշրջանից, որտեղ տեղի են ունեցել ԽԵՍԱԷ տեղանքին հատուկ դեպքեր՝

i) կենդանիները ծնվել են այն ամսաթվից հետո, երբ ուժի մեջ է մտել որոճողներին՝ որոճողներից ստացված մսատկրային ալյուրով կամ ճարպատակուցքի կերով կերակրելու արգելքը, կամ

ii) խոշոր եղջերավոր անասուններից, ոչխարներից եւ այծերից ստացված՝ կենդանական ծագում ունեցող արտադրանքը չի պարունակում հատուկ դիսկայնության նյութեր եւ չի ստացվում դրանցից՝ ինչպես սահմանված է V հավելվածում:

▼M31

ԳԼՈՒԽ Դ

Կենդանական ծագման օժանդակ արտադրանքի եւ դրանցից ստացված մշակված արտադրանքի ներմուծում՝ ստացված խոշոր եղջերավոր անասուններից, ոչխարներից եւ այծերից

ԲԱԺԻՆ Ա

Կենդանական ծագման օժանդակ արտադրանք

Սույն գլուխը վերաբերում է հետեւյալ կենդանական ծագման օժանդակ արտադրանքին եւ դրանցից ստացված՝ խոշոր եղջերավոր անասուններից, ոչխարներից եւ այծերից ստացված՝ կենդանական ծագում ունեցող՝ մշակված արտադրանքին, ինչպես նշվում է թիվ 1774 /2002 կանոնակարգում (ԵՀ).

-հալած ճարպեր.

-ընտանի կենդանիների կեր.

- արյունից ստացվող արտադրանք.

-վերամշակված կենդանական սպիտակուց.

-ոսկորներ եւ ոսկրային արտադրանք.

-3-րդ կատեգորիայի նյութ, եւ

- դոնորոլ:

▼M41

ԲԱԺԻՆ Բ

Պահանջներ առողջության վկայագրի վերաբերյալ

Սույն գլխի Ա բաժնում նշված կենդանական ծագման օժանդակ արտադրանքի եւ դրանից ստացվող՝ խոշոր եղջերավոր անասուններից, ոչխարներից եւ այծերից ստացված՝ կենդանական ծագում ունեցող՝ մշակված արտադրանքի ներմուծման դեպքում պարտադիր պահանջվում է առողջության վկայագիր այն մասին, որ

- ա) կենդանական ծագման օժանդակ արտադրանքը չի ստացվել հատուկ ռիսկայնության նյութից, ինչպես սահմանված է V հավելվածում, կամ մեխանիկական եղանակով առանձնացված մսից, որն ստացվել է խոշոր եղջերավոր կենդանիների, ոչխարների եւ այծերի ոսկորներից:
- բ) կենդանիները, որոնցից ստացվել է կենդանական ծագման օժանդակ արտադրանքը, սպանդի չեն ենթարկվել ներգանգային խոռոչ գազ ներարկելու միջոցով շժմեցնելուց հետո կամ չեն մորթվել նույն մեթոդով կամ սպանդի ենթարկվել կենտրոնական նյարդային հյուսվածքը

բթացնելուց հետո՝ երկար ցուպիկաձեւ գործիքով պատռվածք կատարելով եւ գլխուղեղի խոռոչ թափանցելով.

- գ) կենդանական ծագման օժանդակ արտադրանքը չի պարունակում խոշոր եղջերավոր անասուններից, ոչխարներից եւ այծերից ստացված՝ կենդանական ծագում ունեցող նյութեր եւ չի ստացվում դրանցից, բացառությամբ նրանց, որոնք ստացվել են համաձայն 5(2) հոդվածի որպես աննշան ԽԵՍԱԷ դիսկ ներկայացնող դասակարգված երկրում կամ տարածաշրջանում ծնված, շարունակաբար բուծված եւ սպանդի ենթարկված կենդանիներից:

Բացի դրանից՝ սույն գլխի Ա բաժնում նշված եւ ոչխարներից կամ այծերից ստացված կաթի կամ կաթնային արտադրանք պարունակող կենդանական ծագման օժանդակ արտադրանքի եւ մշակված արտադրանքի ներմուծման դեպքում պարտադիր պետք է ներկայացվի կենդանիների առողջության վկայագիր, որը համապատասխանում է թիվ 1774/2002 կանոնակարգի (ԵՀ) X հավելվածի 2-րդ գլխին, եւ որում կատարվել է հետեւյալ լրացումը այդ վկայագրի 6-րդ կետից հետո՝

«ինչ վերաբերում է ՓՍԷ-ին.

- 2) կամ որոճողների կերակրման համար նախատեսվող եւ ոչխարներից կամ այծերից ստացված կաթ կամ կաթնային արտադրանք պարունակող կենդանական ծագման օժանդակ արտադրանքի դեպքում, ոչխարները եւ այծերը, որոնցից ստացվել են այդ արտադրանքը, ծնված օրվանից շարունակաբար կամ վերջին երեք տարիների ընթացքում պահվել են մի հաստատությունում, որտեղ չկա տեղաշարժի պաշտոնական սահմանափակում՝ ՓՍԷ կասկածի պատճառով, եւ որը վերջին երեք տարում համապատասխանել է հետեւյալ պահանջներին՝

- i) այն ենթարկվել է կանոնավոր պաշտոնական անասնաբուժական ստուգումների.

- ii) չի ախտորոշվել դասական քրոուկի դեպք, ինչպես սահմանված է թիվ 999/2001 կանոնակարգի (ԵՀ) I հավելվածի 2(է) կետում, կամ դասական քրոուկի դեպքի հաստատումից հետո՝

–բոլոր կենդանիները, որոնց համար հաստատվել է դասական քրոուկի դեպքը, սպանվել եւ ոչնչացվել են , եւ

–հաստատությունում բոլոր այծերը եւ ոչխարները սպանվել եւ ոչնչացվել են՝ բացառությամբ ARR/ARR գենոտիպին պատկանող տեսակի վերարտադրման ենթակա արական սեռի ոչխարների եւ առնվազն մեկ ARR ալել կրող եւ ոչ մի VRQ ալել չկրող տեսակի վերարտադրման ենթակա իգական սեռի ոչխարների.

iii) ոչխարները եւ այծերը՝ բացառությամբ պրիոն հիվանդության սպիտակուցային ARR/ARR գենոտիպով ոչխարների, բերվում են հաստատություն, միայն եթե նրանք գալիս են մի հաստատությունից, որը համապատասխանում է (i) եւ (ii) կետերում ներկայացված պահանջներին:

2) կամ որոճողների կերակրման համար նախատեսվող եւ ոչխարներից կամ այծերից ստացված կաթ կամ կաթնային արտադրանք պարունակող կենդանական ծագման օժանդակ արտադրանքի դեպքում, եւ թիվ 546/2006 կանոնակարգի (ԵՀ) հավելվածում թվարկված անդամ պետությունների համար նախատեսվող կենդանական ենթամթերքի դեպքում ոչխարները եւ այծերը, որոնցից ստացվել է այդ արտադրանքը, ծնված օրվանից շարունակաբար կամ վերջին երեք տարվա ընթացքում պահվել են մի հաստատությունում, որտեղ չկա տեղաշարժի պաշտոնական սահմանափակում՝ ՓՄԷ կասկածի պատճառով, եւ որը վերջին երեք տարում համապատասխանել է հետեւյալ պահանջներին՝

i) այն ենթարկվել է կանոնավոր պաշտոնական անասնաբուժական ստուգումների.

ii) չի ախտորոշվել դասական քրոուկի դեպք, ինչպես սահմանված է թիվ 999/2001 կանոնակարգի (ԵՀ) I հավելվածի 2(է) կետում, կամ դասական քրոուկի դեպքի հաստատումից հետո՝

–բոլոր կենդանիները, որոնց համար հաստատվել է դասական քրոուկի դեպքը, սպանվել եւ ոչնչացվել են , եւ

–հաստատությունում բոլոր այծերը եւ ոչխարները սպանվել եւ ոչնչացվել են, բացառությամբ ARR/ARR գենոտիպին պատկանող տեսակի վերարտադրման ենթակա արական սեռի ոչխարների եւ առնվազն մեկ ARR ալել կրող եւ ոչ մի VRQ ալել չկրող տեսակի վերարտադրման ենթակա իգական սեռի ոչխարների.

iii) ոչխարներ եւ այծեր՝ բացառությամբ պրիոն սպիտակուցային ARR/ARR գենոտիպով ոչխարների, բերվում են հաստատություն միայն այն դեպքում, եթե նրանք գալիս են մի հաստատությունից, որը համապատասխանում է (i) եւ (ii) կետերում ներկայացված պահանջներին:»

ԳԼՈՒԽ Ե

ՈՉԽԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՅԾԵՐԻ ՆԵՐԿՐՈՒՄԸ

2003 թվականի հոկտեմբերի 1-ից Համայնք ներկրված ոչխարների եւ այծերի դեպքում պետք է ներկայացվի կենդանիների առողջության մասին վկայագիր, որը հավաստում է, որ

- ա) կամ նրանք ծնվել եւ շարունակաբար բուծվել են այնպիսի անասնանոցում, որը երբեք չի ախտորոշվել քորուկ հիվանդությամբ, իսկ բուծման նպատակով ոչխարների եւ այծերի դեպքում՝ դրանք բավարարում են VIII հավելվածի A(I) գլխի (ա) կետի (i) ենթապարբերության պահանջները.
- բ) կամ դրանք ARR/ARR պրիոն սպիտակուցային գենոտիպ ունեցող ոչխարներ են, ինչպես սահմանված է Հանձնաժողովի 2002/1003/ԵՀ որոշման I հավելվածում եւ բերվել են մի անասնագումից, որտեղ վերջին վեց ամսվա ընթացքում քորուկ հիվանդության դեպք չի արձանագրվել:

Եթե դրանք նախատեսված են այնպիսի անդամ պետության համար, որն իր ամբողջ տարածքի կամ դրա մի մասի համար օգտվում է VIII հավելվածի Ա(I) գլխի (բ) կամ (գ) կետով սահմանված դրույթներից, ապա բուծման ենթակա ոչխարները եւ այծերը համապատասխանում են ընդհանուր կամ մասնավոր՝ 24(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան սահմանված հավելյալ երաշխիքներին:

▼M31

ԳԼՈՒԽ Զ

Ֆերմայում պահվող եւ վայրի եղջերավոր կենդանիներից կենդանական ծագում ունեցող ապրանքների ներկրումը

1. Եթե ֆերմայում պահվող եղջերավոր կենդանիներից ստացված թարմ միսը, աղացած միսը, մսային կիսապատրաստվածքները եւ մսամթերքը Համայնք են ներկրվում Կանադայից կամ Ամերիկայի Միացյալ Նահանգներից, ապա առողջության մասին վկայագրին կից տրվում է արտադրության երկրի իրավասու մարմնի կողմից տրվող հայտարարագիր՝ հետեւյալ տեքստով՝

«Այս ապրանքը պարունակում է եւ առաջացել է բացառապես ֆերմայում պահվող եղջերավոր կենդանիների մսից (բացի փորոտիքից եւ ողնաշարից), որը բացասական

քրոնիկ ակոբալտոզ հիվանդության քննություն է անցել իրավասու մարմնի կողմից հաստատված հիստոպաթոլոգիայի, իմմունոհիստոքիմիայի եւ այլ ախտորոշման մեթոդներով: Այս միսը չի ստացվել այն հոտից, որտեղ հաստատված կամ պաշտոնական տվյալներով կասկածվում է քրոնիկ ակոբալտոզ հիվանդություն»:

2. Եթե վայրի եղջերավոր կենդանիներից ստացված թարմ միսը, աղացած միսը, մսային կիսապատրաստվածքները եւ մսամթերքը ներկրվում է Համայնք Կանադայից կամ Ամերիկայի Միացյալ Նահանգներից, ինչպես սահմանված է թիվ 853/2004 կանոնակարգով (ԵՀ), ապա առողջության մասին վկայագրին կից տրվում է արտադրության երկրի՝ իրավասու մարմնի կողմից տրվող հայտարարագիր՝ հետեւյալ տեքստով՝

«Այս ապրանքը պարունակում է եւ առաջացել է բացառապես վայրի եղջերավոր կենդանիների մսից (բացի փորոտիքից եւ ողնաշարից), որը բացասական քրոնիկ ակոբալտոզ հիվանդության քննություն է անցել իրավասու մարմնի կողմից հաստատված հիստոպաթոլոգիայի, իմմունոհիստոքիմիայի եւ այլ ախտորոշման մեթոդներով: Այս միսը չի ստացվել այն հոտից, որտեղ հաստատված կամ պաշտոնական տվյալներով կասկածվում է քրոնիկ ակոբալտոզ հիվանդություն»:

▼M31 _____

▼M16

ԳԼՈՒԽ Ը

Ոչխարների եւ այծերի սերմնահեղուկի ու սաղմերի ներկրումը

2005 թվականի հունվարի 1-ից Համայնք ներկրված ոչխարների եւ այծերի սերմնահեղուկն ու սաղմերը պետք է բավարարեն Ա(1)(դ) գլխի VIII հավելվածի պահանջները:

▼B

**ԷՏԱԼՈՆԱՅԻՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԸ, ՆՄՈՒՇԱՌՈՒՄԸ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

ԳԼՈՒԽ Ա

Ազգային էտալոնային լաբորատորիաները

1. Նախատեսված ազգային մեթոդաբանական լաբորատորիան պետք է՝

ա) իր տնօրինության տակ ունենա ենթակառուցվածք եւ մասնագիտական անձնակազմ, որի միջոցով մշտապես հնարավոր է վերհանել ՓՍԷ հարուցիչի տեսակը եւ շտամը, հատկապես երբ տվյալ հիվանդությունը նոր է առաջանում եւ հաստատել տարածաշրջանային ախտորոշիչ լաբորատորիաների կողմից ստացված տվյալները: Եթե հնարավոր չէ հայտնաբերել հարուցիչի շտամի տեսակը, ապա այն ընթացակարգ է սահմանում՝ ապահովելու համար շտամի սահմանման հանձնարարելը Համայնքի էտալոնային լաբորատորիային:

բ) վավերացնել ախտորոշիչ մեթոդները, որոնք օգտագործվում են տարածաշրջանային ախտորոշիչ լաբորատորիաների կողմից.

գ) պատասխանատու լինել ախտորոշիչ ստանդարտների եւ մեթոդների համակարգմանը անդամ պետության ներսում: Այդ նպատակով այն.

– կարող է տրամադրել ախտորոշիչ ռեագենտներ (ազդանյութերի) անդամ պետության կողմից հաստատված լաբորատորիաներին.

– պետք է վերահսկի անդամ պետության կողմից օգտագործվող բոլոր ախտորոշիչների ռեագենտների որակը.

– պարբերաբար պետք է անցկացնի համեմատական փորձաստուգումներ.

– պետք է մեկուսացված պահի որոշակի հիվանդության հարուցիչները, կամ նման հարուցիչներ պարունակող համապատասխան հյուսվածքները, որոնք ստացվել են անդամ պետությունում հաստատված դեպքերից.

– ապահովի անդամ պետության կողմից հաստատված ախտորոշիչ լաբորատորիաների արդյունքների հաստատումը.

դ) պետք է համագործակցի Համայնքի էտալոնային լաբորատորիայի հետ:

2. Այնուամենայնիվ, շեղում կատարելով 1-ին կետից, անդամ պետությունները, որոնք չունեն ազգային էտալոնային լաբորատորիա, պետք է օգտվեն Համայնքի էտալոնային լաբորատորիայի ծառայությունների կամ այլ անդամ պետությունների ազգային մեթոդաբանական լաբորատորիաների ծառայություններից:

▼M23

3. Ազգային էտալոնային լաբորատորիաներն են՝

Ավստրիայում՝	Österreichische Agentur für Gesundheit und Ernährungssicherheit GmbH, Institut für veterinärmedizinische Untersuchungen Mödling Robert Koch Gasse 17A-2340 Mödling
Բելգիայում՝	CERVA -CODA-VAR Centre d'Étude et de Recherches Vétérinaires et Agrochimiques Centrum voor Onderzoek in Diergeneeskunde en Agrochemie Veterinary and Agrochemical Research Centre Groeselenberg 99B-1180 Bruxelles
▼M29	
Բուլղարիայում՝	Национален диагностичен научноизследователски ветеринарномедицински институт 'Проф. Д-р Георги Павлов' Национална референтна лаборатория 'Трансмисивни спонгиформни енцефалопатии' бул. 'Пенчо Славейков' София 1606 (National Diagnostic Veterinary Research Institute 'Prof. Dr. Georgi Pavlov' National

	Reference Laboratory for Transmissible Spongiform Encephalopathies (15, Pencho Slaveykov Blvd. 1606 Sofia)
▼M23	
Կիրառում	State Veterinary Laboratories Veterinary Services CY-1417 Athalassa Nicosia
Չեխիայի Հանրապետությունում	Státní veterinární ústav Jihlava Rantířovská 93586 05 Jihlava
Դանիայում	Danmarks Fødevareforskning Bülowsvej 27DK-1790 København V
Էստոնիայում	Veterinaar- ja Toidulaboratoorium Kreutzwaldi 30 Tartu 51006
Ֆինլանդիայում	Eläinlääkintä- ja elintarvikelaitos Hämeentie 57FIN-00550 Helsinki
Ֆրանսիայում	Agence française de sécurité sanitaire des aliments Laboratoire de pathologie bovine 31, avenue Tony Garnier 69 364 LYON CEDEX 07
Գերմանիայում	Friedrich-Loeffler-Institut, Bundesforschungsinstitut für Tiergesundheit Anstaltsteil Insel Riems Boddenblick 5 AD-17498 Insel Riems
Հունաստանում	Ministry of Agriculture — Veterinary Laboratory of Larisa 7th km of Larisa — Trikala Highway GR-411 10 Larisa

Հունգարիայում՝	Országos Állategészségügyi Intézet (OÁI)Pf. 2.Tábornok u. 2.H-1581 Budapest
Իռլանդիայում՝	Central Veterinary Research LaboratoryYoung's CrossCelbridgeCo. Kildare
Իտալիայում՝	Istituto Zooprofilattico Sperimentale del Piemonte, Liguria e Valle d'Aosta — CEAVia Bologna, 148I-10154 Torino
Լատվիայում՝	State Veterinary Medicine Diagnostic CentreLejupes Str. 3Riga LV 1076
Լիտվայում՝	Nacionalinė veterinarijos laboratorija]. Kairiūkščio g. 10LT-08409 Vilnius
Լյուքսեմբուրգում՝	CERVA -CODA-VARCentre d'Étude et de Recherches Vétérinaires et AgrochimiquesCentrum voor Onderzoek in Diergeneeskunde en AgrochemieVeterinary and Agrochemical Research CentreGroeselenberg 99B-1180 Bruxelles
Մալթայում՝	National Veterinary Laboratory Albert Town Marsa
Նիդեռլանդներում՝	Centraal Instituut voor Dierziektecontrole- LelystadHoutribweg 3g8221 RA LelystadPostbus 20048203 AA Lelystad
Լեհաստանում՝	Państwowy Instytut Weterynaryjny (PIWet)24-100 Puławyal. Partyzantów 57
Պորտուգալիայում՝	Laboratório Nacional de Investigaçã Veterinária Estrada de Benfica701 P-1500

	Lisboa
▼M29	
Ռումինիայում՝	Institutul de Diagnostic și Sănătate Animală Strada Dr. Staicovici nr. 63, sector 5 codul 050557, București.
▼M23	
Սլովակիայում՝	State Veterinary Institute Zvolen Pod dráhami 918SK-960 86, Zvolen
Սլովենիայում՝	National Veterinary Institute Gerbičeva 601000 Ljubljana
Իսպանիայում՝	Laboratorio Central de Veterinaria (Algete) Ctra. de Algete km. 82 8110 Algete (Madrid)
Շվեդիայում՝	National Veterinary Institute S-751 89 Uppsala
Միացյալ Թագավորությունում՝	Veterinary Laboratories Agency Woodham Lane New Haw Addlestone Surrey KT15 3NB

▼B

ԳԼՈՒԽ Բ

Համայնքի էտալոնային լաբորատորիան

1. ՓՍԷ-ների գծով համայնքի մեթոդաբանական լաբորատորիան է՝

The Veterinary Laboratories Agency

Woodham Lane

New Haw

Addlestone

Surrey KT15 3NB

Միացյալ Թագավորություն

2. Համայնքի մեթոդաբանական լաբորատորիայի գործառույթները եւ պարտականությունները հետեւյալն են՝

ա) Հանձնաժողովի հետ խորհրդակցելով՝ համակարգել անդամ պետությունների կողմից կիրառվող մեթոդները ԽԵԱՍԷ-ն ախտորոշելու հարցում, մասնավորապես՝

- պահեստավորելով եւ տրամադրելով հարուցիչ պարունակող համապատասխան հյուսվածքներ համապատասխան ախտորոշիչ փորձաստուգումների մշակելու եւ կատարելու եւ հարուցիչի շտամների տիպային հետազոտություններ կատարելու նպատակով.
- տրամադրելով ստանդարտ շիճուկներ եւ այլ էտալոնային ռեագենտներ ազգային մեթոդաբանական լաբորատորիաներին փորձաստուգումները եւ անդամ պետություններում օգտագործվող ռեագենտները ստանդարտացնելու նպատակով.
- հավաքելով եւ պահպանելով ԽԵԱՍԷ հարուցիչ եւ շիճուկ պարունակող համապատասխան հյուսվածքներ.
- կազմակերպելով ախտորոշիչ ընթացակարգերի պարբերական համեմատական փորձաստուգումներ Համայնքի մակարդակով.
- հավաքելով եւ համադրելով տվյալներ ու տեղեկություններ ախտորոշման մեթոդների եւ փորձաստուգման արդյունքների վերաբերյալ, որոնք անցկացվել են Համայնքում.
- բնորոշելով ՓՍԷ հարուցիչի իզոլիատներին ամենավերջին մեթոդներով՝ ընդլայնելով հիվանդության համաճարակաբանության մասին գիտելիքները.
- համաքայլ ընթանալով ՓՍԷ-ների հետազոտության, համաճարակաբանության եւ կանխարգելման միտումների հետ ամբողջ աշխարհում.
- պահպանելով փորձագիտությունը պրոնային հիվանդության մասին՝ ստեղծելով արագացված տարբերակված ախտորոշման հնարավորություն.
- ձեռք բերելով հիմնավոր գիտելիքներ ախտորոշիչ մեթոդների մշակման եւ օգտագործման մասին, որոնք օգտագործվում են ՓՍԷ-ները վերահսկելու եւ ոչնչացնելու համար.

բ) ակտիվորեն աջակցելով ՓՍԷ-ների համաճարակի ախտորոշմանը անդամ պետություններում՝ հետազոտելով ՓՍԷ վարակով վարակված կենդանիների նմուշները, որոնք ուղարկվում են ախտորոշման հաստատման, բնորոշման եւ համաճարակաբանական ուսումնասիրության համար.

գ) նպաստելով փորձագետների ուսուցմանը եւ վերապատրաստմանը լաբորատոր ախտորոշման ոլորտում՝ նպատակ ունենալով ներդաշնակեցնելու ախտորոշիչ տեխնիկաները Համայնքի շրջանակում:

▼M18

ԳԼՈՒԽ Գ

Նմուշառումը եւ լաբորատոր փորձաստուգումը

▼M32

1. Նմուշառումը/Տիպային նմուշի ընտրություն

ՓՍԷ-ի առկայությունը հետազոտելու նպատակով նմուշները հավաքվում են Էպիզոոտիայի միջազգային գրասենյակի (ԷՄԳ) Ցամաքային կենդանիների ախտորոշիչ փորձաստուգումների եւ պատվաստումների ձեռնարկի վերջին հրատարակությամբ սահմանված մեթոդների եւ արարողակարգերի համաձայն (Ձեռնարկ): Բացի դրանից կամ ԷՄԳ մեթոդների եւ արարողակարգերի բացակայության դեպքում եւ բավարար նյութերի հասանելի լինելն ապահովելու համար, իրավասու մարմինն ապահովում է նմուշառման մեթոդների եւ արարողակարգերի կիրառությունը Համայնքի էտալոնային լաբորատորիայի կողմից հրապարակված ուղեցույցների համաձայն: Մասնավորապես, իրավասու մարմինը հավաքում է համապատասխան հյուսվածքներ գիտական առկա փաստերի եւ Համայնքի էտալոնային լաբորատորիայի ուղեցույցների համաձայն՝ ապահովելու համար ՓՍԷ բոլոր հայտնի շտամների բացահայտումը փոքր որոճողների մոտ, եւ այդ հյուսվածքների առնվազն կեսը պահում է թարմ, բայց ոչ սառեցված վիճակում, մինչեւ արագացված փորձաստուգումից բացասական արդյունք ստանալը: Եթե արդյունքը դրական կամ անհամոզիչ է, ապա մնացորդային հյուսվածքները պետք է մշակվեն Համայնքի մեթոդաբանական լաբորատորիայի ուղեցույցների համաձայն:

Նմուշները պետք է ճիշտ դրոշմակնքվեն՝ նմուշառված կենդանին նույնականացնելու համար:

▼M18

2. Լաբորատորիաները

ՓՍԷ-ի ցանկացած լաբորատոր քննություն իրականացվում է իրավասու մարմնի կողմից այդ նպատակով հաստատված լաբորատորիաներում:

3. Մեթոդները եւ արարողակարգերը

3.1. Խոշոր եղջերավոր կենդանիների մոտ ԽԵԱՍԹ առկայության լաբորատոր փորձաստուգումը

▼M42

ա) Կասկածելի դեպքերը

Խոշոր եղջերավոր անասուններից վերցված նմուշները, որոնք ուղարկվում են լաբորատոր փորձաստուգման՝ 12(2) հոդվածի դրույթների համաձայն, անմիջապես պետք է ենթարկվեն հաստատման քննության՝ օգտագործելով հետեւյալ մեթոդներից առնվազն մեկը եւ Ձեռնարկի ամենավերջին հրատարակության մեջ սահմանված արարողակարգերը՝

- i) իմունոհիստոքիմիական (ԻՀՔ) մեթոդ.
- ii) SAF-իմունոբլոտ կամ ԷՄԳ-ի կողմից հաստատված այլընտրանքային մեթոդ.
- iii) բնորոշ նրբաթելի (Ֆիբրիլ) հաստատում էլեկտրոնային միկրոսկոպի միջոցով.
- iv) հիստոպաթոլոգիական ուսումնասիրություն.
- v) արագացված փորձաստուգումների միավորում, ինչպես սահմանված է երրորդ ենթապարբերությունում:

Եթե հիստոպաթոլոգիական քննությունն անհամոզիչ է կամ բացասական, ապա հյուսվածքները ներկայացվում են հետագա քննությունը հաստատող այլ մեթոդներով եւ արարողակարգերով:

Արագացված փորձաստուգումներ կարող են կիրառվել թե կասկածելի դեպքերի առաջնային սկրինինգի համար, եւ եթե դրանք անհամոզիչ կամ դրական են՝ հետագա հաստատման

համար Համայնքի մեթոդաբանական լաբորատորիայի ուղեցույցների համաձայն եւ պայմանով՝

- i) հաստատումը կատարվում է ազգային մեթոդաբանական լաբորատորիայում՝ ՓՍԷ հայտնաբերելու համար. եւ
- ii) արագացված փորձաստուգումներից մեկը Վեստերն բլոտ է. եւ
- iii) կիրառված երկրորդ արագացված փորձաստուգումը՝
 - ներառում է բացասական ստուգման հյուսվածք եւ խոշոր եղջերավոր անասուններից վերցված նմուշը՝ որպես դրական ստուգման հյուսվածք.
 - տարբերվում է առաջնային սկրինինգի համար անցկացված փորձաստուգումից իր տեսակով. եւ
- iv) եթե որպես առաջին փորձաստուգում օգտագործվել է վեստերն արագացված բլոտինգ, ապա այդ փորձաստուգման արդյունքը պետք է ամրագրվի փաստաթղթում եւ ներկայացվի ազգային մեթոդաբանական լաբորատորիա՝ ՓՍԷ հայտնաբերելու նպատակով. եւ
- v) եթե առաջնային սկրինինգի արդյունքը չի հաստատվում լրացուցիչ արագացված փորձաստուգման միջոցով, ապա նմուշը պետք է անցնի հետազոտում հաստատող մեթոդներից որեւէ մեկով. եթե այդ նպատակով օգտագործվել է հիստոպաթոլոգիական ուսումնասիրություն, սակայն այն անհամոզիչ կամ բացասական է, ապա հյուսվածքները պետք է ներկայացվեն հետագա քննության հաստատող մեթոդներից կամ արարողակարգերից որեւէ մեկով:

Եթե առաջին ենթապարբերության (i) to (v) կետերում նշված հաստատող ուսումնասիրությունների մեկի արդյունքը դրական է, ապա կենդանիները համարվում են ԽԵԱՍԷ-ի դրական դեպքեր:

բ) ԽԵԱՍԷ դիտանցում

Լաբորատոր փորձաստուգման ուղարկված խոշոր եղջերավոր անասուններից վերցված նմուշները III հավելվածի Ա գլխի I մասի դրույթների համաձայն, պետք է ուսումնասիրվեն արագացված փորձաստուգման միջոցով:

Եթե արագացված փորձաստուգման արդյունքն անհամոզիչ կամ դրական է, ապա նմուշը անմիջապես պետք է հաստատման հետազոտություն անցնի՝ օգտագործելով հետեւյալ

մեթոդներից առնվազն մեկը եւ Ձեռնարկի ամենավերջին հրատարակության մեջ սահմանված արարողակարգը՝

- i) իմունոհիստոքիմիական (ԻՀՔ) մեթոդ.
- ii) SAF-իմունոբլոտ կամ ԷՄԳ-ի կողմից հաստատված այլընտրանքային մեթոդ.
- iii) բնորոշ նրբաթելի (Ֆիբրիլ) հաստատում՝ էլեկտրոնային միկրոսկոպի միջոցով.
- iv) հիստոպաթոլոգիական ուսումնասիրություն.
- v) արագացված փորձաստուգումների միավորում, ինչպես սահմանված է երրորդ ենթապարբերությունում:

Եթե հիստոպաթոլոգիական քննությունն անհամոզիչ է կամ բացասական, ապա հյուսվածքները ներկայացվում են հետագա քննություն հաստատող այլ մեթոդներով եւ արարողակարգերով:

Արագացված փորձաստուգումներ կարող են կիրառվել թե առաջնային սկրինինգի համար, եւ եթե դրանք անհամոզիչ կամ դրական են՝ հետագա հաստատման համար Համայնքի մեթոդաբանական լաբորատորիայի ուղեցույցների համաձայն եւ պայմանով՝
- i) հաստատումը կատարվում է ազգային մեթոդաբանական լաբորատորիայում՝ ՓՍԷ հայտնաբերելու համար. եւ
- ii) արագացված փորձաստուգումներից մեկը Վեստերն բլոտ է. եւ
- iii) կիրառված երկրորդ արագացված փորձաստուգումը՝
 - ներառում է բացասական ստուգման հյուսվածք եւ խոշոր եղջերավոր անասուններից վերցված նմուշ՝ որպես դրական ստուգման հյուսվածք.
 - տարբերվում է առաջնային սկրինինգի համար անցկացված փորձաստուգումից իր տեսակով. եւ
- iv) եթե որպես առաջին փորձաստուգում օգտագործվել է վեստերն արագացված բլոտինգ, ապա այդ փորձաստուգման արդյունքը պետք է ամրագրվի փաստաթղթում եւ ներկայացվի ազգային մեթոդաբանական լաբորատորիա՝ ՓՍԷ հայտնաբերելու նպատակով. եւ
- v) եթե առաջնային սկրինինգի արդյունքը չի հաստատվում լրացուցիչ արագացված փորձաստուգման միջոցով, ապա նմուշը պետք է անցնի հետազոտում հաստատող մեթոդներից որեւէ մեկով. եթե այդ նպատակով օգտագործվել է հիստոպաթոլոգիական

ուսումնասիրություն, սակայն այն անհամոզիչ կամ բացասական է, ապա հյուսվածքները պետք է ներկայացվեն հետագա քննության հաստատող մեթոդներից կամ արարողակարգերից որեւէ մեկով:

Կենդանին համարվում է ԽԵԱՍԷ դրական դեպք, եթե արագացված փորձաստուգման արդյունքը անհամոզիչ կամ դրական է, եւ առաջին ենթապարբերության (i) – (v) կետերում նշված հաստատող ուսումնասիրություններից առնվազն մեկը դրական արդյունք է տվել:

▼M18

3.2. Ոչխարների եւ այծերի մոտ ՓՍԷ առկայության լաբորատոր փորձաստուգումը

▼M42

ա) Կասկածելի դեպքերը

Ոչխարներից եւ այծերից վերցված նմուշները, որոնք ուղարկվում են լաբորատոր փորձաստուգման, 12(2) հոդվածի դրույթների համաձայն, անմիջապես պետք է ենթարկվեն հաստատման քննության՝ օգտագործելով հետեւյալ մեթոդներից առնվազն մեկը եւ Ձեռնարկի ամենավերջին հրատարակության մեջ սահմանված արարողակարգերը՝

i) իմունոհիստոքիմիական (ԻՀՔ) մեթոդ.

ii) SAF–իմունոբլոտ կամ ԷՄԳ–ի կողմից հաստատված այլընտրանքային մեթոդ.

iii) բնորոշ նրբաթելի (ֆիբրիլ) հաստատում էլեկտրոնային միկրոսկոպի միջոցով.

iv) հիստոպաթոլոգիական ուսումնասիրություն.

Եթե հիստոպաթոլոգիական քննությունն անհամոզիչ կամ բացասական է, ապա հյուսվածքները ներկայացվում են հետագա քննությունը հաստատող այլ մեթոդներով եւ արարողակարգերով:

Կասկածելի դեպքերի առաջնային սկրինինգի համար կարող են կիրառվել արագացված փորձաստուգումներ: Նման փորձաստուգումները չեն կարող օգտագործվել լրացուցիչ հաստատման համար:

Եթե կասկածելի դեպքերի առաջնային սկրինինգի համար օգտագործված արագացված փորձաստուգման արդյունքը դրական կամ անհամոզիչ է, ապա նմուշը կարող է ենթարկվել քննությունը հաստատող հետազոտություններից որեւէ մեկով, որը նշված է առաջին ենթապարբերության (i) –(iv) կետերում: Եթե հիստոպաթոլոգիական քննությունն

անհամոզիչ է կամ բացասական, ապա հյուսվածքները ներկայացվում են հետագա քննությունը հաստատող այլ մեթոդներով եւ արարողակարգերով:

Եթե (i) – (iv) կետերի առաջին ենթապարբերության մեջ նշված հաստատող հետազոտություններից մեկի արդյունքը դրական է, ապա կենդանիները համարվում են ՓՍԷ-ի դրական դեպքի կրողներ եւ պետք է կատարվի (գ) կետում նշված հետագա հետազոտությունը:

▼M32

բ) ՓՍԷ դիտանցում

III հավելվածի, Ա գլխի II մասի (ոչխարների եւ այծերի դիտանցումը) դրույթների համաձայն կատարված լաբորատոր փորձաստուգման ուղարկված ոչխարների եւ այծերի նմուշները հետազոտվում են արագացված փորձաստուգման միջոցով, օգտագործելով համապատասխան մեթոդներ եւ արարողակարգեր առկա գիտական գիտելիքների եւ Համայնքի էտալոնային լաբորատորիայի ուղեցույցներին համապատասխան՝ նպատակ ունենալով ապահովելու բոլոր հայտնի ՓՍԷ-ների շտամների բացահայտումը:

Եթե արագացված փորձաստուգման արդյունքն անհամոզիչ կամ դրական է, ապա նմուշառված հյուսվածքներն անմիջապես ուղարկվում են պաշտոնական հաստատող հետազոտության՝ օգտագործելով իմունոցիտոքիմիայի, իմունո-բոլտինգի եւ էլեկտրոնային միկրոսկոպով բնորոշ նրբաթելի հաստատման մեթոդները, որոնք նշված են (ա) կետում: Եթե հաստատող հետազոտության արդյունքը բացասական կամ անհամոզիչ է, ապա անհրաժեշտ է կատարել լրացուցիչ հաստատող փորձաստուգումներ Համայնքի էտալոնային լաբորատորիայի ուղեցույցների համաձայն:

Եթե հաստատող հետազոտություններից մեկի արդյունքը դրական է, ապա կենդանին համարվում է ՓՍԷ-ի դրական դեպքի կրող:

▼M42

գ) ՓՍԷ դրական դեպքերի լրացուցիչ հետազոտումը

i) Առաջնային մոլեկուլային փորձաստուգումը ընտրովի իմունո-բոլտինգի միջոցով

Կլինիկական տեսանկյունից կասկածելի դեպքերի եւ III հավելվածի Ա գլխի, II մասի 2-րդ եւ 3-րդ կետերի համաձայն փորձաստուգում անցած կենդանիների նմուշները, որոնք համարվել են ՓՍԷ-ի դրական դեպքեր, բայց որոնք ոչ տիպային քորուկի

դեպքեր չեն, պետք է ուղարկվեն լրացուցիչ հետազոտության առաջնային մոլեկուլային տիպային հետազոտության մեթոդով (ա) կամ (բ) կետերում նշված հետազոտություններից կամ այն հետազոտություններից հետո, որոնք ցույց են տալիս այնպիսի բնորոշիչներ, որոնք փորձաստուգման լաբորատորիան համարում է հետագա քննության արժանի: Հետազոտությունների համար ուղարկվում են հետեւյալ լաբորատորիաները՝

- Agence Française de Sécurité Sanitaire des Aliments, Laboratoire de pathologie bovine, 31 avenue Tony Garnier, BP 7033, F-69342, Lyon Cedex, France,
- Veterinary Laboratories Agency, Woodham Lane, New Haw, Addlestone, Surrey KT15 3NB, United Kingdom, or
- իրավասու մարմնի կողմից նշանակված լաբորատորիա, որը հաջողությամբ անցել է Համայնքի Մեթոդաբանական լաբորատորիայի կողմից կազմակերպված որակավորման քննությունը մոլեկուլային տիպային հետազոտության մեթոդի գծով:

▼M18

ii) Վավերացման ուսումնասիրություն՝ լրացուցիչ մոլեկուլային փորձաստուգման մեթոդներով

Այն նմուշները, ►M42 որոնք վերցվել են ՓՍԷ ◀ դեպքերից եւ որոնք ցույց են տալիս, որ ԽԵԱՍԷ-ի առկայությունը հնարավոր չէ բացառել Համայնքի էտալոնային լաբորատորիայի կողմից հրապարակած ուղեցույցների համաձայն, օգտագործելով (i) կետում նշված առաջնային փորձաստուգման մեթոդը, պետք է անմիջապես ուղարկվեն (դ) կետում նշված լաբորատորիաները Համայնքի մեթոդաբանական լաբորատորիայի հետ խորհրդակցելուց հետո՝ կից ուղարկելով համապատասխան բոլոր տեղեկությունները: Դրանք պետք է ներկայացվել վավերացման հետազոտության՝ կատարելով առնվազն հետեւյալը՝

- երկրորդ ընտրովի իմունո-բոլտինգի մեթոդ.
- ընտրովի իմունոցիտոքիմիայի մեթոդ. եւ
- ընտրովի ՊՖԻԱ (պինդ ֆազային իմունոֆերմենտային անալիզ)

որն իրականացվում է համապատասխան մեթոդ կիրառելու իրավունք ունեցող լաբորատորիաներում, ինչպես նշված է (դ) կետում: Եթե նմուշները հարմար չեն իմունոցիտոքիմիայի մեթոդի համար, ապա Համայնքի մեթոդաբանական

լաբորատորիան կիրահանգի օգտագործել այլընտրանքային փորձաստուգման մեթոդներ՝ վավերացման փորձաստուգման շրջանակում:

Արդյունքները մեկնաբանվում են Համայնքի էտալոնային լաբորատորիայի կողմից, որին օժանդակում են փորձագետների խումբը, այդ թվում՝ ազգային մեթոդաբանական լաբորատորիայի համապատասխան ներկայացուցիչը: Հանձնաժողովն անմիջապես տեղեկացվում է մեկնաբանության արդյունքների մասին: Երեք տարբեր մեթոդներով ԽԵԱՍԷ-ի ցուցիչ նմուշները եւ վավերացման փորձաստուգման ժամանակ ոչ համոզիչ արդյունքներ ցույց տվող նմուշները հետագա վերլուծության են ենթարկվում մկների վրա կատարվող կենսափորձաստուգման միջոցով վերջնական հաստատման համար:

▼M32

Նույն անասնանոցում վարակված անասնախմբերում հայտնաբերված ՓՍԷ դրական արդյունք ցույց տված նմուշների լրացուցիչ փորձաստուգում է կատարվում առնվազն առաջին երկու դրական ՓՍԷ-ների դեպքերի վրա ինդեքսային դեպքին հաջորդող յուրաքանչյուր տարվա ընթացքում:

▼M18

դ) մոլեկուլային տիպային հետազոտության միջոցով լրացուցիչ հետազոտություն կատարելու իրավունք ունեցող լաբորատորիաները

Մոլեկուլային տիպային հետազոտության համար հաստատված լաբորատորիաները հետեւյալն են՝

Agence Française de Sécurité Sanitaire des Aliments

Laboratoire de pathologie bovine

31, avenue Tony Garnier

BP 7033

F-69342 Lyon Cedex

Centre CEA Fontenay-aux-Roses, BP 6

F-92265 Fontenay-aux-Roses Cedex

Service de Pharmacologie et d'Immunologie

Centre CEA Saclay, bâtiment 136

F-91191 Gif-sur-Yvette Cedex

The Veterinary Laboratories Agency

Woodham Lane

New Haw

Addlestone

Surrey KT15 3NB

Միացյալ Թագավորություն

3.3. Լաբորատոր փորձաստուգում՝ ՓՍԷ-ի առկայությունը հայտնաբերելու նպատակով 3.1. եւ 3.2 կետերում չնշված տեսակների մոտ

Եթե հաստատվում են մեթոդներ եւ արարողակարգեր փորձաստուգումների համար, որոնք իրականացվում են ՓՍԷ-ի կասկածվող առկայությունը հաստատելու համար խոշոր եղջերավոր անասուններից, ոչխարների եւ այծերից բացի այլ տեսակների մոտ, ապա դրանք պետք է ներառեն առնվազն ուղեղի հյուսվածքի հիստոպաթոլոգիական ուսումնասիրություն: Իրավասու մարմինը կարող է նաեւ պահանջել անցկացնել լաբորատոր փորձաստուգումներ, ինչպես օրինակ՝ իմունացիտոքիմիայի, իմունաբլոտինինգի, բնորոշ նրբաթելի (Ֆիբրիլ) հաստատում՝ էլեկտրոնային միկրոսկոպի միջոցով կամ այլ մեթոդներով, որոնք նախագծված են՝ պրիոն սպիտակուցի հետ առնչվող հիվանդությունը հայտնաբերելու համար: Ցանկացած դեպքում անցկացվում է առնվազն մեկ այլ լաբորատոր հետազոտություն, եթե նախնական հիստոպաթոլոգիական հետազոտությունը ցույց է տվել բացասական կամ ոչ համոզիչ արդյունք: Առնվազն երեք տարբեր հետազոտություններ պետք է անցկացվեն հիվանդության առաջին նշանների դեպքում:

Մասնավորապես, եթե ԽԵԱՍԷ է կասկածվում խոշոր եղջերավոր անասուններից բացի այլ տեսակների մոտ, ապա, եթե հնարավոր է, նմուշները պետք է ներկայացվեն շտամի տիպային հետազոտության համար:

▼M46

4. Արագացված փորձաստուգումներ

5(3) եւ 6(1) հոդվածների համաձայն արագացված փորձաստուգումներ անցկացնելու նպատակով, այդ փորձաստուգումների համար օգտագործվում են միայն հետեւյալ մեթոդները խոշոր եղջերավոր անասունների մոտ ԽԵԱՍԷ դիտանցելու նպատակով՝

- իմունաբլոտինգ փորձաստուգում՝ Վեստեր բլոտինգ ընթացակարգի հիման վրա՝ նպատակ ունենալով հայտնաբերելու բջջի պատերը քայքայող Կ ֆերմենտադիմացկուն մասնաբաժինը PrPRes (Prionics-Check Western test)
- քեմիլյումինեսցենտային ՊՖԻԱ (պինդ ֆազային իմունոֆերմենտային անալիզ), որը ներառում է էքստրակցիայի ընթացակարգ եւ ՊՖԻԱ տեխնիկան՝ ակտիվ քեմիլյումինեսցենտային ռեագենտի միջոցով (Էնֆերի փորձաստուգում եւ Էնֆերի ՓՍԲ փաթեթի տարբերակ 2.0, մեխանիկական նմուշի պատրաստում)։
- միկրոբուժման հիման վրա իմունոթեստ PrPRes հայտնաբերելու համար (Էնֆեր ՓՍԷ տարբերակ 3)
- բազմաշերտ իմունոթեստ՝ PrPRes հայտնաբերելու համար (կարճ փորձաստուգման արարողակարգ), որն իրականացվում է բնափոխման եւ խտացման քայլերով (Bio-Rad TeSeE SAP արագացված փորձաստուգում)
- միկրոբուժման հիման վրա իմունոթեստ (ՊՖԻԱ), որի միջոցով հայտնաբերվում է բջջի պատերը քայքայող Կ ֆերմենտադիմացկուն մասնաբաժինը PrPRes (Prionics-Check LIA փորձաստուգում)
- իմունոթեստ, ընտրովի PrP Sc կապտածի եւ մոնոկլոնային հակամարմին հայտնաբերելու նպատակով քիմիական պոլիմերի կիրառությամբ, որն ուղղվում է PrP մոլեկուլի պահպանողական մասերի դեմ (IDEXX HerdChek BSE Antigen Test Kit, EIA & IDEXX HerdChek BSE-Scrapie Antigen Test Kit, EIA)
- կողային հոսքի իմունոթեստ, երկու տարբեր մոնոկլոնային հակամարմինների օգտագործմամբ՝ նպատակ ունենալով հայտնաբերելու բջջի պատերը քայքայող Կ ֆերմենտադիմացկուն մասնաբաժինը PrPRes (Prionics Check PrioSTRIP)
- երկկողմանի իմունոթեստ երկու տարբեր մոնոկլոնային հակամարմինների օգտագործմամբ, որոնք ուղղված են խոշոր եղջերավոր անասունների PrP Sc բավականին տարածված վիճակում երկու որոշիչ գենների դեմ (Roboscreen Beta Prion BSE EIA Test Kit)։

բազմաշերտ ՊՖԻԱ՝ նպատակ ունենալով հայտնաբերելու բջջի պատերը քայքայող Կ ֆերմենտադիմացկուն մասնաբաժինը PrPRes (Roche Applied Science PrionScreen):

5(3) եւ 6(1) հոդվածների համաձայն արագացված փորձաստուգումներ անցկացնելու նպատակով, այդ փորձաստուգումների համար օգտագործվում են միայն հետեւյալ մեթոդները՝ ոչխարների եւ այծերի մոտ ԽԵԱՍԷ դիտանցելու նպատակով՝

- բազմաշերտ իմունոթեստ PrPRes հայտնաբերելու համար (կարճ փորձաստուգման արարողակարգ), որն իրականացվում է ապաբնականացման եւ խտացման քայլերով (Bio-Rad TeSeE SAP արագացված փորձաստուգում)
- բազմաշերտ իմունոթեստ PrPRes հայտնաբերելու նպատակով (TeSeE ոչխարների/այծերի հայտնաբերման փաթեթ), որն իրականացվում է TeSeE Ոչխարներ/այծեր ազնվացնելու փաթեթի միջոցով բնափոխման եւ խտացման քայլերից հետո (Bio-Rad TeSeE Ոչխարների/այծերի արագացված փորձաստուգում)
- իմունոթեստ, ընտրովի PrP Sc կապտաժի եւ մոնոկլոնային հակամարմին հայտնաբերելու նպատակով քիմիական պոլիմերի կիրառությամբ, որն ուղղվում է PrP մոլեկուլի պահպանողական մասերի դեմ (IDEXX HerdChek BSE-Scrapie Antigen Test Kit, EIA)
- կողային հոսքի իմունոթեստ, երկու տարբեր մոնոկլոնային հակամարմինների օգտագործմամբ՝ նպատակ ունենալով հայտնաբերելու բջջի պատերը քայքայող Կ ֆերմենտադիմացկուն PrP մասնաբաժինը (արագացված փորձաստուգում Prionics - Check PrioSTRIP SR, տեսողական հաշվետու արարողակարգ):

Բոլոր արագացված փորձաստուգումներում, նմուշառված հյուսվածքը, որի նկատմամբ կատարվում է փորձաստուգումը, պետք է պահպանի արտադրողի կողմից սահմանված օգտագործման ցուցումները:

Արագացված փորձաստուգում կատարողները պետք է ունենան որակի ապահովման համակարգ, որը հաստատվել է Եվրոպական միության մեթոդաբանական լաբորատորիայի կողմից եւ ապահովում է, որ փորձաստուգման կատարողական որակը չփոփոխվի: Փորձաստուգում կատարողները պետք է Եվրոպական միության մեթոդաբանական լաբորատորիաներին ներկայացնեն փորձաստուգման արարողակարգեր:

Արագացված փորձաստուգման եւ փորձաստուգման արարողակարգերում փոփոխությունները կարող են կատարվել միայն այն դեպքում, եթե դրա մասին նախապես տեղեկացրել են Եվրոպական միության էտալոնային լաբորատորիային եւ պայմանով, որ

Եվրոպական միության մեթոդաբանական լաբորատորիան հաստատի, որ այդ փոփոխությունները չեն փոխում արագացված փորձաստուգման զգայունությունը, հստակությունը կամ վստահելիությունը: Արդյունքները տեղեկացվում են Հանձնաժողովին եւ ազգային էտալոնային լաբորատորիաներին:

▼M18

5. Այլընտրանքային փորձաստուգումները

(պետք է սահմանվի)

(1) ՊՏ C 45, 19.02.1999թ., էջ 2 եւ

ՊՏ C 120 E, 24.04.2001թ., էջ 89:

(2) ՊՏ C 258, 10.09.1999թ., էջ 19.

(3) Եվրոպական պառլամենտի 2000 թվականի մայիսի 17-ի եզրակացություն (ՊՏ C 59, 23.02.2001թ., էջ 93), Խորհրդի 2001 թվականի փետրվարի 12-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 88, 19.03.2001թ., էջ 1) եւ Եվրոպական պառլամենտի 2001 թվականի մայիսի 3-ի որոշում

(4) ՊՏ L 273, 10.10.2002թ., էջ 1. Հանձնաժողովի թիվ 208/2006/ԵՀ կանոնակարգով վերջին անգամ փոփոխված կանոնակարգ (ՊՏ L 36, 08.02.2006թ., էջ 25):

(5) ՊՏ C 174 E, 14.07.2005թ., էջ 178.;

(6) ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23.

(7) Խորհրդի «Ներքին շուկան ավարտին հասցնելու նպատակով միջհամայնքային առեսրում անասնաբուժական ստուգումների մասին» (ՊՏ L 395, 30.12.1989թ., էջ 13). Վերջին անգամ 92/118/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 62, 15.03.1993թ., էջ 49):

(8) Խորհրդի «Ներքին շուկան ավարտին հասցնելու նպատակով միջհամայնքային առեսրի նկատմամբ կիրառելի անասնաբուժական եւ զոոտեխնիկական ստուգումների մասին» 1990 թվականի հունիսի 26-ի 90/425/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 224, 18.08.1990թ., էջ 29) Վերջին անգամ թիվ 92/118/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ

(9) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2000 թվականի հուլիսի 17-ի «Խոշոր եղջերավոր անասունների նույնականացման եւ գրանցման համակարգ հաստատող ու տավարի մսի եւ տավարի մսից պատրաստված մթերքների պիտակավորման մասին», ինչպես նաեւ Խորհրդի թիվ 820/97 կանոնակարգը չեղյալ ճանաչող՝ թիվ 1760/2000 կանոնակարգ (ԵՀ) (ՊՏ L 204, 11.08.2000թ., էջ 1)։

(10) Խորհրդի «Խոշոր եղջերավոր անասունների եւ խոզերի միջհամայնքային առետրի վրա ազդող՝ կենդանիների առողջական խնդիրների մասին» 1964 թվականի հունիսի 26-ի 64/432/ԵՏՀ հրահանգ (Օ) 121 29.7.1964, ք. 1977/64)։ Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2000/20/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 163, 04.07.2000թ., էջ 35)։

(11) Խորհրդի «Ոչխարների եւ այծերի միջհամայնքային առետուրը կարգավորող՝ կենդանիների առողջության վերաբերյալ պայմանների մասին» 1991 թվականի հունվարի 28-ի 91/68/ԵՏՀ հրահանգ՝ (ՊՏ L 46, 19.02.1991թ., էջ 19)։ Հանձնաժողովի 94/953/ԵՀ որոշմամբ վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 371, 35.12.1994թ., էջ 14)։

(12) ԽՈՐՀՐԴԻ 1991 թվականի հուլիսի 15-ի՝ երրորդ երկրներից Համայնք բերվող կենդանիների անասնաբուժական ստուգումների կազմակերպումը կարգավորող սկզբունքները սահմանող եւ 89/662/ԵՏՀ, 90/425/ԵՏՀ եւ 90/675/ԵՏՀ հրահանգները փոփոխող 91/496/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 268, 24.09.1991թ., էջ 56)։ 96/43/ԵՀ հրահանգով (ՊՏ L 162, 01.07.1996թ., էջ 1) վերջին անգամ փոփոխված հրահանգ

(13) ԽՈՐՀՐԴԻ 1997 թվականի դեկտեմբերի 18-ի՝ երրորդ երկրներից Համայնք մուտք գործող ապրանքների անասնաբուժական ստուգումների կազմակերպումը կարգավորող սկզբունքներ սահմանող՝ 97/78/ԵՀ հրահանգ (ՊՏ L 24, 30.01.1998թ., էջ 9)։

(14) Խորհրդի «Համայնքի ներսում կենդանիների հիվանդությունների վերաբերյալ ծանուցման մասին» 1982 թվականի դեկտեմբերի 21-ի 82/894/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 378, 31.12.1982թ., էջ 58)։ Վերջին անգամ Հանձնաժողովի 2000/556/ԵՀ որոշմամբ փոփոխված հրահանգ (ՊՏ L 235 19.09.2000թ., էջ 27)։

(15) ՊՏ L 273, 10.10.2002թ., էջ 1.

(16) ՊՏ L 31, 01.02.2002թ., էջ 1.

(17) ՊՏ L 86, 06.04.1979թ., էջ 30.

(18) <http://www.defra.gov.uk/corporate/vla/science/science-tse-rl-confirm.htm>

(19) Նախագծված տարածվածության ցուցիչն օգտագործվում է՝ որոշելու համար փորձաստուգման ուսումնասիրության մասշտաբը, որն արտահայտվում է թիրախային բալերով Եթե իրական տարածվածությունն ավելի մեծ է, քան նախագծով ընտրված տարածվածությունը, ապա բավականին հավանական է, որ հիվանդություն կհայտնաբերվի:

(20) ՊՏ 121, 29.07.1964թ., էջ 2012/64.

(21) ՊՏ L 99, 20.04.1996թ., էջ 14.

(22) ՊՏ L 204, 11.08.2000թ., էջ 1

(23) ՊՏ L 21, 28.01.2004թ., էջ 11.

(24) ՊՏ L 349, 24.12.2002թ., էջ 105.

(25) ՊՏ L 349, 24.12.2002թ., էջ 105.

(26) ՊՏ L 139, 30.04.2004թ., էջ 55, ուղղումներ՝ ՊՏ L 226, 25.06.2004թ., էջ 22

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

2-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ա. Հատուկ ռիսկայնության նյութի հեռացման մասին

1. Անդամ պետությունները, 6–11–րդ կետերի համաձայն, պետք է ապահովեն ստորեւ ներկայացված հատուկ ռիսկայնության նյութերը հեռացնելը կամ ոչնչացնելը :

ա) Հետեւյալ հյուսվածքները համարվում են հատուկ ռիսկայնության նյութեր՝

i) 12 ամիսը լրացած խոշոր եղջերավոր անասունների գանգը՝ ներառյալ գլխուղեղը եւ աչքերը, նշագեղձերը եւ ողնուղեղը, ինչպես նաեւ բոլոր տարիքների խոշոր եղջերավոր անասունների տասներկուամտնյա աղիքից մինչեւ ուղիղ աղիք ընկած աղիները.

ii) 12 ամիսը լրացած կամ լնդից հիմնական կտրիչ ատամներ ծակած ոչխարների եւ այծերի գանգը՝ ներառյալ գլխուղեղը եւ աչքերը, նշագեղձերն ու ողնուղեղը եւ բոլոր տարիքների ոչխարների ու այծերի փայծաղը:

բ) բացի (ա) կետում նշված հատուկ ռիսկայնության նյութերից, հետեւյալ հյուսվածքները պետք է համարվեն հատուկ ռիսկայնության նյութ Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորությունում եւ Հյուսիսային Իռլանդիայում ու Պորտուգալիայում՝ բացառությամբ Ազորայի ինքնավար շրջանի:

i) գլուխը, բացառությամբ լեզվի՝ ներառյալ գլխուղեղը եւ աչքերը, եովորյակ հանգույցը եւ նշագեղձերը. վեց ամիսը լրացած խոշոր եղջերավոր անասունների ուրցագեղձը, փայծաղը եւ ողնուղեղը, ինչպես նաեւ բոլոր տարիքների խոշոր եղջերավոր անասունների տասներկուամտնյա աղիքից մինչեւ ուղիղ աղիք ընկած աղիները.

ii) 30 ամիսը լրացած խոշոր եղջերավոր անասունների ողնաշարը. այդ թվում՝ դորսալ (մեջքային) արմատային նյարդային հանգույցը:

2. Հատուկ ռիսկայնության նյութերը կամ դրանցից ստացված վերամշակված նյութերը, 11–րդ կետի համաձայն, կարող են առաքվել հետագայում այրելու նպատակով, կամ, հարկ եղած դեպքում՝ 7(բ) կետի համաձայն:

3. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների եւ այծերի գլխի ու ողնաշարի ոսկորները չօգտագործվեն մեխանիկական եղանակով ոսկրահանված մսի արտադրության մեջ:

4. Անդամ պետություններն ապահովում են, որ երկար ցուպիկաձեւ գործիքով պատռվածք կատարելով եւ գլխուղեղի խոռոչ թափանցելով, իրենց տարածքում այն խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների կամ այծերի նկատմամբ, որոնց միսը նախատեսված է մարդու կողմից սպառման կամ կենդանիներին կերակրելու համար, նյարդային հյուսվածքի բթացում չի կատարվել :

5. 1(ա) կետում նշված հատուկ դիսկայնության նյութերը չպետք է ներկրվեն Համայնք 2001 թվականի մարտի 31-ից հետո:

Կենդանական ծագում ունեցող հետեւյալ ապրանքները ենթակա են դեպի Համայնք ներկրման սահմանափակման՝

– թարմ միս. 64/433/ԵՏՀ հրահանգով սահմանված միս.

– աղացած միսը եւ մսային կիսապատրաստվածքները. 94/65/ԵՀ հրահանգով (1) սահմանված աղացած միս եւ մսային կիսապատրաստվածքներ.

– մսամթերք. 77/99/ԵՏՀ հրահանգով սահմանված մսամթերք.

– վերամշակված կենդանական սպիտակուց, ինչպես նշված է 92/118/ԵՏՀ հրահանգում.

– խոշոր եղջերավոր անասունների աղիները, որոնք նշված են 77/99/ԵՏՀ հրահանգի 2(բ) հոդվածի 2(բ) հոդվածում:

ա) Երբ կենդանական ծագում ունեցող վերոնշյալ ապրանքները, որոնք պարունակում են խոշոր եղջերավոր անասուններից, ոչխարներից կամ այծերից ստացված մթերք, 2001 թվականի մարտի 31-ից հետո Համայնք են ներկրվում երրորդ երկրներից կամ դրանց տարածաշրջաններից, ապա առողջության մասին վկայագրին կից պետք է ներկայացվի արտադրության երկրի իրավասու մարմնի կողմից տրամադրված հայտարարագիր, որն ունի հետեւյալ բովանդակությունը՝

«Կենդանական ծագում ունեցող արտադրանքը չի պարունակում եւ չի առաջացել որեւէ արտադրանքից, որը նշված է փոխանցվող սպունգանման էնցիֆալոպաթի որոշ տեսակների կանխարգելման, վերահսկման եւ ոչնչացման համար կանոններ սահմանող՝ 2001 թվականի մայիսի 22-ի թիվ 999/2001 կանոնակարգի (ԵՀ) IX հավելվածի F2 գլխում, եւ ոչ էլ հատուկ

ռիսկայնության նյութերից, ինչպես սահմանված է այդ կանոնակարգի V հավելվածում, արտադրվել է 2001 թվականի մարտի 31-ից հետո, կամ մեխանիկական եղանակով ոսկրահանված մսից, որն ստացվել է խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների կամ այծերի գլխի կամ ողնաշարի ոսկորներից եւ արտադրվել է 2001 թվականի մարտի 31-ից հետո: ք) 2001 թվականի մարտի 31-ից հետո այն կենդանիները, որոնցից ստացվել է կենդանական ծագում ունեցող ենթամթերքը, սպանդի չեն ենթարկվել ներգանգային խոռոչ գազ ներարկելու միջոցով շնչացվելուց հետո կամ չեն մորթվել նույն մեթոդով կամ սպանդի ենթարկվել կենտրոնական նյարդային հյուսվածքը բթացնելուց հետո՝ երկար ցուպիկաձեւ գործիքով պատռվածք կատարելով եւ գլխուղեղի խոռոչ ներթափանցելով:

1) Աղացած միսը եւ մսային կիսապատրաստվածքներ շուկայահանելու եւ արտադրելու պահանջներ սահմանող՝ Խորհրդի 1994 թվականի դեկտեմբերի 14-ի 94/65/ԵՀ հրահանգ (ՊՏ L 368, 31.12.1994թ., էջ 10)

2) Խորհրդի «Մսամթերքի միջհամայնքային առետրի վրա ազդող՝ կենդանիների առողջական խնդիրների մասին» 1976 թվականի դեկտեմբերի 21-ի 77/99/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 26 31.01.1977թ. էջ 85). Վերջին անգամ թիվ 97/76/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 10, 16.01.1998թ., էջ 25):

31.05.2001թ., EN Եվրոպական միության պաշտոնական տեղեկագիր L 147/39

բ) «Կենդանական ծագում ունեցող արտադրանք»-ի ցանկացած հղում նշանակում է այս սույն կետում թվարկված արտադրանքը եւ չի վերաբերում կենդանական ծագում ունեցող այլ ապրանքների կամ կենդանական ծագում ունեցող նման ապրանքներից ստացված արտադրանք:

6. 5-րդ կետը գործում է միայն այն երրորդ երկրներից ներկրումների մասով՝

ա) որոնք Հանձնաժողովին չեն ներկայացրել այդ դրույթներից ազատվելու իրենց պահանջին օժանդակ փաստաթղթեր.

բ) որոնք ներկայացրել են նման փաստաթղթեր, որոնցով ցույց է տրվում, որ ռիսկերի գնահատման արդյունքը, որով պայմանավորված են բոլոր պոտենցիալ ռիսկային գործոնները, այնուամենայնիվ, բավարար չեն:

7. Անդամ պետություններն իրականացնում են պարբերական պաշտոնական զննումներ՝ ստուգելու համար սույն Հավելվածի ճիշտ կիրառությունը եւ ապահովում են, որ ընդունվեն միջոցներ՝ խուսափելու համար ախտահարումից, մասնավորապես, անդամ պետությունների

կողմից 90/667/ԵՏՀ հրահանգի 7-րդ հոդվածի համաձայն հաստատված սպանդանոցներում, մսի կտրատման գործարաններում, կենդանական թափոնների վերամշակման գործարաններում, բարձր ռիսկայնության վերամշակման գործարաններում կամ տարածքներում, սպառման կետերում, աղբանոցներում եւ պահեստավորման ու այրման այլ հաստատություններում: Անդամ պետությունները, մասնավորապես, ստեղծում են մի համակարգ, որով ապահովվում եւ ստուգվում է, որ

ա) 1(2) հոդվածում նշված ապրանքների արտադրության մեջ օգտագործվող հատուկ ռիսկայնության նյութերն օգտագործվեն բացառապես արտոնված նպատակներով.

բ) հատուկ ռիսկայնության նյութերը, հատկապես եթե դրանց հեռացումը կատարվում է սպանդանոցներից դուրս հաստատություններում կամ վայրերում, հիմնավորապես առանձնացված լինեն այլ թափոններից, որոնք նախատեսված են այրման համար, հավաքվեն առանձին եւ ոչնչացվեն 1-ին կետի եւ 8-11 կետերի համաձայն: Անդամ պետությունները կարող են թույլատրել առաքել հատուկ ռիսկայնության նյութ պարունակող անասնազուլիսները եւ մսեղիքները դեպի մեկ այլ անդամ պետություն, միայն եթե այդ անդամ պետությունը համաձայնել է ընդունել տվյալ նյութը եւ հաստատել է տեղափոխման համար կիրառելի հատուկ պայմանները:

8. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ հատուկ ռիսկայնության նյութերը հեռացվեն՝

ա) սպանդանոցներում.

բ) 90/667/ԵՏՀ հրահանգի 3-րդ եւ 7-րդ հոդվածներում նշված մսի կտրատման գործարաններում, բարձր ռիսկայնության վերամշակման գործարաններում եւ տարածքներում՝ իրավասու մարմնի կողմից նշանակված պատասխանատու անձի հսկողության տակ: Այդ հաստատություններն այդ նպատակով հաստատվում են իրավասու մարմնի կողմից:

Այնուամենայնիվ, ողնաշարը կարող է հեռացվել վաճառքի կետերում, որոնք տեղակայված են իրենց տարածքում:

Եթե հատուկ ռիսկայնության նյութը չի հեռացվել սատկած կենդանիներից, որոնք սպանդի չեն ենթարկվել մարդու կողմից սպառման նպատակով, ապա հատուկ ռիսկայնության նյութ պարունակող մարմնի մասերը կամ ամբողջ մարմինը պետք է համարվի հատուկ ռիսկայնության նյութ:

9. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ հատուկ ռիսկայնության բոլոր նյութերի վրա դրվի ներկ, եւ հարկ եղած դեպքում, համապատասխանաբար նշում կատարվի հեռացումից առաջ, որից հետո ամբողջությամբ ոչնչացվի՝

ա) առանց նախնական մշակման այրելու միջոցով. կամ

բ) պայմանով, որ ներկը կամ նշումը մնա տեսանելի նախնական վերամշակումից հետո՝

i) 92/562/ԵՏՀ որոշման հավելվածի I – IV, VI եւ VII գլուխներում նկարագրված համակարգի համաձայն՝

– այրելու միջոցով

– տիղմի հետ միաժամանակ այրելու միջոցով.

ii) առնվազն Խորհրդի՝ 1999/534/ԵՀ որոշման I հավելվածում սահմանված ստանդարտների համաձայն՝ թաղելով արտոնագրված աղբավայրերում:

10. Անդամ պետությունները կարող են շեղում կատարել 8–րդ եւ 9–րդ կետերի դրույթներից, թույլատրելով այրել կամ թաղել հատուկ ռիսկայնության նյութերը կամ ամբողջական մարմիններն առանց նախօրոք ներկով նշելու, կամ, հարկ եղած դեպքում, առանց հեռացնելու հատուկ ռիսկայնության նյութերը 90/667/ԵՏՀ հրահանգի 3(2) հոդվածում սահմանված հանգամանքներում եւ օգտագործելով մեթոդներ, որոնք կանխում են ՓՍԷ–ի փոխանցման ռիսկը եւ հաստատված եւ վավերացված են իրավասու մարմնի կողմից, մասնավորապես, երբ կենդանիները սատկում կամ նրանց մորթում են հիվանդությունը վերահսկելու միջոցների շրջանակում:

11. Անդամ պետությունները կարող են առաքել հատուկ ռիսկայնության նյութերը կամ դրանցից ստացված վերամշակում անցած նյութերը այլ անդամ պետությունների, որպեսզի վերջիններս այրեն դրանք, հարկ եղած դեպքում, Հանձնաժողովի 97/735/ԵՀ որոշման 4(2) հոդվածում սահմանված պայմանների համաձայն:

Այս կետը կարող է փոփոխվել անդամ պետության խնդրանքով՝ թույլ տալու համար առաքել հատուկ ռիսկայնության նյութ կամ դրանից ստացված վերամշակում անցած նյութ երրորդ երկրներին՝ այրելու նպատակով, եթե նման արտահանում կատարելու պայմաններն ընդունված են:

L 147/40 EN Եվրոպական միության պաշտոնական տեղեկագիր 31.05.2001թ.

Բ. Վիճակագրական հարցումների վերաբերյալ

22 –րդ հոդվածում նշված վիճակագրական հարցումը պետք է ներառի III հավելվածի Ա գլխի I բաժնի 1.1 եւ 1.2 կետերում նշված բոլոր կենդանիներին:

Մեկ տարի ժամկետով կիրառելի այս դրույթը կարող է վերանայվել առաջին վեց ամսվա ընթացքում ձեռք բերված փորձի շրջանակում: